11390

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ II

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1928

3(02)
Ք-16

25 SEP 2006
1 DEC 2009
3(02)
Ք-16

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բ. ՈԼ'ԽՈՎՈՅ

138

Հանձնարարված է Լենկոմյերիտմիության
Կենտկոմի Ագիտ-Պրոպ բաժնի կողմից

ՊՐԱԿ II

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1928

1498
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան
Публичная Библиотека

29 AUG 2013

2002 DEC 17

Ա390

Այս դասագիրքը կազմել են՝ ԲՐՈՆԻՆ, ԿԱՍԻՄԵՆԿՈ, ԿՈԼԵՍՆԻԿՈՎ, ՌԵԶՆԻԿ յեվ ԼԵՈՆՏԻԵՎ. ընդհանուր խմբագրությունը՝ Բ. ՈԼԽՈՎՈՅԻ:

Հայերեն թարգմանությունը (փոխադրությունը) հրատարակում ենք յերեք պրակով:

Դասագիրքը կազմված է համաձայն այն ծրագրի (1928—29 ուս. տար.), վոր Լենկոմյերիտմիության Կենտկոմը հաստատել է քաղդպրոցների համար:

Главлит № 98331 Зак. № 2291. Тираж 5000 экз.

Книжн. ф-ка Центральн. Изд-ва Народов СССР. Москва, Шлюзовая наб., 6.

59-92

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄ. ՆԵՊ

Վոչնչացնել մարդու ամեն տեսակի շահագործումը մարդու կողմից, կառուցել սոցիալիստական հիմունքներով նոր աշխարհ— ահա թե ինչու բանվոր դասակարգը իր ձեռքը վերցրեց իշխանությունը։

Բուրժուազիային հաղթելուց հետո,— տնտեսական կյանքը նոր, սոցիալիստական հիմունքներով վերակառուցելը պրոլետարիատի ամենամոտ ապագայի խնդիրն է կազմում։

Սակայն հոկտեմբերյան հաղթանակից հետո անհնարին եր իսկույն ձեռնամուխ լինել այդ գործին։ Թշնամուն հաղթելուց և խորհրդային իշխանությունը փրկելուց ու ամրապնդելուց հետո միայն կարելի յեր տնտեսական գործերին անցնել։ Դա 1921 թ. սկզբներին եր։ Տնտեսական դրությունը այն ժամանակ շատ ծանր եր։

Գյուղատնտեսությունը քաղաքացիական կռիվների վերջին շրջանում տալիս եր այն բոլորի կեսը, ինչ վոր արտադրում եր նա մինչև պատերազմը։

Գյուղական տնտեսությունը պատերազմի հետևանքով քայքայվել եր և, բացի այդ, «ռազմական կոմունիզմի» տարիներին գյուղացին հնարավորություն չուներ փոխանակել իր հացը, վուշը, բամբակը քաղաքային արտադրանքների հետ։

Արդյունաբերության քայքայման պատճառով գյուղում այն ժամանակ ապրանքներ շատ հազվագյուտ դեպքում եյին ճարվում։ Այն ժամանակ վողջ արդյունաբերությունը հինգ անգամ ավելի քիչ եր արտադրում, քան մինչև պատերազմը։ Մեր ձեռնարկների մեծամասնությունը կտրված եյին վառելիքի և հում նյութերի աղբյուր հանդիսացող վայրերից.— Դոնբասում, Բաքվում, Թուրքեստանում, Սիբիրում բավական յերկար ժամանակ իշխում եյին սպիտակ գվարդիականները։

Աշխատող գործարաններն առաջին հերթին ծառայում եյին կարմիր բանակին՝ տենդային արագությամբ պատրաստելով զենքեր, փամփուշտներ և բանակի համար անհրաժեշտ բոլոր պարագաները։ Մինչդեռ այդ ժամանակ գյուղացին սպասում էր ճոթեղենի, նավթի, մեխի և աղի։ Վերջապես քայքայվեցին նաև յերկաթուղիները, վորոնք պետք է փոխադրեյին մեծ քանակությամբ զորք և բեռներ՝ պատերազմի համար անհրաժեշտ։

Այս բոլորը մեր վողջ յերկաթուղային տրանսպորտի սարքավորման անպետքացման պատճառը դարձան։

Քաղաքացիական կռիվների վերջանալուց հետո ինչ ուղիով պետք էր առաջ գնալ ժողտնտեսության բարձրացման բնագավառում, և այն հաշվով, վոր վերջինիս զարգացումն ընթանար սոցիալիստական հունով։ Ամենից առաջ պարզվեց, վոր տնտեսական շինարարության խաղաղ շրջանի համար անպետք էր այն տնտեսական քաղաքականությունը, վոր հարկադրված եյինք մտցնել յերկրի ռազմական դրության հետևանքով, վորը (քաղաքականությունը) մեզ մոտ տարվում էր քաղաքացիական կռիվների ժամանակ։ Պարեն-մասնատրումը կազմում էր այդ քաղաքականության հիմքը։ Խորհրդային յերկիրը չուներ արդյունաբերական արտադրանքներ գյուղացիական հացի հետ փոխանակելու, իսկ վերջինս շատ անհրաժեշտ էր Կարմիր բանակին և քաղաքի սոված բանվորներին կերակրելու համար։ Ազատ առևտուրն արգելված էր, ավելորդ հացահատիկները գյուղացիները պետք է տային մասնատրման միջոցով։ Իսկ քաղաքի արտադրանքն էլ ամբողջությամբ անցնում էր պետության ձեռքը, և ծախսվում էր բանակի և ժողովրդի կարիքների համար։ Ապրանքները անչափ քիչ եյին, բայց այն, ինչ վոր կար, բաժանվում էր ձրի։

Փողը ռազմական կոմունիզմի շրջանում արագությամբ կորցնում էր իր արժեքը։ Դեռևս ցարական կառավարությունը բաց էր թողել մեծ քանակությամբ թղթադրամներ՝ ռազմական ծախսերը վճարելու համար, և այդ պատճառով փողը արագությամբ կորցնում էր իր արժեքը.—1917 թ. հոկտեմբերին ռուբլին արդեն տասը կոպեկից ավելի չարժեր։ Խորհրդային իշխանությունը սկսեց բաց թողնել թղթադրամներ ավելի մեծ քանակությամբ, վորոնք գնում եյին պետական ծախքերը ծածկելուն, վոր անհրաժեշտ էր հեղափոխությունն ամրապնդելու և պաշտպանելու համար։

Վողջ տնտեսությունն այն ժամանակ խիստ կենտրոնացման էր յենթարկված։ Պետականացված եյին մինչև անգամ փոքրիկ ձեռնարկները։ Այդ հիմնարկների ղեկավարությունն անխուսափելի կերպով և հսկայական չափերով ուռճացնում էր շտատները։ Այդ նշանակում է, վոր բոլոր այսպես թե այնպես կարևոր խնդիրները լուծվում եյին կենտրոնում միայն, տեղերը շատ քիչ ինքնուրույնություն ունեյին։ Պաշարված բերդի դրության պայմաններում անհրաժեշտ էր խիստ կերպով ձեռքի մեջ պահել բոլոր թելերը։ Այստեղից էլ շատ հաճախ ծնվում եյին բյուրոկրատիզմը, քաշքշուկը, ընկնում էր նախաձեռնությունը, ինքնագործնեյությունը։

Այսպես էր քաղաքացիական կռիվների շրջանում տնտեսական քաղաքականությունը։ Նա հետապնդում էր միայն մի նպատակ — պահպանել գոյությունը և հաղթել պրոլետարական դիկտատուրայի թշնամիներին ինչ գնով էլ վոր լինի։ Այդ տեսակետից նա միանգամայն նպատակահարմար էր, բայց տնտեսական տեսակետից, տնտեսության զարգացման տեսակետից նա ռացիոնալ չէր, վորովհետև հասցնում էր գյուղատնտեսության արտադրական ուժերի անկմանը, վորովհետև գյուղացին չուներ վոչ մի շահ իր տնտեսության բարձրացումից, նա հացի արտադրությունը հասցնում էր միայն իր կարիքների բավարարման քանակին։

Ռազմական կոմունիզմի ժամանակ հիմնականորեն ամրապնդվեցին պրոլետարիատի գրավումները տնտեսության ասպարեզում, ստեղծվեցին և հաստատուն դարձան պրոլետարական պետության համար այն հրամանատարական բարձունքները, վորոնք և ներկայումս, նեպի ժամանակ, հանդիսանում են սոցիալիստական կառուցման համար վորպես հենարաններ։ Բուրժուական-կալվածատիրական տնտեսական կարգերի լեռնաշղթան փշրելով, ռազմական կոմունիզմը այսպիսով վերացրեց դեպի սոցիալիզմը հաջողությամբ ընթանալու ճանապարհից հիմնական խոչընդոտները։

Սակայն միաժամանակ ռազմական կոմունիզմի շրջանում տնտեսական կյանքն ինքը չկանոնավորվեց, առաջ չանցավ.— տնտեսությունը հասավ քայքայման ամենածայր աստիճանին։ Ուստի և քաղաքացիական կռիվները հաղթանակով վերջացնելուց հետո մեր կուսակցությունը վճռեց փնտրել խաղաղ պայմաններին համապատասխան նոր ուղիներ։ «Հաղթել այդ սա-

պարփակում չեր կարելի, վորովհետև տնտեսական քայքայումն իր վատ անդրադարձումն եր գտնում բանվոր դասակարգի և գյուղացիության վրա։ Կրոնշտադտում խռովություն ծագեց, վորը պաշտպանվում եր արտասահմանյան սպիտակ գվարդիականների կողմից։ Անցավ գյուղացիական ապստամբությունների ալիքը, վորի մեջ կուլակներին հաջողվում եր ներգրավել գյուղացիության միջին խավերին։ Լենինը մատնանշում եր, վոր «քաղաքացիական կռիվների պայմաններում մենք ստիպված եյինք անցնել ռազմական ժամանակի միջոցներին։ Բայց մեծ սխալ կլիներ, յեթե մենք այս բոլորից հետևցնեյինք, վոր երբ միմիայն այդ տեսակի միջոցներն և հարաբերություններն են հնարավոր»։

1921 թվի գարնանը մեր կուսակցությունը Լենինի ղեկավարությամբ ռազմական կոմունիզմի քաղաքականությունից անցավ ուրիշ քաղաքականության, վորը համապատասխանում եր խաղաղ տնտեսական շինարարության պահանջներին։ Այդ քաղաքականությունն այն ժամանակ կոչեցին «նոր տնտեսական քաղաքականություն» (կրճատ ձևով — «նեպ»)։

«Ռազմական կոմունիզմն անհրաժեշտ եր մեզ պատերազմի և քայքայման պատճառով։ Նա չեր և չեր ել կարող լինել պրոլետարիատի տնտեսական խնդիրներին համապատասխանող քաղաքականություն, նա ժամանակավոր միջոց եր։ Պրոլետարիատի (վորն իր դիկտատուրան ե իրականացնում մանր գյուղացիական յերկրում) ճիշտ քաղաքականությունը հանդիսանում ե — հացի փոխանակությունը գյուղացիությանն անհրաժեշտ արդյունաբերական մթերքների հետ» (Լենին)։

Նեպին անցնելուց հետո մեր բոլոր թշնամիները ամեն տեղ խիստ աղմկում եյին, իբրև թե բոլշևիկները հրաժարվեցին կոմունիզմից, նահանջեցին իրենց նախկին ճանապարհից, վերադառնում են կապիտալիզմին։ Ներկայումս բոլորի համար ել պարզ ե, վոր այդ սուտ խոսքերով կարելի յե միայն հիմարներին խաբել։ Մեր թշնամիները, միջազգային բուրժուազիան և նրա արբանյակները, անդադար իրենց ատամներն են կրճտացնում Խորհրդային Միության հանդեպ։ Յեթե մենք իսկապես յետ դառնայինք դեպի կապիտալիզմ, նրանք այդ բանը չեյին անի, նրանք միմիայն կուրախանային։

Նեպի նշանակությունը չեր հասկանում նաև ոպպոզիցիան՝ կուսակցության 14-րդ համագումարում։ Նա պատկերացնում եր

նեպը վորպես նահանջ միայն։ Ինարկե, այս ճիշտ չե։ Միթե կարելի՞ յե սոցիալիստական շինարարության ճիշտ ճանապարհի վրա անցնելը նահանջ համարել։ Իսկ ներկայումս բոլորի համար ել պարզ ե, վոր նեպն ինքը դեպի սոցիալիզմ առաջ ընթանալու միակ ճիշտ ճանապարհն ե։

Նախորդ զրույցից արդեն գիտենք, վոր մեր յերկրում գոյություն ունեն տնտեսական զանազան ձևերի հինգ տեսակներ.— սոցիալիզմ, մանր ապրանքային տնտեսություն, մասնավոր կապիտալ, պետական կապիտալիզմ և յերբեմն այստեղ կամ այնտեղ իր գոյությունը պահպանող բնական տնտեսություն։

Սոցիալիզմը չի կարող մի շնչով վոչնչացնել այն բոլորն, ինչ վոր մնացել ե նախկին տնտեսական ձևից։ Յեթե մեր յերկրում մենք ունենայինք զարգացած և առաջավոր արդյունաբերություն, վորն ընդունակ լիներ միանգամից և ամբողջությամբ բավարարել գյուղացիության պահանջները թե սպառողական ապրանքների նկատմամբ և թե գյուղական տնտեսությունը մատակարարեր արտադրական միջոցներով (մեքենաներ, տրակտորներ, արհեստական պարարտացման միջոցներ), վորպեսզի դրանց ոգնությամբ կարողանայինք արագությամբ անցնել տնտեսության կոլլեկտիվացմանն, այդ դեպքում սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում շատ հեշտ բան կլիներ։ Այդ դեպքում մենք ստիպված չեյինք լինի թույլ տալ մեր տնտեսության մեջ կապիտալիստական ելեմենտների մասնակի զարգացում։ Բայց հենց ներկայումս ել մեր արդյունաբերությունը և նրա հետ կապված պետական ու կոոպերատիվ առևտուրը չեն հասել այն մակարդակին, վորպեսզի կարողանան տնտեսության կապիտալիստական ելեմենտներն ամբողջությամբ արտաքսել ասպարեզից։ Այս բանն ավելի շատ չափերով պետք ե ասել 1922 թվականի մասին, յերբ մենք անցնում եյինք նեպին, յերբ մեր խոշոր արդյունաբերությունը շնչում եր հազիվ-հազ։

Տնտեսական ձևերի բազմազանությամբ ել պայմանավորված են խորհրդային յերկրի ազգաբնակչության մեջ զանազան դասակարգերի և դասակարգային խմբավորումների գոյությունը։

Տասնյակ միլլիոնավոր մարդիկ ապրում և ապրելու համար միջոց են ստանում մինչ սոցիալիստական հիմունքներով կառուցված իրենց տնտեսությունից։ Մեր իրավակարգը հենց այս պատճառով ել կոչվում ե անցման շրջան, վորովհետև վերջինիս

մեջ տնտեսության սոցիալիստական հատվածն աստիճանաբար աճում և ծավալվում է՝ ընդգրկելով յերկրի վողջ տնտեսության ավելի ու ավելի խոշոր մասը։ Սոցիալիզմի աճումն անպայմանորեն կապված է նրա թշնամիների, կուլակի, սպեկուլյանտի, մասնավոր առևտրականի և արդյունաբերողի դեմ անխուսափելիորեն մղվող պայքարի հետ։ Բայց այդ պայքարը նեպի շրջանում մղվում է ուրիշ կերպ և զանազանվում է ռազմական կոմունիզմի շրջանում մղվող պայքարից։

Մեր տնտեսության զանազան ձևերը միմյանց հետ բաղխվում են շուկայում։ Շուկան այն տեղն է, ուր հանդիպում և կպչում են միմյանց անցման շրջանի տնտեսության բոլոր մասնիկները։ Շուկայումն է, վոր ծավալվում է պայքարը ամրապնդվող սոցիալիզմի և նրա դեռևս բազմաթիվ հակառակորդների միջև։

Կապը գյուղացիության հետ. — *Սոցիալիստականորեն վերակառուցելու խնդիրները զանազան տնտեսական ձևերի նկատմամբ խորը տարբերվում են միմյանցից։ Սոցիալիստական հատվածն անհրաժեշտ է ամեն կերպ ամրապնդել ու ծավալել։ Ամենադըժվարին խնդիրն այն է, վորպեսզի սոցիալիստորեն վերակառուցենք գյուղական մանր տնտեսությունները, միաժամանակ դուրս մղելով կապիտալիստական ձևերը։*

Մեր տնտեսության ավելի ընդհանրացած մասը, նրա սոցիալիստական հատվածը — ահա թե ում է վիճակված այդ դժվար խնդրի՝ գյուղական ծով տնտեսությունների ընդգրկման և վերակառուցման լուծումը։ Միանգամայն պարզ է, վոր այդ խնդիրը հաջողությամբ լուծելու համար խորհրդային տնտեսության սոցիալիստական հատվածը պետք է սերտ կապ ունենա գյուղական քայքայված տնտեսությունների վողջ մասսայի հետ։ Գյուղացիների մանր տնտեսությունների հետ կապ պահպանելով, վերջիններիս համախմբելով, հնարավոր է նրանց առաջ մղել։

Գյուղական չքավորության, գյուղացիության հիմնական մասսայի հետ պրոլետարիատի դաշինքի ուժեղացումը հանդիսանում է խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը։ Պարենմասնատրման վերացումը և պարենտուրքին անցնելը առաջին քայլն եր՝ դաշինքը ճիշտ հիմունքների վրա դնելու ասպարեզում։ Պարենմասնատրման վերացումից հետո գյուղացին հնարավորություն ունեցավ

իր մթերքների հետ վարվել այնպես, ինչպես ինքն է ցանկանում։ Ավելորդ մասը նա սկսեց ծախել և ստացված միջոցներն ոգտագործել իր տնտեսությունն ամրապնդելու, կյանքի պայմանները բարելավելու։ Այստեղից եվ գյուղացու մեջ հզացավ իր տնտեսությունը լայնացնելու ձգտումը։

Չի կարելի մոռանալ այն, վոր գյուղացիությունն իրենից մի միատարր մասսա չի ներկայացնում։ Գյուղացիությունը բաժանվում է զանազան խավերի։ Յեվ դաշինքի խնդրի նպատակն հենց այն է, վորպեսզի «կարողանալ միջակ գյուղացիության հետ համաձայնության գալ, մի րոպե անգամ չհրաժարվելով կուլակի դեմ մղվող պայքարից և ամուր հենվելով միայն չքավորության վրա» (Լենին)։

Զոդման ուղիները. — *Գյուղացիական տնտեսության հետ զոդումն կատարվում է առաջին հերթին առևտրի միջոցով։ Գյուղացին ծախում է իր մթերքները և ստացած փողով գնում իրեն անհրաժեշտ ապրանքները։ Դեռևս 1922 թվին Լենինը մատնանշում եր, վոր առևտուրն այն «հերթական ողակն» է, վորից անհրաժեշտ է բռնել՝ շղթան ամբողջությամբ դուրս քաշելու համար, այսինքն՝ վորպեսզի լուծել տնտեսական բոլոր հիմնական խնդիրները։ Մինչդեռ մեր յերկրի պայմաններում պետության համար առանձնակի դժվարություն է հանդիսանում առևտրական շրջանառության վրա իշխելու գործը։ Ցրված ազգաբնակչություն ունեցող հսկայական յերկրում, հաղորդակցության վատ ճանապարհներով, առևտրական շրջանառության կարգավորումը հեշտ բան չէ։ Նեպի առաջին շրջանում մասնավոր կապիտալն իր ձեռքն առավ առևտրական շրջանառության բավական խոշոր մասը։ Մանր առևտուրն՝ առավել ևս գյուղում՝ սկզբում համարյա ամբողջությամբ նրա ձեռքի մեջ եր։ Պարզ է, թե ինչպիսի մեծ վտանգ եր ներկայացնում այդ դրությունը զոդման համար։ Վերջին յերեք տարիների ընթացքում սկսվեց մասնավոր առևտրականին ուժեղ չափով արտաքսելը։ Միայն կոոպերացիան, հիմնվելով ազգաբնակչության ինքնուրույնության վրա, ոգտագործելով հենց ազգաբնակչության միջոցները, կարող է գրավել մանր առևտուրը։ Վերջին տարիների ընթացքում սպառողական կոոպերացիան աճել է ուժեղ չափերով, և ներկայումս նա հանդիսանում է զոդման գլխավոր կիրառողը առևտրի բնագավառում։*

Բայց առևտրի համար, և անցողական շրջանում տնտեսությունը ճիշտ կերպով ղեկավարելու համար անհրաժեշտ ե կայուն դրամ։ Դժվարությունն այն եր, վոր նեպի առաջին տարիների ընթացքում պետական ծախքերը, բացի թղթադրամների ուժեղ հոսանքից, ուրիշ ել վոչ մի բանով չեր կարելի ծածկել։ Սակայն նեպի ռելսերի վրա տեղի ունեցող տնտեսական վերելքի ասպարեզում առաջին հաջողությունները ստեղծեցին նախապայմաններ՝ դրամական ռեֆորմի իրագործման համար, տալով մեր պետական բյուջեյին յեկամտի այլ աղբյուրներ։ 1924 թվի գարնանը կիրառվեց դրամական ռեֆորմը։ Ավելի շուտ, 1922 թ. վերջերին, յերևան յեկավ չերվոնեցը. բայց և այնպես կայուն չերվոնեցի հետ միասին շուկայում շրջանառության մեջ եր խորհրդային ընկնող դրամանիշը, և այդ դրամանիշների հաշվին ել առաջվա նման ծածկվում եյին պետական ծախքերի վորոշ մասը։ Խորհրդային թղթադրամների վախճանն հասավ 1924 թվի գարնանը։ Թղթադրամների շրջանառությունը դադարեց։ Շրջանառության մեջ դրվեցին արծաթե, պղնձե (իսկ հետո նաև բրոնզե) մանր դրամներ, պետական գանձարկղային տոմսեր։ Ավելի խոշոր վճարումների համար մնաց նորից չերվոնեցը, վորն իր կայունությամբ վստահություն եր ձեռք բերել։

Դրամական ռեֆորմի հաջողությունը մեծ հաղթանակ եր տնտեսական ֆրոնտում։

2. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԸ՝ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Խորհրդային պայմաններում գյուղացիական մանր տնտեսության առաջ բացվում ե այնպիսի նոր ուղի, վորը չկա և չի յել կարող լինել կապիտալիզմի տիրապետության որով։ Այդ ուղին այն ե, վոր կապիտալիստական շերտավորման հարկադրված ուղին չմտնելով, խորհրդային գյուղացիությունը կարող ե անցնել դեպի նոր, սոցիալիստական ավելի բարձր տնտեսական ձևին։ Այդ նոր ուղին գյուղատնտեսության կոոպերացման և կոլեկտիվացման միջոցով բացվում ե այն պատճառով, վոր պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում սոցիալիզմը գրավում ե տնտեսական կյանքում հրամանատարական բարձունքները։

Հրամանատարական բարձունքներն անցողիկ տնտեսության մեջ. — Առաջին հերթին դա պետական իշխանությունն, ե վոր նվաճված ե պրոլետարիատի կողմից։ Կապիտալիզմի ժամանակ պետական իշխանությունը կատարում ե մի բուռն արդյունաբերող-թագավորների և բանկիրների կամքը։ Բոլորովին ուրիշ կերպ ե գործը մեզ մոտ։ Մեր պետական իշխանությունը շահագործող-ձրիակերներին հնարավորություն չի տալիս ուժեղանալու, և դրա հետ միասին, նա ամեն կերպ ամրապնդում, ուժեղացնում ե տնտեսության սոցիալիստական հատվածը։ Նա ամեն կերպ աջակցում ե գյուղական տնտեսությանը անցնելու ընկերական միության ճանապարհի վրա։

Այնուհետև, հրամանատարական հիմնական բարձունքներից մեկը հանդիսանում ե սոցիալիստական արդյունաբերությունը, վորը գտնվում ե պրոլետարական պետության ձեռքում և խոշոր ազդեցություն ե թողնում վողջ ժողտնտեսության վրա, խաղալով վերջինիս մեջ ղեկավար դեր։

Խոշոր տրանսպորտը, վորը մեծ քանակությամբ բեռներ ե տեղափոխում, կարծես թե արյունատար մի սիստեմ լինի (յերակների ցանց, վորոնց միջոցով արյունը դեպի մարմնի մասերն ե հոսում)։ Հրամանատարական այդ բարձունքն ևս մեզ մոտ սոցիալիզմին ե ծառայում։

Մեր յերկրում հողը հանդիսանում ե պետության սեփականությունը, նա պետականացված ե։ Չկա մասնավոր սեփականություն հողի նկատմամբ։ Հողը վոչ գնել կարելի յե, վոչ ել՝ ծախել։ Սրանով ևս մենք կապիտալիզմին տալիս ենք զգալի մի հարված, վորովհետև հողի գնումն ու վաճառումը հանդիսացել եր գյուղական հարուստների ամենասիրելի միջոցը՝ հարստանալու համար։ Հողի պետականացումը տնտեսության անցողիկ շրջանում—հրամանատարական բարձունքներից մեկն ե հանդիսանում։ Կապիտալիզմի պայմաններում բանկերը հավաքում են ազգաբնակչության բոլոր խավերի միջոցները։ Այդ միջոցներն ընկնում են մի բուռն կապիտալիստների ձեռքը։ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ քայլերից մեկը՝ բանկերի պետականացումն եր։ Բանկերն անցան պրոլետարական պետության ձեռքը։ Այսպիսով մեզ մոտ բոլոր բանկերը (վարկային ընկերություններն ու խնայողական դրամարկղներն ընդհանրապես) ծառայում են սոցիալիզմին։

Յեվ վերջապես հրամանատարական ամենակարևոր բարձունքներից մեկը արտաքին առևտրի մոնոպոլիան է։ Արտաքին աշխարհի հետ վողջ առևտուրը գտնվում է խորհրդային պետության ձեռքին։ Այս միջոցով միայն մենք կարող ենք մեր սոցիալիստական արդյունաբերությունը պաշտպանել կապիտալիստական յերկրների ավելի ուժեղ արդյունաբերության ճնշումից։ Չլիներ արտաքին առևտրի մոնոպոլիան, կապիտալիստները իրենց հարուստ արդյունաբերության արտադրանքներով շատ հեշտությամբ կարող եյին հարվածել մեր դեռևս յետամնաց արդյունաբերությունը։ Արտասահմանյան բուրժուազիան խիստ ատելությամբ է նայում արտաքին առևտրի նկատմամբ գոյություն ունեցող մոնոպոլիային։ Արտաքին առևտրի մոնոպոլիան փակում է կապիտալի առաջ դեպի մեր հսկայական շուկան տանող ուղին։ Այստեղից էլ—ատելությունը։ Կարո՞ղ ենք մենք արտաքին առևտրի մոնոպոլիան փոխել թեկուզ ներմուծվող ապրանքների վրա խոշոր մաքս դնելու քաղաքականությամբ։ Այս հարցին Լենինը պատասխանել է բացասականորեն, մատնանշելով, վոր «վոչ մի մաքսային քաղաքականություն իրական չի կարող լինել՝ իմպերիալիզմի եպոխայում շատ հարուստ ու աղքատ յերկրների մեջև յեղած հրեշային տարբերության շրջանում»։

Կապիտալիզմ թույլատրելը յեվ պայքար կապիտալիզմի դեմ.— «Մեր խորհրդային հանրապետության մեջ սոցիալական (այսինքըն՝ հասարակական) կառուցվածքը հիմնված է յերկու դասակարգերի — բանվորների և գյուղացիների — համագործակցության վրա. այդ բանում այժմ թույլատրվում է, վորոշ պայմաններով, նաև «նեպմաններին», այսինքն բուրժուազիային» (Լենին)։

Բուրժուազիային «վորոշ պայմաններով» թույլ տալը հանդիսանում է նեպի յուրահատկությունը։ Ռազմական կոմունիզմի ժամանակ կապիտալիստական շահ ստանալու յուրաքանչյուր փորձը հետապնդվում և պատժվում եր վորպես հակահեղափոխական գործողություն։ Այդ բանը այն ժամանակ միանգամայն անխուսափելի յեր։ Յուրաքանչյուր կապիտալիստ այն ժամանակ հանդիսանում եր խորհ. իշխանության դեմ զինված պայքար մղող մեր թշնամիների հենարանը։ Զինված պայքարի դադարից հետո, բնականաբար, մենք պետք է կապիտալիստական շահի դեմ պայքարելու ուրիշ միջոցներ կիրառեյինք։

Կապիտալիզմի մնացորդները միանգամից արմատախիլ անելն անհնարին է, քանի վոր դեռ գոյություն ունի մանր արտադրությունը։ Գյուղում, յերբ իշխում են մանր տնտեսությունները, ազատ առևտրի պայմաններում անխուսափելիորեն ծնունդ է առնում կապիտալիզմը։ Գյուղացին, հարստանալով, վարձում է աշխատողներ, շահագործում է նրանց և դառնում կուլակ։ Յերբ միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները առանձին, ցրված են առևտուր անում, հանդես է գալիս մասնավոր միջնորդը, վորը շահում է այդ գործում։ Յեվ յերբ ապրանքների սակավություն է զգացվում, մասնավոր առևտրականը շատ հաճախ կարող է մեծ շահ ստանալ։

Արդյո՞ք սարսափելի չէ մեզ համար այդ կապիտալիզմը։ Չի՞ սպառնում նա սոցիալիստական շինարարության բախտին և հաջողությանը։ Խորհ. իշխանությունը բոլոր միջոցներն ունի, վորպեսզի մասնավորին և կուլակին դնի վորոշ շրջանակների մեջ։ Նեպը թույլատրում է մասնավոր առևտուրը, և թույլատրում է վորոշ չափով կապիտալիզմ՝ սակայն այն պայմանով, վոր խորհրդային իշխանությունը՝ իր ձեռքում գտնված հրամանատարական բարձունքներին հենված՝ իրավունք է ունենում կարգավորել մասնավոր առևտուրը և արդյունաբերությունը։ Գյուղում կուլակի աճման համար վորոշ սահմաններ են գծված.— Նա չի կարող շահագործել իր բատրակներին, հող գնել չի կարող, հողն արենդով վերցնելու դեպքում էլ նա չի կարող այդ բանը հասցնել լայն չափերի։

Առևտրի բնագավառում ևս պակաս հնարավորություններ չկան՝ մասնավորի աճումը սահմանափակելու համար։ Կոոպերատիվ առևտրի ուժեղացումով — մասնավորն արտաքսվում է շուկայից։ Մեր բանկերը կարող են վարկ չտալ մասնավորին, մեր տրեստներն ու սինդիկատները նրան բաց չեն թողնում այն ապրանքները, վորոնք քիչ են և վորոնք մասնավորը սպեկուլյացիայի աղբյուր կարող է դարձնել։ Յերկաթուղագծերը չեն փոխադրում մասնավորի բեռները, յեթե այդ արգելումն անհրաժեշտ է նրա շահագործական ձգտումները սանձահարելու համար։

Արդյունաբերության ասպարեզում մասնավորին տրված են ավելի նեղ սահմաններ։ Քիչ թե շատ մեծ ձեռնարկությունը բացվել կարող է խորհ. իշխանության թույլատվությամբ միայն։ Վերջապես հարկային քաղաքականությունը ևս հանդիսանում է

մի հզոր զենք։ Պրոլետարական պետությունը հարկերի միջոցով կտրում է մասնավոր կապիտալիստական գանձման հնարավորությունները, խոշոր կապիտալին արագ ուռճանալ չի թույլատրում։

Տնտեսապես ներգործելու գլխավոր լծակները գտնվում են մեր ձեռքին։ Այդ լծակներին տիրելու փաստը ներքին փոխհարաբերությունների տեսակետից մեզ անպարտելի յե դարձնում, յեթե, իհարկե, մենք խոշոր սխալներ չկատարենք։

Կուլակն ու մասնավորը, նեպմանն ու սպեկուլյանտը մեզ համար վտանգավոր ուժ են դառնում այն ժամանակ միայն, յերբ նրանք կարողանում են օգտվել մեր սխալներից։ Յեվ ամենամեծ սխալ կլիներ մոռանալ անհրաժեշտ պայքար մղել կապիտալիստական խմբերի դեմ՝ նեպի հիման վրա, և այն միջոցներով, վոր նեպի շրջանում մենք ունենք մեր ձեռքին։

«Նեպը ներկայումս վոչ վոքի այնքան ձեռնտու չե, վորքան խորհրդային իշխանությանը։ Բայց կան մարդիկ, վորոնք կարծում են թե նեպը վոչ թե կապիտալիստական էլեմենտների, սրանց թվում և կուլակության դեմ մղվող պայքար է՝ դրանց վերացնելու համար, այլ կուլակության և ուրիշ կապիտալիստական էլեմենտների դեմ պայքարի դադարումն է։ Կարիք չկա ասելու, վոր այդ մարդիկ վոչ մի ընդհանուր բան չունեն լենինիզմի հետ («Ստալին»)։

Մասնավոր կապիտալը ձգտում է մտնել կապվել գյուղացիության հետ։ Կուլակն ու առևտրականը օգտագործում են կոոպերացիայի յուրաքանչյուր վրիպումները, տնտեսական օրգանների յուրաքանչյուր թերությունները։ Մեր և մասնավորի միջև գյուղացիության համար մղվում է կատաղի և համառ պայքար։ Յեթե կարողանանք գյուղացիական լայն խավերին գրավել կոոպերացիայի մեջ, յեթե կարողանանք ապրանք արտադրել և վաճառել այդ ապրանքը մասնավորից լավ և էժան — մեր հաղթանակն ապահոված կլինի։

Սոցիալիզմը դասակարգերի վոչնչացում է նշանակում։ Ընթանալով դեպի սոցիալիզմ, մենք ընթանում ենք դեպի այն հասարակությունը, վորտեղ չեն լինի դասակարգային տարբերություններ, դասակարգային հակադրություններ և դասակարգային պայքար։ Բայց անցողիկ տնտեսության մեջ մենք դեռևս պատահում ենք զանազան դասակարգերի. պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ պրոլետարիատի դասակարգային պայքարը շատ

բանով է տարբերվում կապիտալիզմի շրջանում մղվող դասակարգային պայքարից։ Այն չափով, ինչ չափով մոտենում ենք սոցիալիզմին, ինչ չափով մեր տնտեսության սոցիալիստական հատվածը աճում է — պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության միջև յեղած դասակարգային հակասություններն ու տարբերությունները նվազում են։ Բայց բանվոր դասակարգի և կապիտալիստական էլեմենտների միջև (վորոնց հանդեպ բանվոր դասակարգի քաղաքականությունը բոլորովին տարբեր է ուրիշի աշխատանքը չշահագործող մանր ապրանքարդյունաբերողների նկատմամբ տարվող քաղաքականությունից) հակասություններն ավելի սրվում են։

Մանր ապրանքարտադրողներին բանվոր դասակարգը վերափոխում է, վերադաստիարակում, իսկ կապիտալիստ-շահագործողներին, նեպմաններին, կուլակներին՝ ճնշում։

Կարելի՞ յե մեր յերկրում սոցիալիզմ լիովին կառուցել. — Սոցիալիստական հեղափոխությունը ամբողջ աշխարհում մի ժամվա կամ մի օրվա ընթացքում չի հաղթանակում։ Մեր յերկրում սոցիալիզմ է կառուցվում, իսկ մեզ շրջապատում է կապիտալիստական պետությունների հաստ օղակը։ Իհարկե, անհամեմատ հեշտ կլիներ սոցիալիզմը լիովին կառուցել, յեթե պրոլետարիատն արդեն հաղթանակած լիներ ամբողջ աշխարհում։ Այնուամենայնիվ Լենինը գտնում եր վոր մեր յերկրում մենք ունենք «բոլոր անհրաժեշտը, և բավական չափով՝ լիակատար սոցիալիստական հասարակություն լիովին կառուցելու համար»։

Տրոցկիստական օպպոզիցիան ժխտում եր սոցիալիզմի լիովին կառուցման հնարավորությունը ԽՍՀՄ-յան մեջ։ Մեր արդյունաբերությունը յետամնաց է, առանց առաջավոր յերկրների օժանդակության մենք հնարավորություն չունենք կանգնելու զարգացման լայն ուղիների վրա, — ասում եյին տրոցկիստները։ Մենք միջոցներ և ուժ չունենք, վորպեսզի գյուղացիական միլիոնավոր տնտեսությունները կարողանանք վերափոխել, — ասում եյին նրանք։

Ժխտել ԽՍՀՄ-յան մեջ սոցիալիզմի լիովին կառուցման հնարավորությունը—նշանակում է ժխտել Հոկտեմբերյան հեղափոխության սոցիալիստական բնույթը։ Մեր յետամնացությունը ստեղծում է սոցիալիստական շինարարության գործի համար նոր դժվա-

րությունններ, բայց այդ դժվարությունները կարելի յե հաղթահարել։ Մեր Միության մեջ հարստությունններն անսպառ յեն։ Նրանք դեռևս սպասում են իրենց զարթոնքին։ Բանվոր դասակարգը հաստատուն ե դարձրել իր դիկտատուրան։ Ամրապնդելով կապը գյուղացիության հետ, նա գյուղը մղում ե դեպի սոցիալիզմ, դեպի կուլտուրա։ Պրոլետարական պետության ձեռքում գտնված բոլոր հրամանատարական բարձունքներն ամրանում են։ Տնտեսության սոցիալիստական հատվածն աճում ե արագությամբ։ Նա իր յետևն ե թողնում կուլակին, մասնավորին և նեպմանին։ Նրա զարգացման տեմպն արագ ե կապիտալիստական տնտեսության զարգացման տեմպից։ Ուստի և կուսակցությունը գտնում ե, վոր յերկրի ներսում չկան այնպիսի անհաղթելի դըժվարությունններ, վորոնք հնարավորություն չտան սոցիալիստական հասարակակարգի լիովին կառուցմանը։

Խանգարել մեզ կարող ե միայն իմպերիալիստների հարձակումը, վորոնք կառուցվող սոցիալիզմի յերկրի դեմ իրենց ժանիքներն են սրում։ Այստեղ մենք լիակատար ապահովություն չենք կարող ունենալ, քանի վոր դեռ չի հաղթել համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը։ Այդ պատճառով ել Լենինն ասել ե, վոր սոցիալիզմի լ ի ա կ ա տ ա ր հաղթանակն տեղի կունենա համաշխարհային պրոլետարական հեղափոխությունից հետո, վորովհետև կապիտալիզմի առաջավոր յերկրներում պրոլետարիատի հաղթությունից հետո միայն վերջնականապես չքանում ե այն վտանգը, վոր կապիտալիզմը կարող ե վերականգնել հին կարգերը կառուցվող սոցիալիզմի յերկրում։

Նեպի հիման վրա և նեպի ոգնությամբ մենք դեպի սոցիալիզմ ենք գնում յերկու ճանապարհով։ Առաջինը, դա խորհրդային տնտեսության սոցիալիստական հատվածի աճման և զարգացման ուղին ե։ Յերկրորդը, մանր գյուղացիական տնտեսությունների վերակառուցումն ե սոցիալիստական հիմունքներով։ Այս յերկու ուղիների միջև և վոչ մի հակասություն չկա, այդ յերկու ուղիները լրացնում են միմյանց, այդ յերկու խնդիրները սերտ կերպով կապված են միմյանց հետ։ Յեվ այդ խնդիրների լուծումը ապահովում ե՝ մեր տնտեսության մեջ դեռևս գոյություն ունեցող կապիտալիստական ելեմենտներին վերջնականապես ճնշելն ու արտաքսելը։

Մեքենայական խոշոր արդյունաբերությունը սոցիալիզմի հիմքն *է. — Միայն խոշոր արդյունաբերությունը կարող ե ծառայել վորպես հիմք սոցիալիզմի համար։ Կապիտալիզմը նախապատրաստում ե սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը նրանով, վոր արագությամբ ստեղծում և զարգացնում ե խոշոր արդյունաբերությունը։ Մեծ քանակությամբ մեքենաներ ունեցող խոշոր արդյունաբերությունն ե միայն անսահման ծավալում մարդու իշխանությունը բնության վրա, թեթևացնում մարդու աշխատանքը, ավելացնում հասարակության հարստությունը։ Միաժամանակ, միայն խոշոր մեքենայական արդյունաբերությունն ե ընդունակ վերափոխել գյուղական տնտեսությունը, մանր և սակավարդյունաբերողից դարձնել խոշոր ու ընդհանրացած տնտեսություն։*

Հենց այս պատճառով ել Լենինը մատնանշել ե մի քանի անգամ, վոր «սոցիալիզմի միակ և նյութական հիմքը կարող ե հանդիսանալ խոշոր մեքենայական արդյունաբերությունը, վորն ընդունակ ե վերակառուցել (այսինքն վերափոխել) և հողագործությունը»։

Չքավոր և յետամնաց յերկրում մենք վերցրինք իշխանությունը։ Ազգաբնակչության թվի հետ համեմատած, Ռուսաստանում արտադրվում եր $4^1/_2$ անգամ ավելի քիչ արժեքներ՝ քան Անգլիայում, $3^1/_2$ անգամ քիչ՝ քան Ֆրանսիայում և 3 անգամ քիչ՝ քան Գերմանիայում։ Այդ յետամնացության գլխավոր պատճառը արդյունաբերության թույլ զարգացած լինելն եր։ Ազգաբնակչության մեծամասնությունը կերակրվում եր և մինչև այժմ ել կերակրվում ե գյուղատնտեսությունից ստացվածով։ Մեր յերկիրը գերազանցապես հողագործական ե։ Յեվ հետո, արդյունաբերությունն ել Ռուսաստանում յետամնաց եր, շատ ապրանքներ մեզ մոտ չեյին արտադրվում, — ավելի ձեռնտու յեր դրանք մուծել արտասահմանից։ Մինչև պատերազմը ներմուծվում եր՝ հանքերին, արդյունաբերությանը և այլ արդյունաբերական ճյուղերին անհրաժեշտ մեքենաների կեսից ավելին։ Իվերջո, մեր ձեռքն անցավ յետամնաց մի արդյունաբերություն։

Արտադրությունը բարելավող, ապրանքներն եժանացնող, աշխատանքը թեթևացնող բոլոր գյուտերն Ռուսաստանում ոգտագործվում եյին շատ ավելի ուշ, քան արտասահմանում։

Մեզ անհրաժեշտ ե վերջ տալ տնտեսության յետամնացությանը և ապահովել, վոր Խորհրդային Միությունը ավելի արա-

գությամբ զարգանա։ Խնդրի իմաստը հիմնականում կայանում է այն բանում, վորպեսզի Խորհրդային Միության մեջ կարողանանք կանոնավորել և զարգացնել արտադրության միջոցների արտադրությունը, վորոնք անհրաժեշտ են մեր արդյունաբերության և գյուղական տնտեսության հետագա զարգացման և տեխնիկական վերակառուցման համար, և վորոնք մենք առայժմ մեծ մասամբ ներմուծում ենք արտասահմանից։

Ամեն տեսակի գործիքների, ստանոկների, մեքենաների և առարկաների արդյունաբերությունը, ահա թե ինչն է իվերջո ապահովում մեր անկախությունը կապիտալիստական աշխարհից և բաց անում յերկրի վողջ տնտեսության առաջ հետագա զարգացման համար լայնածավալ հնարավորություններ։

Ստանոկներ և մեքենաներ պատրաստելով, մենք կարող ենք մեր արդյունաբերությունը զարգացնել մեծ թափով։

Գյուղատնտեսությունը սարքավորելու համար գործիքներ պատրաստելով, մենք կկարողանանք վերակառուցել նրան նոր հիմունքներով։

Ելեկտրիֆիկացիա. — *Արդյունաբերության հիմքը կազմում է այն եներգիան (ուժը), վորը նրան դնում է շարժման մեջ։ Վաղուց են անցել այն ժամանակները, յերբ մարդը, բացի իր սեփական մկանների ուժից և ընտանի կենդանիների աշխատանքից, ուրիշ վոչնչի հետ ծանոթ չեր։ Կապիտալիզմն իր հետ բերեց շոգու ուժեղ շարժման ուժը, բայց ավելի ուժգին եներգիա և ավելի օգուտ տալիս է ելեքտրական ուժը։ Ելեքտրականությունն անչափ լայնացնում է մարդու՝ բնության վրա ունեցած իշխանության սահմանները։*

Ելեքտրական եներգիան կարելի յե օգտագործել արտադրության զանազան ճյուղերում և զանազան նպատակների համար։ Ելեքտրականության մեծ հարմարությունն այն է, վոր ելեքտրական եներգիա կարելի յե ստանալ ամենաբազմազան միջոցներով — ածուխի այրումից կամ գետի հոսանքի ուժի օգտագործումից, տորֆի այրումից և կամ մշակված գազերի օգտագործումից։ Լարերի միջոցով ելեքտրական եներգիան կարելի է հաղորդել խոշոր տարածություններ։ Ելեքտրականությունն ունի հսկայական առավելություններ։ Բուրժուական յերկրներում, վորտեղ գոյություն ունի կապիտալիստների և կալվածատերերի մասնավոր սեփականությունը գործարանի, հողի, գետերի և լճերի նկատմամբ, ելեքտրականության բազմակողմանի օգտագործման համար բազմաթիվ և խոշոր խոչընդոտներ են առաջանում։ Սակայն կապիտալի իշխանության տապալումից հետո ելեքտրականության առաջ անվերջ հնարավորություններ են բացվում։

Նորագույն տեխնիկայի մյուս նվաճումների հետ միասին, ելեքտրականության օգտագործումը բաց է անում տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար ամենալայն հեռանկարներ։

Մեծ քանակությամբ ելեքտրական եներգիա արտադրելը, արդյունաբերության, տրանսպորտի և մասամբ ել գյուղատնտեսության մեջ ելեքտրական եներգիա կիրառելը (օգտագործելը), ելեքտրական եներգիայի օգնությամբ արդյունաբերության զանազան նոր տեսակների ստեղծումը, — այս բոլորը մենք կոչում ենք ելեքտրիֆիկացիա։ Խորհրդային յերկրի ինդուստրացման ընդհանուր կուրսի մեջ ելեքտրիֆիկացիայի գործին պատվավոր տեղերից մեկն է տրված։

«Կոմունիզմը — դա խորհրդային իշխանությունն է՝ պլյուս ելեքտրիֆիկացիան», — ասել է Լենինը։ Դեռևս 8 տարի առաջ, քաղաքացիական կռիվների և քայքայվածության ժամանակ, 1920 թվի քաղցի օրերին, Լենինի ղեկավարությամբ ընդունվեց մեր յերկրի ելեքտրիֆիկացիայի պլանը, վորը մշակվել եր լավագույն գիտնականների և մասնագետների կողմից (Գոելրոյի պլանը)։ Նախագծված եր մի շարք խոշոր ելեքտրոկայանների կառուցումը առաջիկա 10 — 15 տարիների ընթացքում։ Արդեն կառուցվել է Վոլխովի հսկայական ելեքտրոկայանը, վորը Լենինգրադի արդյունաբերությանը տալիս է վոլխովյան ջրերի եժանագին ուժը։ Մոսկվայի մոտ կառուցվել են Շատուրի և Կաշիրի կայանները, վորոնք օգտագործվում են տեղական ցածր վորակի վառելիքի միջոցով։ Այդ վառելիքը վորևե տեղ արտահանելը վոչ մի օգուտ չունի, վորովհետև կշռում է ծանր, իսկ տաքություն շատ քիչ է տալիս։ Սկսվել է մի հսկայական կայանի կառուցումը Դնեպրի վրա (Դնեպրոստրոյը)։ «Սև վոսկու» աղբյուրների մոտ — Դոնբասում — արդեն վերջանում է Շտերովկայանի կառուցումը, և այլն։

Արդեն 1925 թվին մեր ելեքտրական կայաններն ավելի մեծ ուժ ունեյին, քան նախապատերազմյան շրջանում։ Իսկ

հինգ տարուց հետո, 1931 թ., էլեկտրականությամբ մենք լինելու յենք համարյա թե 5 անգամ ավելի հարուստ՝ քան 1913 թ.. բացի այդ՝ աճում են այնպիսի կայաններ, վորոնք ավելի ուժեղ, ավելի մեծ, կատարելագործված և ձեռնտու յեն։

Ածուխ, նավթ, յերկաթ և մետաղներ. — Արդյունաբերության համար էլեկտրական հիմք ստեղծելը—մեծ բան է, բայց դա դեռ ամեն ինչ չէ։ Գործարանների, ֆաբրիկների և էլեկտրական կայանների համար անհրաժեշտ են մեքենաներ։ Խոշոր գյուղական տնտեսության մեջ էլ առանց մեքենայի բան դուրս չի գալու։ Մեքենաներ արտադրելու և յերկաթուղիներ կառուցելու համար անհրաժեշտ է մետաղների մեծ քանակություն։ Վերջապես՝ մետաղի արտադրության, մեքենա պատրաստելու, մի շարք էլեկտրոկայաններում, գործարաններում, ֆաբրիկներում և մեծ տներում վառելու համար անհրաժեշտ են նավթն ու քարածուխը։

Նավթի, քարածուխի և մետաղների արտադրությունը, հանքի հալեցումը, ռելսերի ձուլումը, խոշոր մեքենաների պատրաստումը — այս բոլորը կոչվում է ծանր արդյունաբերություն։ Այս անունը տրվում է թեթև արդյունաբերությունից (վորտեղ պատրաստվում են գլխավորապես այնպիսի առարկաներ, վորոնք անմիջապես անցնում են մարդկանց՝ սպառման համար, որինակ — չիթը, ամանները, ծխախոտը, կոշիկները և այլն) զանազանելու համար։

Ծանր արդյունաբերության զարգացումը մեր ինդուստրացման գլխավոր և մարտական խնդիրներից մեկն է և դըժվարին խնդիր է։ Մետալուրգիական գործարան կառուցելն այն չէ, ինչ վոր յերշիկի (կոլբասի) գործարանի կառուցումը։ Շատ միջոցներ են ծախսվելու կառուցման, կանոնավորման և մեքենաների համար։ Յեվ, վերջապես, դա արագ կառուցվող գործ չէ։

Պակաս նշանակություն չունի մեր յերկրում մեքենաներ կառուցելու գործը։ Քանի դեռ այդ բանը մեզ չի հաջողվել, մենք կախումն կունենանք կապիտալիստական յերկրներից։ Ներկա խաղաղ պայմանները, վորոնց ժամանակն, ինչպես յերևում է, աստիճանաբար կրճատվում է, անհրաժեշտ է ոգտագործել, վորպեսզի կարողանանք ամրապնդել խորհրդային յերկրի ինքնուրույնությունն ու հզորությունը։ Արտաքին առևտրից (կապիտալիստական աշխարհի հետ) մենք չենք հրաժարվում, ընդհակառակը, այդ

առևտուրը հնարավորության սահմաններում պետք է ծավալվի և լայնանա։ Սակայն այդ կապերը մենք պետք է ոգտագործենք խելացի կերպով։ Մեր արտաքին առևտուրն էլ պետք է ծառայի ինդուստրացման նպատակներին։ Շատ կարևոր նշանակություն է ստանում այնպիսի մեքենաների ներմուծումը, վորոնց ոգնությամբ մենք ինքներս կկարողանանք մեքենաներ արտադրել և այդպիսով ազատագրվել արտասահմանյան կապիտալիստական պետություններից ունեցած կախումից։

Այսպիսով յերկրի ինդուստրացման ուղին կապված է առաջին հերթին մեր ծանր արդյունաբերության և մեքենաների կառուցման գործի զարգացման հետ։ Այդ խնդրի լուծումը պահանջում է մեծ ջանքեր և յերբեմն վոչ չնչին զոհողություններ. սակայն այդ խնդրի իրագործումն է միայն, վոր ապահովելու յէ վողջ ժողովրդական տնտեսության բազմակողմանի ինդուստրացումը, վոր փոխելու յէ վողջ յերկրի տեսքը, տալով աշխատանք միլիոնավոր աշխատող ձեռներին, հեղաշրջելով գյուղացիական լայն խավերի կյանքն ու կենցաղը, ապահովելով սոցիալիզմի վերջնական հաղթանակը։

3. ԳՅՈՒՂԸ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ

Յերկրի ինդուստրացումը և գյուղատնտեսության վերափոխումը. — Վորպեսզի գյուղական տնտեսությունը զարգանա, անհրաժեշտ են մեծ քանակությամբ գյուղատնտեսական մեքենաներ — գութաններ, տրակտորներ, կալսող-ցանող և հավաքող մեքենաներ և այլն։ Այս բոլորը միայն արդյունաբերությունն է տալիս։ Արդյունաբերությունը քանի ավելի զարգացած լինի, այնքան մեծ քանակությամբ լավ վորակի մեքենաներ (և էժան գնով) կարող է ստանալ մեր գյուղական տնտեսությունը։

Արհեստական պարարտացումները զգալի կերպով ավելացնում են բերքի քանակը։ Այդ էլ կատարվում է արդյունաբերության ոգնությամբ։

Յերկրի ինդուստրացման շնորհիվ պետք է վերափոխվի գյուղատնտեսության վերակառուցումը։ Գյուղի յետամնացության վերացումը, մեքենաների ներմուծումը, բերրիության բարձրացումը, տեխնիկական կուլտուրաների ծավալումը (այսինքն արդյունաբերությանն անհրաժեշտ հում նյութերի մշակումը)—այս

ամենը բոլորովին փոխում են գյուղի տեսքը։ Կապիտալիզմը փորում և խորացնում է գյուղի ու քաղաքի միջև յեղած անդունդը։ Սոցիալիստական ինդուստրացումը վերացնում է այդ անդունդը։ Սոցիալիզմի ժամանակ տարբերություն չի լինելու շարունակ զարգացող քաղաքի և յետամնաց, մթության մեջ ապրող գյուղի միջև։ Քանի առաջ ենք գնում ինդուստրացման ուղիով, այնքան ավելի պետք է վերանա այդ հակասությունը։

Յերկրագործությունը արմատապես վերափոխելու համար պահանջվում է անցնել խոշոր տնտեսության։ Մեր յերկրում կան 24 միլիոնից ավելի առանձին-առանձին, միջոցներով այնքան էլ ոչ հարուստ գյուղացիական տնտեսություններ։ Նման ցրվածության պայմաններում շատ դժվարությամբ է ընթանում առաջխաղացումը։ Բոլորին հայտնի յե՝ փոքրի հետ համեմատած՝ մեծ տնտեսության առավելությունը. այդ առավելությունները գոյություն ունեն գյուղական տնտեսության մեջ այնպես, ինչպես և արդյունաբերության մեջ։

Պատմությունը մինչև այժմ գիտե խոշոր հողագործության միայն մի ձև, դա—խոշոր կապիտալիստական տնտեսությունն է, վորն աշխատում է վարձու բանվորների — բատրակների—օգնությամբ։ Մենք պետք է ուրիշ հիմունքներով խոշոր տնտեսություններ կազմենք։ Կոոպերացման հիմունքներով՝ գյուղական տնտեսություններից ընկերություններ, միություններ կազմել, պետության օժանդակությամբ կոլեկտիվ տնտեսություններ ստեղծել, — այսպիսին է այդ ուղին։

Մանր յերկրագործության վերակառուցման հիմքը աճում է ինդուստրացման աճման հետ միասին։ Վերջինիս հետ անբաժան կերպով կապված է գյուղական տնտեսությունների կոոպերացման և կոլեկտիվացման խնդիրը։

Կապիտալիզմի պայմաններում չքավոր և միջակ տնտեսությունների հիմնական մասսան յենթակա յեր աղքատության և քայքայման։ Ծառայել կուլակային տնտեսությունների համար վորպես պարարտանյութ — այսպիսին եր նրանց վիճակը։ Պրոլետարական հեղափոխությունն ուրիշ ճանապարհ է բաց անում. — միանալով կոլտնտեսությունների մեջ, չքավորներն ու միջակները կարող են ազատվել աղքատությունից, բռնել իրենց դժվարին կենցաղի և աշխատանքի հիմնովին վերափոխման ուղին։ Կոլեկտիվ խոշոր տնտեսությունների աճումը հարվածում է ագահ

կուլակին։ Էլ վոչ վոք չի գնում վարձվելու հարուստի մոտ, էլ ում կարող է թալանել ագահը, յերբ չքավոր և միջակ գյուղացին բռնել են արդեն ընդհանրացած տնտեսության ուղին։ Իսկ արդյունաբերության աճումը, տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը և այլն հանդիսանում են մի հզոր խթան՝ գյուղական վողորմելի տնտեսությունները կոլեկտիվ տնտեսությունների մեջ ընդգրկելու համար։

4. ԽՍՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Տնտեսությունը պետք է վարել որոշ պլանով. — Սոցիալիզմի օրոք վողջ տնտեսությունը կընթանա նախորոք ծրագրված պլանի համաձայն։ Պարզ է թե ինչ խոշոր առավելություն ունի դա։ Այլևս չի լինի այն ավելորդ միջոցների և աշխատանքի վատնումը, վոր անխուսափելի յե կապիտալիզմի ժամանակ։ Չի լինի մրցողների պայքարը և հսկայական հարստություն կլանող արտադրության անարխիան։

Այդ առավելություններն արդեն մեծ չափով գոյություն ունեն խորհրդային անցողիկ տնտեսության մեջ։ Յերկրի տընտեսության խոշոր մասը պրոլետարական պետությունը հաստատուն կերպով պահում է իր ձեռքի մեջ։ Այդ տնտեսությունն ամբողջությամբ տարվում է ըստ պլանի։ Պլանը ցույց է տալիս, թե ինչքան անհրաժեշտ ապրանքներ պետք է պատրաստվեն պետական ձեռնարկությունների մեջ, ինչպիսի միջոցներ պետք է ծախսվեն նոր գործարաններ և ֆաբրիկներ կառուցելու ուղղությամբ, հների վերասարքավորման համար և այլն։ Բայց արդյունաբերական ապրանքներ պատրաստելու համար անհրաժեշտ է հում նյութ, իսկ հում նյութերի մեծ մասը ստացվում է գյուղատնտեսությունից։ Չի կարելի արդյունաբերության պլան կազմել առանց իմանալու՝ թե ինչքան հում նյութ կարող է տալ գյուղացին։ Նոր գործարանների կառուցման համար անհրաժեշտ են մեքենաներ, վորոնք հաճախ ներմուծվում են արտասահմանից։ Մեքենան ներմուծելու համար վորևե բան պետք է արտահանել։ Արտահանվող ապրանքների թվումն են և գյուղատնտեսական մթերքները — յուղը, կանեփը, հացահատիկը և այլն։

Այստեղից էլ պարզվում է, վոր պլանը չի կարող սահմանափակվել արդյունաբերության շրջանակներով միայն։ Արդյունա-

բերության պլանը հավասար կլինի ավազի վրա կառուցված շենքի, յեթե ինկատի չի առնվում տնտեսության մյուս բնագավառները։ Պլանը պետք է ընդգրկի յերկրի ամբողջ տնտեսական կյանքը։ Սոցիալիզմի ժամանակ նման ծրագիր կազմելն ավելի հեշտ է, քան մեր պայմաններում։ Այնտեղ վողջ տնտեսությունը հասարակական է, մասնավոր ինքնուրույն տնտեսություն չի լինի, չի լինի դասակարգային պայքար, վորն այսպես թե այնպես չի կարելի յենթարկել լրիվ պլանայնության։ Մեր անցողիկ տնտեսության մեջ պատկերը դեռևս այն չէ։ Պետական տնտեսության, տրանսպորտի, առևտրի կողքին գոյություն ունեն 24 միլիոնից ավելի գյուղական ինքնուրույն տնտեսություններ։ Յուրաքանչյուր գյուղացի իր տնտեսությունը վարում է քեֆն ուզածին պես։ Ի՞նչպես իմանալ՝ թե նա ինչքան խոզեր կամ վոչխարներ է ուզում աճեցնել։ Սակայն այստեղ էլ միջոց կա գյուղական տնտեսության վրա ներգործելու։ Գյուղացին իսկույն արձագանքում է գյուղատնտեսական մթերքների գների փոփոխությանը։ Յեթե յուղի գինը թանգանում է, իսկույն Սիբիրի գյուղացիները ավելի մեծ քանակությամբ են յուղ շուկա դուրս բերում։ Յեթե Թուրքեստանի բամբակարույծների մոտ տանել ցորեն և վաճառել եժան գնով,— տեղական գյուղացին իսկույն ցորենից կանցնի բամբակի ցանքսին։ Բամբակը նրա համար ավելի ձեռնտու յե, քան ցորենը։

Նշանակում է պետությունն իր ձեռքում ունի մի հզոր գործիք, վորպեսզի ներգործի ցրված գյուղական տնտեսության վրա։ Գյուղական տնտեսության ներկա դրությունը լավ ուսումնասիրելով և հաշվի առնելով այդ գործիքի ներգործությունը, կարելի յե վողջ տնտեսական պլանի մեջ մտցնել նաև ցրված գյուղացիների արտադրությունը։ Ճիշտ է, այստեղ լինում են յերբեմն անակնկալ դեպքեր։ Կյանքը յերբեմն այնպիսի նորություններ է բերում, վորպիսին պլանը չի նախատեսել և չեր էլ կարող նախատեսել. այդ պատճառով էլ չպետք է գերագնահատել մեր հնարավորությունները պլանայնության գործում։ Չպետք է կարծել, վոր պլանով կարելի յե ամեն բան յենթադրել և նախատեսել։ Նույնպես չի կարելի կարծել, վոր կարելի յե այնպես անել, թե ամեն բան դուրս կգա ըստ պլանի։ Պարզ է, վոր լավ կամ վատ բերքը պլանի մեջ չի կարող մտնել։ Իսկ բերքի նշանակությունը շատ մեծ է տնտեսական բոլոր գործերի սա-

պարկզում։ Չպետք է նաև թերագնահատել մեր պլանային հնարավորությունները։ Չպետք է հրաժարվել մեր վողջ տնտեսությունը պլանի մեջ առնելուց, և այդ բանը մեզ հաջողվում է ավելի մեծ չափերով։

Խորհրդային տնտեսության մեջ տարեց-տարի աճում յե պլանային սկզբունքի նշանակությունը։ Նեպին անցնելու առաջին շրջանում մեր տնտեսական նավը կարծես թե լողում եր առանց ղեկի և առագաստի։ Աստիճանաբար միայն սկսվեցին պլաններ կազմվել պետական արդյունաբերության, ապա յերկաթուղային ճանապարհների և պետական առևտրի համար։ Միայն 1925 թ. աշնանը կատարվեց առաջին փորձը—կազմելու ամփոփ պլան, վորի մեջ ընդգրկվեր յերկրի տնտեսությունն ամբողջությամբ։ Դա — Պետպլանի «կոնտրոլային թվերն» եյին։ Այդ կոնտրոլային թվերն, այն օրվանից սկսած, յուրաքանչյուր տարի սկսվեցին մշակվել։ Տնտեսական աշխատանքի բնագավառում դրանք խոշոր հենարան են հանդիսանում։

Ներկայումս արդեն ավարտվում են ժողտնտեսության 5-ամյա պլանի մշակման աշխատանքները։ Այդ 5-ամյա պլանը պետք է հաստատվի 1929 թվի սկզբին, խորհուրդների համագումարի կողմից։ Միաժամանակ աշխատանքներ են սկսվել 15 տարի ընդգրկող ժողտնտեսության գլխավոր պլան մշակելու ուղղությամբ։ Պարզ է, վոր նման ընդարձակ պլանները մեզ կարող են նախացուցել զարգացման ամենագլխավոր գիծը միայն։

Սոցիալիստական արդյունաբերության աճմանը, ընդհանրացված գյուղական տնտեսություններին զուգընթաց պետք է աճի նույնպես և պլանային սկզբունքը խորհրդային տնտեսության մեջ։ Պլանը ավելի պետք է թափանցի տնտեսական հարաբերությունների խորքերը, ավելի հիմնականորեն ընդգրկի վողջ տնտեսական կյանքը։

Գյուղատնտեսության կոոպերացումը, նրա սոցիալիստականորեն վերափոխումը պետարդյունաբերության զարգացմանը զուգընթաց՝ ապահովում են տնտեսական կյանքի պլանաչափ ղեկավարության գերակշռությունը։ Մեր պլանները պետք է ավելի պարզ ու ճշգրիտ դառնան։ Պլանային սկզբունքի աճումը հանդիսանում է աճող սոցիալիզմի ամենահիմնական ցուցանիշներից մեկը։

Մենք արդեն տեսանք, վոր մեզ մոտ տնտեսությունը զարգանում է ըստ պլանի։ Այսպիսով մենք խնայում ենք այն վնաս-

ներն ու ծախքերը, վորոնք առաջանում են կապիտալիզմի պայմաններում արտադրության անարխիայից։ Հետո, մենք հարկ չենք վճարում վոչ արտասահմանյան և վոչ էլ մեր բուրժուազիային։ Մեզ մոտ հիմնականում վերացված է կապիտալիստի և կալվածատերի անաշխատ յեկամուտը, վորի շնորհիվ կապիտալիստական յերկրներում ծծվում է այն բոլորի կեսից ավելին, ինչ վոր արտադրված է բանվոր դասակարգի աշխատանքով։ Վերջապես՝ մենք ունենք և՛ս մի խոշոր և կարևորագույն առավելություն։ Կապիտալիզմի պայմաններում աշխատավորական մասսաներն իրենց կամքից անկախ շահագործվող ստրուկներ են։ Խորհրդային Միության մեջ քանի գնում, ավելի ու ավելի յե հանդես գալիս բանվորների նոր, տիրական վերաբերմունքը դեպի արդյունաբերությունը, վողջ աշխատավորության տիրական վերաբերմունքը դեպի իրենց աշխատանքը։ Բոլոր այս առավելությունները խորհրդային յերկրին հնարավորություն են տալիս առաջ գնալ մեծ թափով (կամ ինչպես ասում են՝ արագ տեմպով), քան կապիտալիզմի յերկրներն են զարգանում։ Մեր կուսակցությունը յերկրի առաջ խնդիր է դրել—հասնել, իսկ հետո յել առաջ անցնել առաջավոր կապիտալիստական պետություններից։ Այս խնդիրն, իհարկե, հեշտ չէ լուծել։ Մեկ, յերկու կամ հինգ տարվա ընթացքում չես հասնի Ամերիկային կամ Գերմանիային.—շատ, շատ յետ ենք մնացել՝ ցարերի, կալվածատերերի և կապիտալիստների հարյուրավոր տարիներ իշխելու պատճառով։

Տնտեսական շինարարության ասպարեզում ստիպված ենք առաջ ընթանալ այնպիսի արագությամբ (կամ տեմպով), վորպեսզի հասնել կարողանա և գյուղական մանր տնտեսությունը, վորպեսզի նա յետ չմնա, չքայքայվի։ Յեթե մոռանայինք այս բանը, այդ դեպքում մեկ կամ յերկու տարվա ընթացքում կարելի յեր թռչել շատ հեռու։ Բայց հատուցումը շատ ծանր կլիներ.—ստիպված կլինեյինք կանգ առնել տեղում և կամ յետ դառնալ։ «Միանալ գյուղացիական մասսաների հետ, շարքային աշխատավոր գյուղացիության հետ և սկսել առաջ ընթանալ մեր յերազածից անչափ և անվերջ դանդաղ, բայց, իհարկե, այնպես, վոր մասսան իսկապես կընթանա մեզ հետ։ Այն ժամանակ այդ շարժման արագությունը իր ժամանակին կսկսվի այնպիսի մի թափով, վորի մասին մենք այժմ յերազել անգամ չենք կարող»։ Այսպես եր ասում Լենինը 1921 թ. աշնանը, յերբ յերկիրը նոր եր ձեռնամուխ լինում՝ պատերազմի

և քայքայվածության պատճառով ստացած իր վերքերի բուժմանը։ Մեր տնտեսական վողջ զարգացումն ապացուցեց դրա ճշտությունը։ Այժմ մենք արդեն հասնում ենք տնտեսական զարգացման այնպիսի արագության, վորպիսին չի տեսել և վոչ մի կապիտալիստական յերկիր։ Չնայած իմպերիալիստական պատերազմի և քաղաքացիական կռիվների պատճառով առաջացած բոլոր ավերումներին, 1926—27 թվականին մենք ընդհանուր առմամբ արտադրել ենք նախապատերազմյան շրջանից վոչ պակաս ապրանքներ։ Խորհրդային տնտեսության վերականգնումն այնքան արագ ընթացավ, վոր ոտարյերկրացիները զարմանում եյին միայն։ Այստեղ յերևան յեկան դեպի սոցիալիզմն ընթացող պլանային տնտեսության առավելությունները։ Այստեղ պարզվեց ճշտությունը տնտեսական շինարարության այն ճանապարհի, վորով ընթանում է մեր կուսակցությունը։

Վերջին տարիների ընթացքում տնտեսական վերելքն ընթանում եր շատ արագ։ Այսպես, օրինակ, 1924/25 թ. մեր արդյունաբերությունն արտադրեց մեկ և կես անգամ ավելի շատ ապրանք, քան նախորդ 1923/24 թ., իսկ հետագա 1925/26 թ. նորից մեկ ու կես անգամ ավելի, քան 1924/25 թ.։ Ինչու՞ այդ տարիները հաջողվեց այդքան արագ լայնացնել արտադրությունը։ Իհարկե, այն պարզ պատճառով, վոր կային շատ ու շատ գործարաններ, վորոնք անգործ եյին մնացել քայքայման տարիներին։ Բավական եր այդ ձեռնարկները կարգավորել, կատարել անհրաժեշտ նորոգումը, նորոգել սարքավորման այս կամ այն մասը, հում նյութերով ու վառելիքով ապահովել և բանվորներ հավաքել,—և պատրաստ եր, կարելի յեր աշխատեցնել ձեռնարկությունը։

Առաջիկայում նման արագությամբ աճել մենք չենք կարող։ Արտադրությունն անցել է նախապատերազմյան մակարդակից։ Այն ձեռնարկները, վորոնք մնացել եյին նախապատերազմյան շրջանից, արդեն աշխատում են վողջ թափով։ Արտադրության ծավալման համար ներկայումս անհրաժեշտ է ներկա ձեռնարկների հիմնական վերասարքավորումը և կամ նոր գործարանների ու ֆաբրիկների կառուցումը։ Թե առաջինը և թե յերկրորդը պահանջում են հսկայական միջոցներ։ Հասկանալի յե, վոր նման պայմաններում մեր արտադրությունը չի կարող յուրաքանչյուր տարի համարյա մեկ և կես անգամ աճել։

Այնուամենայնիվ, մենք ավելի արագ չենք աճում, քան աճել և աճում են կապիտալիստական յերկրները։ Այսպես, արդյունաբերությունը կապիտալիստական յերկրներում աճում է տարեց-տարի 3 տոկոսից վոչ ավելի, իսկ շատ յերկրներում—ավելի դանդաղ։ Նախապատերազմյան շրջանի Ռուսաստանի (վորի արդյունաբերությունը զարգանում էր բուռն թափով) աճումը տարեկան 4 տոկոսից չէր անցնում։ Իսկ ըստ մեր հնգամյա պլանի նախագծված է արդյունաբերությունը հինգ տարվա ընթացքում լայնացնել 140 տոկոսով, այսինքն յերկու ու կես անգամից քիչ պակաս։ Այս բանը մեզ հնարավորություն է տալիս աճելու տարեկան մոտավորապես 20 տոկոսով։

Նախապատերազմյան գծից անցնելով, մենք մտել ենք մեր տնտեսական զարգացման նոր աստիճանը։ Վերանորոգումից մենք անցել ենք վողջ տնտեսությունը արմատապես վերակառուցելու գործին,—նորի կառուցմանը։ Նման վերակառուցումը ռեկոնստրուկցիա յե կոչվում։ Վերանորոգման շրջանից մենք անցել ենք ռեկոնստրուկցիային։

Այս նոր շրջանը բաց է անում հսկայական հնարավորություններ։ Ներկայումս, չնայած մեր խիստ աղքատությանը, խորհրդային տնտեսությունը ունի այնպիսի միջոցներ, վորոնց մասին մի քանի տարի առաջ մտածել անգամ չեյինք կարող։ Ներկայումս խորհրդային տնտեսությունը արդյունաբերական շինարարության համար յուրաքանչյուր տարի մեկ միլիարդ ռուբլուց ավելի յե ծախսում։

Սոցիալիստական աճման դժվարությունները. — *Բայց ռեկոնստրուկցիային անցնելով, աճում են նաև շինարարության առաջ կանգնած դժվարությունները։ Աճում է սոցիալիզմի թշնամիների—քաղաքի և գյուղի կապիտալիստական խավերի—դիմադրությունը։ Չե՞ վոր սոցիալիզմի աճումն ու հաղթանակը սպառնում է նրանց գոյությանը։ Աճում են և մյուս դժվարությունները։ Սոցիալիստական տնտեսություն կառուցելու գործը նոր բան է։ Նոր ձեռնարկների կառուցման մեջ յերբեմն զգացվում է մեր անկարողությունը։*

Շատ անգամ մեծ վնասներ են հասցնում մեր սխալները։ Մեր տնտեսական հիմնարկներում նստած բյուրոկրատների անփույթ և անտարբեր վերաբերմունքը նույնպես մեծ վնասներ է

հասցնում գործին։ Բանվորական վողջ մասսայի արթուն հայացքն է միայն ոգնում այդ սխալները յերևան հանել և ուղղել գործը, պարզել և պատժել անփութությունը, քշել ծույլերին, պատժել վնասողներին և վռնտել անպետքներին։

Մեր տնտեսական կյանքի ամենամեծ դժվարություններից մեկը գործազրկությունն է։ Մեզ մոտ գործազրկությունը կապիտալիստական յերկրներում գոյություն ունեցող սովորական գործազրկությունից տարբերվում է հիմնովին։ Այնտեղ գործազրկությունը յերևան է գալիս և աճում, յերբ կապիտալիստները բանվորներին դուրս են շպրտում ձեռնարկներից։ Այդ բանը կատարվում է կամ արտադրության կրճատման և կամ նոր մեքենաների մուծման——արտադրության ռացիոնալիզացիայի դեպքում։ Գործազրկությունն աճում է, իսկ աշխատողների քանակը նվազում։ Մեզ մոտ բոլորովին ուրիշ պատկեր է։ 1921 թվականից սկսած՝ բանվորների թիվն արդյունաբերության մեջ անընդհատ աճում է։ Յուրաքանչյուր տարի արտադրության աճման հետ միասին գործարաններն են լցվում հազարավոր նոր բանվորներ։ Միաժամանակ աճում է և գործազուրկների թիվը։ Նա աճում է վոչ թե գործարաններից ու ֆաբրիկներից դուրս շպրտվողների, այլ գյուղից յեկող բանվորական ձեռների հաշվին։ Սա յե նրա տարբերությունը կապիտալիստական յերկրներից։ Մեզ մոտ գործազրկությունը մեր յերկրի, մեր գյուղի յետամնացության հետևանք է։ Գյուղում ավելորդ աշխատող ձեռները շատ են։ Գյուղատնտեսության յետամնացության պատճառով նրանք չեն ոգտագործվում։ Յուրաքանչյուր տարի նրանց մի մասն ընկնում է քաղաք և կանգնում գործազուրկների շարքում։ Այդ պատճառով ել գործազրկության հետ միասին մենք ունենք վորակյալ բանվորների պակաս, վորը հաճախ, որինակ, շինարարության գործում, խոշոր դժվարություններ է ներկայացնում։ Պարզ է, վոր այդ բանակին ամբողջությամբ գործ տալ մեր արդյունաբերության մեջ առաջիկա տարիների ընթացքում անհնարին է։ Արդյունաբերության աճումը ներգրավում է գործազուրկների վորոշ մասը միայն։ Մյուս մասն աշխատանք ճարելու յե գյուղում։ Այդ բանը կապված է գյուղատնտեսության բարձրացման, հողի ավելի լավ մշակման, խոշոր կոլեկտիվ տնտեսությունների ստեղծման և գյուղատնտեսության բարձրացմանը նպաստող մյուս միջոցների հետ։

Տնտեսության վերակառուցումը պահանջում է բոլոր միջոցների ուժեղ լարումն, վորը և մեզ հնարավորություն կտա վերջնականապես վերացնելու ապրանքային սովը, վոր դեռևս զգացվում է։

Հաճախ մեզ մոտ զգացվում է ապրանքների պակասություն։ Յերբեմն գյուղում մեխ ու ճոթեղեն չկա կամ քաղաքում յուղը քիչ է։ Այդ դժվարությունների հիմնական պատճառը մեր արդյունաբերության յետամնացությունն ու թուլությունն է։ Մեր գործարաններն ու ֆաբրիկները դեռևս ավելի քիչ քանակությամբ են ապրանք արտադրում, քան այդ պահանջվում է ազգաբնակչության համար։ Գուցե հարցնեք,—իսկ ինչո՞ւ պատերազմից առաջ ապրանք բավական կար։

Այստեղ զարմանալու բան չկա։ Առաջվա ժամանակները թագավորն ու կալվածատերը գյուղացու կաշին եյին քերթում, մերկացնում չոր քոթուկի պես։ Հաշված է, վոր հեղափոխությունը գյուղացիությանը ազատել է մոտավորապես մեկ ու կես միլիարդ ռուբլու զանազան վճարումներից (տուրքերը, վարձը կալվածատերին և այլն)։ Հասկանալի յէ, վոր գյուղացիական մասսաները արդյունաբերական ապրանքներ այժմ ավելի շատ կարող են գնել, իսկ արդյունաբերությունը դեռևս չի կարող այդ ապրանքները հարկ յեղած քանակությամբ արտադրել։ Այս դժվարությունից դուրս գալու ճանապարհը պարզ է.—պետք է ավելի լայնացնել արդյունաբերությունը։ Այդ բանի համար ժամանակ է պահանջվում։ Նոր գործարաններ կառուցելու միջոցներ այնքան էլ շատ չունենք։ Յեվ, վերջապես, յուրաքանչյուր նոր կառուցում միանգամից հո չի ավելացնում ժողովրդի պահանջած ապրանքների քանակը։ Կառուցեցինք ռելսեր պատրաստող գործարան, ծախսեցինք մի քանի միլիոն ռուբլիներ, իսկ շուկայում ապրանք չկա։ Ռելսերը հո չես կարող ծախել բանվորին կամ գյուղացուն։ Իսկ առանց ռելսերի յել յոլա չես գնա, դրանք հարկավոր են յերկաթուղիների համար։ Ճիշտ այդպես է բանը թե շոգեշարժեր կառուցող գործարանների, թե քարածուխային հանքահորերի, թե նավթային վիշկաների և թե չուգունի ու յերկաթի ձուլման ասպարեզում։ Նման ձեռնարկությունները ոդի չափ անհրաժեշտ են։ Առանց դրանց քայլ չես կարող անել ժողտնտեսության մեջ, դրանք պետք է վոր լայնացվեն։ Բայց այդ լայնացումը միանգամից չի վերացնում ապրանքային սովը։

Կարող են հարցնել.—իսկ չի՞ կարելի ապրանքային սովը վերացնել նրանով, վոր ավելի մեծ ուշադրություն դարձվի թեթև արդյունաբերությանը, վորն արտադրում է չիթ, կոշկեղեն և այլն, և սրան առաջ մղել ծանր արդյունաբերության հաշվին։ Նման քաղաքականությունը շատ անհեռատես և վտանգավոր կարող եր լինել։ Դա նշանակում է հրաժարվել յերկրի ինդուստրացումից։ Բացի այն բոլորից, ինչ վոր խոսվեց վերևում արտասահմանյան տեխնիկայի հետ ունեցած կախումից կարճ ժամանակամիջոցում ազատվելու մասին, մի բան, վոր անհնարին է թեթև արդյունաբերության զարգացումով, պետք է մատնանշել և այն, վոր ապրանքային սով գոյություն ունի վոչ միայն սպառման առարկաների, այլև արտադրության միջոցների բնագավառում.—գյուղը տրակտորի պահանջը նույնքան սուր կերպով է դնում մեր առաջ, վորքան և չիթինը։ Յերկրորդ, ինքը թեթև արդյունաբերությունը ևս զգում է ծանր արդյունաբերության զարգացման կարիքը.—առաջինի կահավորման համար անհրաժեշտ է մեքենաների արտադրության լայնացումը, վառելիքի արտադրության (նավթ, քարածուխ) մեծացումը և թեթև արդյունաբերության համար հում նյութ և նրա պրոդուկցիան փոխադրող տրանսպորտի զարգացումը։ Այսպիսով վողջ ժողովրդական տնտեսության զարգացումն ամբողջությամբ հենվում է ծանր արդյունաբերության զարգացման վրա։ Յերկրի ինդուստրացման ճանապարհով է, վոր կարելի կլինի հաղթահարել ապրանքային սովը, միայն ինդուստրացման միջոցով կարելի կլինի աշխատավորության նյութական դրությունը անընդհատ բարելավել, Խորհրդային Միության պաշտպանության գործը ամրացնել և ապադասակարգային հասարակության համար ամուր հիմք ստեղծել։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ռուսաստանի արդյունաբերական յետամնացությունը. — *Մենք արդեն գիտենք, վոր կապիտալիստական յերկրների թվում Ռուսաստանն ամենայետամնաց յերկրներից մեկն եր։ Հալածանքների և քմահաճույքի վրա հիմնված ցարական վայրենի ռեժիմը կասեցնում եր մեր տնտեսական զարգացումը։ Ժողովրդական աշխատանքը հափշտակում եյին կալվածատերերը և կապիտալիստական գործակալները, վորոնք շատ քիչ եյին մտածում ապագայի մասին։*

Ռուսաստանի յետամնացությունը արտահայտվում եր գյուղական տնտեսության աղքատիկ վիճակով և արդյունաբերության թույլ զարգացումով։ Մենք արդեն տեսանք վոր արդյունաբերությունը ներկա տնտեսության մեջ ղեկավար դեր է խաղում։ Արդյունաբերությունն է, վոր առաջավոր յերկրների ուժն ու հարստությունն է կազմում։ Առանց արդյունաբերության զարգացման անհնարին է բարձրացնել գյուղական տնտեսությունը։ Մեր արդյունաբերությունը միաժամանակ հանդիսանում է սոցիալիզմը կառուցող բանվոր դասակարգի ամենագլխավոր ամրոցը։ Հասկանալի յե, ինարկե, վոր սոցիալիստական շինարարության հիմնական ուղին— արդյունաբերական զարգացումն է, յերկրի ինդուստրիացումը։

Այդ ասպարեզում մեր առաջ կանգնած խնդիրներն անչափ խոշոր են։ Խորհրդային Միությունը համարյա թե յերկրագնդի մեկ վեցերորդ մասն է կազմում. — տարածությամբ նա աշխարհի բոլոր յերկրների մեջ բռնում է յերկրորդ տեղը։ Ազգաբնակչության թվով Խորհուրդների յերկիրը յերրորդ տեղն է բռնում։ Իսկ արդյունաբերության կարևորագույն արտադրանքների ասպարեզում — մյուս յերկրներից մենք շատ յետ ենք մնացել։

Նախապատերազմյան շրջանում Ռուսաստանում արտադրվում եր ամբողջ աշխարհում արտադրվող քարածուխի 4,4%-ը միայն (այսինքն մեկ քառասուներորդ մասը)։ Յերկաթահանքերի արտադրությունը Ռուսաստանում կազմում եր համաշխարհայինի 5%-ը, ձուլվող պողպատն ևս կազմում եր համաշխարհայինի 5%-ը։ Միայն նավթը մեզ մոտ շատ եր արտադրվում, կազմելով ամբողջ աշխարհի նավթի արտադրության մեկ վեցերորդ մասը։

Ռուսաստանի արդյունաբերության ամենից ուժեղ բնագավառը հանդիսանում եր տեքստիլ արդյունաբերությունը։ Տեքստիլ արդյունաբերության մեջ աշխատում եր ամբողջ Ռուսաստանի բանվորության մեկ յերրորդ մասը. — տեքստիլ արդյունաբերությունը տալիս եր յերկրի ամբողջ արդյունաբերական պրոդուկցիայի (արտադրանքի) մեկ քառորդ մասը։ Սակայն այդ ասպարեզում ել մյուս յերկրները շատ առաջ եյին անցել Ռուսաստանից։ Բամբակի վերամշակման ասպարեզում Ռուսաստանը բռնում եր չորրորդ տեղը միայն՝ Միացյալ Նահանգներից, Անգլիայից ու Գերմանիայից հետո։ Ռուսաստանում վերամշակման եր յենթարկվում համաշխարհային տնտեսության մեջ սպառվող բամբակի մեկ տասներորդ մասը միայն։ Ռուսական արդյունաբերությունն ուներ համաշխարհային տնտեսության մեջ աշխատող իլիկների մեկ տասնավեցերորդ մասը միայն (6,3%-ը)։

Մյուս յերկրների նկատմամբ մեր յետամնացությունը բնական հարստությունների բացակայությամբ չի կարելի բացատրել։ Յուրաքանչյուր վոք գիտե, ինարկե, վոր Խորհրդային յերկրի բնական հարստությունները անսահման են. — անսպառելի հարստություններ նիրհում են Խորհրդային յերկրի խորքերում և սպասում են զարթոնքի։ Մենք հանդիսանում ենք աշխարհի ամենահարուստ յերկիրը նավթի, տորֆի, մարգանեցի (յերկաթ հալելու համար անչափ անհրաժեշտ մի մետաղ) ասպարեզում։

Ուրիշ ոգտակար հանքեր ել մենք անչափ շատ ունենք. — քարածուխի հսկայական շերտերը՝ հարավում Դոնեցի ավազանում և Սիբիրում (Կուզնեցկի և այլ շրջաններում) կազմում են քարածուխի համաշխարհային պաշարի 7 տոկոսը։ Քարածուխի պաշարը մեզ մոտ յերկու անգամ ավելի յե՝ քան Անգլիայում, վորն ունի համաշխարհային պաշարի 3,2 տոկոսը միայն։ Յերկաթահանքերի հսկայական պաշարներ ցրված են մեր Միության մի քանի

3—2291

շրջաններում — Մերձվոլգյան շրջանում (սահմանակից և Դոնեցի քարածուխին), Ուրալում և, վերջապես, Կուրսկի նահանգում։

Ռուսաստանի նախապատերազմյան արդյունաբերությունը յետամնաց տեխնիկա ուներ։ Շատ բան, վոր մեզ մոտ ձեռքի աշխատանքով եր, արտասահմանում կատարվում եր մեքենայի և դազգահի ոգնությամբ։ Համաշխարհային արդյունաբերությունն ուներ 600 միլիոն ձիու ուժի չափ մեխանիկական շարժիչներ (մեքենաներ)։ Մարդուն ոգնող յերկաթե ոգնականների այդ բանակից Ռուսաստանին բաժին եր ընկնում ընդամենը 13 միլիոն ձիու ուժ, իսկ հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին, որինակ, տասն անգամ ավելի՝ 130 միլիոն ձիու ուժ։

Ռուսաստանի թույլ և տեխնիկապես յետամնաց արդյունաբերությունը ավելի քիչ արտադրանք եր տալիս, քան մյուս յերկրներինը։ Այսպես, յուրաքանչյուր մարդուն, չուգունի սպառման ասպարեզում, մեզ մոտ տարեկան բաժին եր ընկնում 18 կիլոգրամ, իսկ Անգլիայում՝ 187, Գերմանիայում՝ 210, Ամերիկայում՝ 291։ Քարածուխի սպառման ասպարեզում ազգաբնակչության յուրաքանչյուր շնչին մեզ մոտ ընկնում եր 218 կիլոգրամ, իսկ Անգլիայում 4.586 կգ., այսինքն 20 անգամ ավելի*։

Քարածուխն ու չուգունը գործ են ածվում արդյունաբերության կարիքների, յերկաթուղագծերի, կառուցումների և այլ նպատակների համար։ Նույնպիսի վատ վիճակում եր գտնվում արդյունաբերական այն արտադրանքների գործը, վորոնք ազգաբնակչության ամենալայն խավերի կարիքների համար են։

Տեքստիլ ապրանքներ մեզ մոտ ազգաբնակչության յուրաքանչյուր շնչի համար արտադրվում եր 9 ռ. 20 կոպեկի սահմաններում, իսկ Ամերիկայում՝ 36 ռ. 80 կոպեկի։

Ազգաբնակչության յուրաքանչյուր շնչին շաքար մեզ մոտ ընկնում եր 7,04 կիլոգրամ, իսկ Անգլիայում 41,6։ Ռուսաստանում յուրաքանչյուր շնչի համար տարեկան արտադրվում եր 70 կոպեկի թուղթ, իսկ Ամերիկայում — 18 ռ. 60 կոպեկի։

Ծանր յեվ թեթեվ արդյունաբերությունը. — Ծանր արդյունաբերության արտադրած ապրանքների պակասը ազգաբնակչու-

* Վորովհետև զանազան յերկրներ ազգաբնակչության թվով խիստ տարբերվում են միմյանցից, այդ պատճառով էլ պետք ե, համեմատության համար, արտադրված ապրանքների քանակը բաժանել ազգաբնակչության քանակի վրա։

թյունը ամենից քիչ ե զգում։ Ցեվ, իսկապես, անհատ բանվորն ու անհատ գյուղացին շատ դեպքում չեն էլ նկատում, վոր մեզ մոտ չուգուն քիչ ե հալվում և կամ ռելսեր քիչ են պատրաստվում։ Ա՛յ, յեթե ընտանիքիդ համար չիթ չես գտնում, յեթե հինը մաշվել ե և նոր անդրավարտիկ չես կարող գնել, սա արդեն ամենքի համար զգալի յե։ Բայց իրականում յերկրի վողջ տնտեսությունը հիմնվում ե խոշոր արդյունաբերական արտադրության վրա։

Արդյունաբերությունը զարգացնել — նշանակում ե կառուցել նոր գործարաններ ու ֆաբրիկներ, լայնացնել հները, իսկ դրանց համար անհրաժեշտ են զգալի միջոցներ։ Սակայն մեր միջոցներն առայժմ շատ սահմանափակ յեն։ Կարելի յե ասել, վոր յեղած բոլոր միջոցները պետք ե առաջին հերթին գործադրել այնպիսի գործարանների կառուցման համար, վորտեղ պատրաստվում են առարկաներ ազգաբնակչության լայն խավերի սպառման համար։ Այդպիսիք են տեքստիլ, կաշեգործական, զանազան սննդանյութերի, լուցկու և այլ արդյունաբերությունները։ Իսկ քարածուխի և յերկաթի մեքենաների պատրաստման գործում կարելի յե դեռևս սպասել։

Սակայն նման յեզրակացությունը կլիներ ամենամեծ սխալը։ «Զթի ինդուստրացման» նման ուղիով գնալը կնշանակեր՝ մեծացնել մեր տնտեսական յետամնացության չափը և կախումը կապիտալիստական աշխարհից։ Այդ նշանակելու յեր Խորհրդային Միության վողջ տնտեսական զարգացման դանդաղումը։ Մինչև իմպերիալիստական պատերազմը Ռուսաստանը ներմուծում եր արտասահմանից տնտեսությանն անհրաժեշտ սարքավորումների (մեքենաների, դազգահների և այլն) կեսից ավելին (մոտավորապես 60%)։ Մեքենակառուցման գործը մեզ մոտ շատ թույլ հիմքերի վրա յեր դրված։ Մինչև անգամ տեքստիլ գործարանների համար մենք չեյինք կարողանում մեքենաներ կառուցել և ներմուծում եյինք Անգլիայից։ Ռուսաստանում գոյություն չունեյին արդյունաբերության համեմատաբար նոր ճյուղեր, վորոնք խոշոր դեր եյին խաղում ուրիշ յերկրներում։ Այսպես, շատ թույլ եր զարգացած ելեքտրոտեխնիկական, քիմիական, ավտոմոբիլների, ավիացիոն և այլ արդյունաբերությունները։

Մենք համաշխարհային կապիտալիզմի կամազուրկ հարուկը դառնալ չենք ցանկանում։ Ընդհակառակը, պետք ե ապահովել խորհրդային տնտեսության ինքնուրույն կերպով զարգանալու

հնարավորությունները, զարգացնել մեր յերկրում արտադրական միջոցների արտադրությունը: Քանի կարելի յե արտասահմանի հետ առևտուր անել, անհրաժեշտ ե այդ առևտուրն ոգտագործել լայն չափերով, սակայն արտասահմանից պետք ե ներմուծել նոր ձեռնարկությունների համար սարքավորում, վորի ոգնությամբ զարգանում են ի միջի այլոց և այն արդյունաբերության ճյուղերը, վորոնցից զուրկ ենք: Յեթե կապիտալիստները ցանկանում են մեր յերկիրը կտրել համաշխարհային շուկայից (բլոկադա), մենք պետք ե բավարար չափով ուժեղ լինենք, վորպեսզի կարողանանք տնտեսության բնագավառում մեր ներքին ուժերով կառավարվել: Այդ պատճառով ել անհրաժեշտ ե ուժեղ թափով զարգացնել արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք ցարիզմի ժամանակ մոռացության են մատնվել և վորոնք մենք չունենք: Առանձնապես կարևոր ե ծանր արդյունաբերությունը (քարածուխը, յերկաթը), մեքենաշինության գործը, քիմիական և ելեկտրոտեխնիկական արդյունաբերությունը:

Արդյունաբերության այդ տեսակները մեզ անհրաժեշտ են լինելու մանավանդ պատերազմի դեպքում: Ներկա պայմաններում պատերազմ մղելու համար պահանջվում ե ուժեղ արդյունաբերություն, վորը կարճ ժամանակի ընթացքում կարողանա ծառայել ռազմական նպատակների համար: Յերկրի պաշտպանողական ունակության շահերը պահանջում են լայն ինդուստրացում, հիմք ունենալով ծանր արդյունաբերության ծավալումը:

Տրանսպորտ. — Մեր յետամնացությունը տրանսպորտի ասպարիզում անչափ մեծ ե: Ուրիշ յերկրների հետ համեմատած՝ յերկաթուղիների ցանցը անչափ թույլ ե: Մեր ջրային ճանապարհները, գետերը, շատ քիչ են ոգտագործված և նավագնացության համար չեն հարմարեցված: Խորհրդային Միության ընդարձակ տարածությունները դեռևս սպասում են, վոր իրենց պատեն յերկաթուղիների ցանցը, վորպեսզի մեր խճուղիներն ու մյուս ճանապարհները կենդանություն տան քնած վայրերին: Թեկուզ քիչ քանակությամբ արտադրված ապրանքը — պետք ե տեղափոխել: Իսկ մեր հսկայական յերկրում տեղափոխել յերբեմն անհրաժեշտ ե լինում հարյուրավոր ու հազարավոր կիլոմետր տարածություն: Արդյունաբերության և գյուղատնտեսության աճման

հետ զուգընթաց մեծ քանակությամբ աճելու յեն նաև փոխադրություն պահանջող ապրանքները: Մեր Միության ամենահարուստ շրջանները չեն կարող զարգանալ, քանի վոր նրանք հաղորդակցական լավ ճանապարհներով չեն միացած ամբողջ աշխարհի հետ: Պատերազմի դեպքում ել զարգացած տրանսպորտը մեծ ոգուտ ե տալիս և ուժեղացնում ե յերկիրը: Այս բոլորից հետո պարզ ե, թե վորքան խոշոր նշանակություն ունի, մեր պայմաններում, զարգացած ծանր արդյունաբերության հետ միասին զարգացած տրանսպորտ ունենալը:

Իսկ մասսայական սպառման համար ապրանքներ արտադրող թեթև արդյունաբերությո՞ւնը: Կարելի՞ ե թողնել նրան իր ներկա վիճակում, ծավալման և վոչ մի միջոց չտալ, քանի վոր դեռ չեն իրականացել ծանր արդյունաբերության ասպարիզում յեղած խնդիրները: Հարցի այս կերպ լուծումը — նույնպես սխալ կլիներ:

Տնտեսության աճման հետ զուգընթաց աճում են ժողովրդի յեկամուտները, աճում են չթեղենի, կոշկեղենի, շաքարի, ծխախոտի և այլ պահանջները: Սպառման քանակը ավելացնելը, կյանքի մակարդակի բարձրացնելը և աշխատավորության կյանքի բարելավումը — սոցիալիստական շինարարության հիմնական խնդիրներից մեկն ե: Իսկ այդ բացի համար անհրաժեշտ ե ավելացնել այն արտադրանքները, վորոնք գնում են բանվորական և գյուղացիական մասսաների պահանջների բավարարման համար: Ուրեմն, թեկուզ ժամանակավորապես, չի կարելի մոռացության տալ թեթև արդյունաբերությունը: Նրան ևս անհրաժեշտ ե զարգացնել, բայց առաջին տեղը բռնելու յե ծանր արդյունաբերությունը. — հենց ծանր արդյունաբերության արագ աճումով ե ապահովվում թեթև արդյունաբերության աճումը, վորովհետև թեթև արդյունաբերությունն ե, վոր կարիք ե զգում ծանրի արդյունաբերած մեքենաներին, սարքավորմանը, վառելիքին, կառուցողական նյութերին:

Մեր կուսակցության կողմից կիրառվող ինդուստրացման քաղաքականության համապատասխան՝ մետաղի, քարածխի, մեքենաների արտադրությունը պետք ե զարգանա ավելի արագ թափով:

Յերկիրը ինդուստրացման յենթարկել, նշանակում ե վերածել նրան մեքենաներ, սարքավորումն և այլ բաներ ներմուծող

յերկրից այնպիսի մի յերկրի, ուր արտադրվում են արտադրության այդ միջոցները (մեքենաներ, սարքավորումն և այլն)։

Խնդիրը նրանումն է, վոր մեր տրամադրության տակ յեղած միջոցները խելացի կերպով բաժանվեն թեթև և ծանր արդյունաբերության ու տրանսպորտի միջև։ Այդ միջոցները աճում են արագ, տարեց-տարի։

Ինչպես են աճում արդյունաբերության և տրանսպորտի մեջ դրվող գումարները

(միլիոն ռուբլիներով՝ 1925/26 թ. գներով)

	1924/5 թ.	1925/6 թ.	1926/7 թ.	1927/8 թ.
1. Արդյունաբերությունը (ելեքտրիֆիկացիայով)	439	944	1.257	1.505
2. Տրանսպորտը	318	408	538	743

Արդյունաբերության մեջ դրվող բոլոր գումարների յերեք քառորդը վերջին յերեք տարիների ընթացքում տրվել է ծանր, իսկ մեկ քառորդը՝ թեթև արդյունաբերության զարգացմանը։ Ծանր արդյունաբերության մի քանի բնագավառներ վերակառուցվել են հիմնովին։ Քարածխահանքերում յերևացել է քանդող մեքենան, վորը փոխարինել է մուրճով քանդող բանվորի աշխատանքին։ Քանդող մեքենան ցարական Ռուսաստանում չեր գործածվում բոլորովին։ Նավթային արդյունաբերության մեջ ևս կիրառված է նավթի մեխանիկական արտադրությունը, կիրառված է փորելու նոր մեխանիկական ձևը։ Այդ վերակառուցումը զարգացրեց նավթի արտադրությունը, իջեցրեց ինքնարժեքը և հնարավորություն տվեց նավթ արտահանելու արտասահման, վորտեղ նավթի արտադրությունը վաղուց ավելի եժան է նստում։

Առաջիկա 5 տարին նախատեսնվում է արդյունաբերության (ելեքտրիֆիկացիայի հետ միասին) և տրանսպորտի զարգացման համար ծախսել մոտավորապես 16—18 միլիարդ ռուբլի։

Արդյունաբերության զարգացման համար ահա թե ինչպիսի վորոշում է ընդունել մեր կուսակցության 15-րդ համագումարը.

«Յերկրի ինդուստրացման քաղաքականության համաձայն, առաջին հերթին պետք է ուժե-

ղացվի արտադրական միջոցների արտադրությունը այն հաշվով, վորպեսզի թեթև և ծանր ինդուստրիայի, տրանսպորտի և գյուղատնտեսության աճումը, այսինքն նրանց կողմից առաջադրվող արտադրական պահանջը հիմնականում ապահոված լինի ԽՍՀՄ արդյունաբերության ներքին արտադրությամբ։ Զարգացման ավելի արագ տեմպ պետք է տրվեն ինդուստրիայի այն բնագավառներին, վորոնք կարճ ժամանակի ընթացքում կբարձրացնեն ԽՍՀՄ տնտեսական կարողությունը և

Ինչպես ենք զորանում հինգ տարում

(1926/27 թ. մինչև 1930/31 թ.)

Պետական արդյունաբերության պրոդուկցիան աճում է 79%



Ելեքտրոկայանների ուժը 1.440 կիլովատից (1926 թ.) հասնելու յե մինչև 3.611 կիլովատի (1931 թ.)



պաշտպանողական ունակությունները, կհանդիսանան զարգացման գրավական՝ տնտեսական բլոկադայի դեպքում, կթուլացնեն մեր կախումը կապիտալիստական աշխարհից և կօժանդակեն ավելի բարձր տեխնիկայի ու տնտեսության՝ կոլլեկտիվացման բազայի վրա։ Այդ պատճառով էլ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի ելեքտրիֆիկացիայի պլանի շուտափույթ իրականացման գործին, սև ու գունավոր մետալուրգիայի զարգացմանը — մանավանդ վորակապես բարձր մետաղների, քիմիական արտադրանքների զարգաց-

մանը, հատկապես արհեստական պարարտացման նյութերի արտադրությանը, նավթի, տորֆի և քարածուխի արտադրության հետագա աճմանը, ընդհանուր և գյուղատնտեսական մեքենաների կառուցմանը, նավաշինարարությանը, ելեքտրոարդյունաբերությանը, վոսկու և լուսնոսկու (պլատինի) արդյունաբերությանը։

Սպառման առարկաներ արտադրող արդյունաբերությունը իր արտադրանքի քանակը և վորակը պետք է հասցնի այն աստիճանին, վորպեսզի ապահոված լինի աշխատավորության յուրաքանչյուր շնչին ընկնող սպառումների նորմայի բարձրացումը։

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի տեքստիլ, կաշեարդյունաբերական, սննդանյութերի արդյունաբերության ծավալմանը, վորոնք ապահովելով գյուղատնտեսական հում նյութերի աճումը, առանձնապես նպաստում են գյուղատնտեսության ինդուստրացման զարգացմանը և ագրարային գերբնակչության (սակավհողության) վերացմանը»։

Ինդուստրացման աղբյուրներն ու միջոցները. — Հարց է ծագում — վո՞րտեղից են վերցվում այդ հոյակապ արդյունաբերական շինարարության համար անհրաժեշտ միջոցները։ Մենք յերեք հիմնական աղբյուրներ ունենք։

Առաջինը, իր՝ պետական արդյունաբերության վաստակը — մի շարք գործարաններ և տրեստներ, մանավորապես թեթև արդյունաբերության մեջ (տեքստիլ, ռետինի և այլն)՝ տարեց-տարի վաստակ են բերում։ Կապիտալիզմի որով այդ ձեռնարկների շահը գնում էր գործարանատերերի գրպանը, այդ վաստակի մի մասը կապիտալիստներն ուտում եյին, իսկ մյուս մասը նորից գործածության մեջ եյին դնում, ծախսելով հին ձեռնարկների լայնացման և կամ նորերի կառուցման համար։ Այդպես է աճել կապիտալի իշխանությունը, աճել է շահագործման հիմքերի վրա։ Մեր պետական արդյունաբերության վաստակը գնում է կառուցվող սոցիալիզմի ուժեղացման գործին։

Երկրորդ. ինդուստրացման նպատակների համար ծառայում են ժողտնտեսության մյուս ճյուղերում յեղած կուտակումները, վորոնք տրվում են արդյունաբերությանը։ Ուղղակի և անուղղակի հարկերի ոգնությամբ մենք յուրաքանչյուր տարի հավաքում ենք մեծ գումարների հասնող դրամ։ Այդ գումարների մեծ մասը գնում է խորհրդային պետության կարիքների բավարարմանը — բանակի, ղեկավարող ապարատի, ժողլուսավորության, առողջապահության և այլ նպատակների համար։ Այնուամենայնիվ, այդ գումարների քիչ մասը չէ, վոր գործադրվում է պետարդյունաբերության և տրանսպորտի կարիքների համար։

Վերջապես, յերրորդ աղբյուրը հանդիսանում են ազգաբնակչության խնայումները։ Աշխատավորության դրությունը հետզհետե բարելավվում է, ավելանում են նրանց յեկամուտները։

Աշխատավորական մասսաների խնայումները հավաքվում են խնայողական դրամարկղներում։ Իրենց խնայումներով աշխատավորները գնում են նույնպես պետական փոխառությունների ոբլիգացիաները։ Այսպիսով այդ միջոցները ժամանակավորապես անցնում են պրոլետարական պետության և նրա կողմից ոգտագործվում։ Վերջինս այդ միջոցներն ոգտագործում է ինդուստրացման նպատակների համար եւ։

Մինչև այժմ էլ միջոցների այդ աղբյուրը շատ թույլ կերպով է ոգտագործվում։ Ազգաբնակչության աշխատանքային խնայումների շատ չնչին մասն է ընկնում խնայողական դրամարկղները։ Դեռևս շատ մեծ աշխատանք է հարկավոր՝ խնայումները տնտեսական շինարարության ընդհանուր կաթսայի մեջ առնելու համար։

Այդ աղբյուրն, իհարկե, չի տալիս խոշոր հարստություններ, այնուամենայնիվ՝ էական ոգնություն նրանից կարելի յե սպասել։ Այդ նպատակին են ծառայում նաև՝ աշխատավոր ազգաբնակչության մեծ չափերով մուծումները կոոպերացիայի մեջ։

Այսպիսով, բյուջեյի միջոցով, հարկերի ոգնությամբ և վարկի միջոցով, փոխառությունների, խնայողական դրամարկղների, բանկերի ոգնությամբ պետությունը հավաքում է բավականաչափ միջոցներ։ Այդ միջոցները գնում են գլխավորապես արդյունաբերության զարգացման գործին։

Այդ միջոցները վորոշ քանակությամբ ստացվում են նաև տնտեսության մյուս բնագավառներից և մասնավորապես գյուղատնտեսությունից։ Արդյոք ճի՞շտ է այս ուղին։

Այստեղ անհրաժեշտ է խուսափել յերկու սխալներից։ Աններելի մի հիմարություն և վոճրագործություն կլիներ, յեթե արդյունաբերության զարգացումն իրագործվեր գյուղատնտեսության աճումը դանդաղեցնելու հաշվին, ինչպես տրոցկիստական ոպոզիցիան եր ըստ եյության առաջարկում։ Նման քաղաքականությունը փակուղու մեջ կձգեր բանվոր դասակարգի՝ գյուղի չքավորության ու միջակ գյուղացիության հետ ունեցած միությունը։ Գյուղը չի կարելի սոցիալիստական արդյունաբերության ոգուտի մի աղբյուր դարձնել։ Մեր արդյունաբերությունը չի կարող շահագործել գյուղը այնպես, ինչպես իմպերիալիստներն են շահագործում իրենց գաղութները։ Վերջապես, արդյունաբերությունն ինքն էլ չի կարող զարգանալ, յեթե քայքայվում է գյուղատնտեսությունը։ Այդ դեպքում մեր արդյունաբերությունը վո՞րտեղից կարող է վերցնել հում նյութ, վո՞րտեղից հաց կվերցվի քաղաքի համար, ինչպես կազմակերպել արդյունաբերության մթերքների սպառումը։ Պարզ է, վոր այն հենակետը, վոր առաջարկում եյին մեզ տրոցկիստները անցյալ տարիներին, պետք է վճռականորեն մերժվեր։

Բայց, իհարկե, նորից սխալ կլիներ յենթադրել, թե գյուղից մի գրոշ անգամ չպետք է վերցնել արդյունաբերության զարգացման համար։ Չե՞ վոր արդյունաբերության աճումն անհրաժեշտ է հենց գյուղի համար։ Առանց արդյունաբերության ոգնության գյուղը տեղից չի կարող շարժվել։ Այդ պատճառով էլ սխալ է նորից այն ուղին, վոր առաջարկում եյին մեզ մի քանի ոպպոզիցիոներներ, թե առայժմ զարգացնել գյուղատնտեսությունը, իսկ արդյունաբերության մասին մտածել մի քանի տարի հետո, յերբ գյուղատնտեսությունը կաճի բավարար չափերով։ Այստեղ կարելի յե ասել այն առածը, թե «մինչև վոր չոր առուն ջուր գա, գորտի աչքն էլ հո դուրս կգա»։ Այդ ուղին բռնելով, մենք անմիջականորեն կենթարկվեյինք կապիտալիստական յերկրներին, և խորհրդային յերկրի ինքնուրույն արդյունաբերական զարգացման վրա խաչ եր դրվելու։ Խորհրդային յերկրի արդյունաբերությունը կթուլանար ուժեղ չափով, կթուլանար նաև բանվոր դասակարգը, կքանդվեյին պրոլետարական դիկտատուրայի և սոցիալիստական շինարարության հիմքերը։

Տնտեսության մյուս ճյուղերը, վորոնց թվում և գյուղը, պետք է իրենց միջոցների մի մասը տրամադրեն արդյունաբերության զարգացման, խորհրդային յերկրի ինդուստրացման համար։ Այդ մուծումները կարճ ժամանակի ընթացքում կպարգևատրվեն յեռապատիկ։ Այդ մուծումները սակայն չպետք է գյուղի ուժից վեր լինեն։ Նրանք չպետք է դադարեցնեն գյուղի աճումը, վորն անհրաժեշտ է մեր արդյունաբերության համար։

Տնտեսողական ռեժիմ. — Մեր տնտեսության կարիքները հսկայական են, իսկ մեր միջոցները այնքան էլ շատ չեն։ Հարուստ կապիտալիստական յերկրների ոգնության վրա հույս չենք կարող դնել։ Մեր յետամնաց յերկիրը իր սեփական ուժերով պետք է հասնի և առաջ անցնի կապիտալիստական հարուստ յերկրներից։ Այդ պատճառով էլ անհրաժեշտ է յեղած միջոցների ծախսման գործում ցուցահանել խոշորագույն խնայողություն և տնտեսողականություն։ Վոչ մի պտուտակ, վոչ մի բանվորական որ և վոչ մի կոպեկ չպետք է իզուր տեղը կորչի։ Լենինն այս բանին տալիս եր խոշոր նշանակություն։ Նա մեզ պատգամ է թողել.

«Տնտեսողության ամենամեծ և ամենամեծ տնտեսողականության գնով մեր պետության մեջ ձգտել նրան, վորպեսզի ամեն մի փոքրիկ խնայումները պահպանվեն մեր խոշոր մեքենայական ինդուստրիայի, ելեքտրիֆիկացիայի, հիդրոտորֆի, Վոլխովստրոյի կառուցման և այլ նպատակների համար։ Այդ, և միայն այդ է լինելու մեր հույսը։ Այդ դեպքում միայն մենք ի վիճակի կլինենք—պատկերավոր արտահայտված—նստել գյուղացիական, մուժիկային աղքատացած ձիուց, քայքայված գյուղացիական յերկրի եկոնոմիկայի ձիուց նստել այն ձիու վրա՝ վորպիսին փնտռում է և չի կարող չփնտռել պրոլետարիատն իր համար—խոշոր մեքենայական ինդուստրիայի, ելեքտրիֆիկացիայի, Վոլխովստրոյի ձիու վրա»։

Բոլորս էլ գիտենք, վոր այս պատգամը գործնականորեն իրականացնելու գործում մեզ մոտ դեռևս քիչ բան է արված։ Կուսակցությունը վճռականորեն պայքար է մղում բոլոր տեսակի անտեղի ծախսումների և շռայլությունների դեմ։ Այդ պայքարն իր նպատակին կարող է հասնել միայն այն դեպքում, յերբ կոժանդակեն աշխատավորության ամենալայն խավերը։ Մեզ մոտ շատ բան է կորչում անկուլտուրականության, չիմանալու և վոչ ճկուն ու անփույթ վերաբերմունքի պատճառով։ Շատ ավելորդ դրամներ են ծախսվում տնտեսող աչքի բացակայության պատճառով։ Մեր վողջ յերկրի տերն ու տնօրենը հանդիսանում է

Նավթի արդյունահանության արժեքը
1925/1926 թ.

Արդյունահանության արժեքը՝ վոչ կատարելագործված մեքենաներով	Արդյունահանության արժեքը՝ կատարելագործված մեքենաներով

բանվոր դասակարգը, վորն իր յետևից տանում է աշխատավորական գյուղացիական մասսաներին։ Նրանք տիրոջ պես պետք է նայեն պետական միջոցների ծախսմանը։ Ցարիզմի որոք ձևակերպված հին կարծիքը, թե՝ «կազյոննի բան է»,—պետք է տեղի տա բոլորովին հակառակ մոտեցման։ Աշխատավորները իրենց կազմակերպությունների, պրոֆմիությունների, խորհուրդների և խորհրդային լրագրների միջոցով պետք է աչալուրջ հսկեն խնայողության գործնականորեն կիրառմանը։

Մանր արդյունաբերություն. — Մեր յերկրում վաղուց է լայն չափերով զարգացած մանր տնայնագործական և արհեստային արդյունաբերությունը։ Տնայնագործական զանազան ար-

դյունաբերական ձեռնարկները տարածված են մի շարք նահանգ-
ներում և շրջաններում։ Պատերազմից առաջ մոտավորապես յերկու
միլիոն մարդիկ եյին աշխատում մանր արդյունաբերության մեջ։
Աշխատում եյին պապենական միջոցով, ձեռքով, արտադրում
եյին շատ քիչ։ Աշխատող տնայնագործը տարեկան արտադրում
եր մոտավորապես 150—200 ռուբլու ապրանք, իսկ խոշոր ար-
դյունաբերության մեջ բանվորը—2.000 ռ., այսինքն 10 անգամ
ավելի։ 1923 թվին ամբողջ մանր արդյունաբերությունը տալիս
եր բոլոր արդյունաբերական արտադրանքների մեկ հինգերորդ
մասը. մնացած չորս հինգերորդը խոշոր արդյունաբերությունն
եր տալիս։
Մանր արդյունաբերությունն աշխատում է համարյա թե
գյուղական շուկայի համար։ Այդ պատճառով էլ գյուղացիական
կարիքների բավարարման համար մանր արդյունաբերությունը
նշանակալից դեր է խաղում։ Բացի այս, նրա նշանակությունը
նաև այն է, վոր հարյուր հազարավոր մարդկանց նա գործ է տա-
լիս։ Մենք արդեն տեսանք, վոր պետական թեթև արդյունաբե-
րության արագ զարգացման համար առաջիկա տարիների ընթաց-
քում միջոցները պակասում են, և առաջիկա տարիների ընթաց-
քում մանր արդյունաբերությունն ամբողջությամբ պահպանում
է իր նշանակությունը։
Կոոպերացիայի միջոցով, պետական տնտեսական հիմնարկ-
ների հետ շաղկապվելով, տնայնագործն ու արհեստավորը հեռա-
նում են մասնավոր գնողի ազդեցությունից և մտնում սոցիա-
լիստական կառուցվածքի ընդհանուր շրջագծի մեջ։
Կուսակցության 15-րդ համագումարն իր վորոշումների մեջ
մանր արդյունաբերության մասին ասում է հետևյալը.
«Հնգամյա պլանը կառուցելիս անհրաժեշտ է
ինկատի ունենալ արհեստային և տնայնագործա-
կան՝ տեղական մանր արդյունաբերության զար-
գացումը, վորպիսին ներկայումս, ծառայելով
վորպես պետական խոշոր արդյունաբերությանը
միանգամայն անհրաժեշտ լրացնող միավոր, ոժան-
դակում է ապրանքային դեֆիցիտի վերացմանը և
մեղմացնում գործազրկությունը։ Անհրաժեշտ է
ինկատի ունենալ մտցնելու պետական և կոոպերա-
տիվ օրգանների ազդեցության շրջագծի մեջ այս

արդյունաբերությունը, մանր արդյունաբերական արտադրողների կոոպերացումը, արդյունաբերության միացումներն ու ռացիոնալացումը և նրանց նվաճել մասնավոր գնորդից, վաշխառուից ու միջնորդից։

Անհրաժեշտ է տնայնագործների կոոպերացման տեմպն ուժեղացնել, առանձնապես այն ձեռնարկներում, ուր մինչև այժմ էլ մասնավոր կապիտալի ազդեցությունն ուժեղ է. ուժեղացնել կոոպերացված տնայնագործների միջոցները (փայավճարներ, հատուկ մասնատրություններ, ավանդներ և այլն) տնայնագործական արդյունաբերության մեջ ներգրավելու աշխատանքը։ Հնդամյա պլանը կազմելիս առանձնակի ուշադրություն պետք է դարձվի ծայրագավառների տնայնագործական և մանր արդյունաբերության զարգացման, մասնավորապես ազգային հանրապետությունների և շրջանների վրա»։

2. ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ, ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռեկոնստրուկցիա յեվ նոր խնդիրներ.—Անցնելով նախապատերազմյան շրջանից, խորհրդային տնտեսությունը իր բոլոր բնագավառներում և ասպարեզներում անցել է նոր արդյունաբերական շինարարության։ Նախորդ գլուխներից մեկում արդեն խոսվեց այն մասին, վոր վերականգնումից մենք անցել ենք ռեկոնստրուկցիային (վերակառուցմանը)։ Նոր, ռեկոնստրուկցիայի շրջանը լայն հնարավորություններ է բացում ինդուստրացման բնագավառում։ Յուրաքանչյուր տարի մենք ավելի շատ ենք կառուցելու նոր խոշոր ձեռնարկներ։ Կապիտալիզմից ժառանգություն մնացած հին ձեռնարկների դիմաց, նոր գործարաններն ու ֆաբրիկները, էլեկտրոկայաններն ու շախտաները պետք է կառուցվեն տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա, վոր թեթևացնում է բանվորի աշխատանքը, բարձրացնում նրա արտադրողականությունը։

Նոր արդյունաբերական շինարարության (կամ ինչպես ընդունված է ասել—կապիտալ շինարարության) գործը արտակարգ կարևոր և միաժամանակ դժվարին գործ է։ Մենք տեխնիկական ուժեր և նորագույն տեխնիկայի հետ լավ ծանոթ մարդիկ շատ քիչ ունենք։ Կապիտալ կառուցումների ասպարեզում քիչ թերությունների չենք հանդիպում։ Յերբեմն այն չեն կառուցում, ինչ վոր պետք է։ Յերբեմն չեն կառուցում այնպես, ինչպես անհրաժեշտ է։ Հազվագյուտ չեն դեպքերը, յերբ այս կամ այն ձեռնարկը չեն կառուցում այնտեղ, վորտեղ պետք է։ Նման սխալներն անխուսափելի յեն յուրաքանչյուր նոր գործի մեջ։ Սակայն այդ թերություններից ազատվել կարելի յե միայն այն դեպքում, յերբ վողջ բանվորական մասսան և վողջ խորհրդային հասարակայնությունը սուր հայացքով կհետևեն կապիտալ շինարարության ընթացքին։ Պետք է յերևան հանել շինարարության յուրաքանչյուր պակասությունը։ Ամեն տեսակի վրիպումը պետք է հայտնաբերել և ուղղել։

Լայն ռեկոնստրուկցիան աստիճանաբար վերացնում է մեր արդյունաբերական յետամնացությունը։ Նոր ձեռնարկությունները պետք է հներից ավելի լավ և տնտեսող աշխատեն։ Նոր ձեռնարկության մեջ բանվորի աշխատանքի արտադրողականությունն ավելի բարձր է լինելու։ Հետևաբար և այդ ձեռնարկների արտադրանքը ավելի եժան է լինելու։

Այսպիսով ռեկոնստրուկտիվ շրջանը լայն հնարավորություններ է բաց անում աշխատավորական մասսաների դրության լավացման ուղղությամբ։ Նոր տեխնիկային անցնելը պետք է ավելի ու ավելի թեթևացնի բանվորի աշխատանքը։ Արտադրանքի ավելացումը հնարավորություններ է ստեղծում աշխատավարձի ավելացման համար։ Իսկ ապրանքի ինքնարժեքի իջեցումը հնարավորություն կտա իջեցնելու գները։

Մեզ մոտ ապրանքների գներն անհամեմատ թանգ են։ Այս բանը մասամբ բացատրվում է առևտրի պակասությամբ, սակայն գլխավոր պատճառն այն է, վոր մեր հին, մաշված ձեռնարկները եժան ապրանք արտադրելու հնարավորությունից զուրկ են։ Շատ բարձր են արդյունաբերության ծախքերը, ինքնարժեքը։ Այս պատճառով էլ մեզ մոտ արդյունաբերական ապրանքների գներն ավելի թանգ են քան արտասահմանում։

Արդյունաբերական թանկ գները խոչընդոտ են հանդիսանում աշխատավոր գյուղացիության հետ ունեցած սմիչկայի ամրապնդմանը: Այդ պատճառով էլ գների իջեցումը մեր վողջ տնտեսական քաղաքականության մարտական խնդիրն է հանդիսանում: Կուսակցությունն ու խորհ. իշխանությունն այս բնագավառում յեռանդուն միջոցների յեն դիմում: Անխնա կերպով պետք է վերացվեն բոլոր այն ավելորդ ծախքերը, վորոնք ավելացնում են ապրանքի գինը: Պետք է բարձրանա աշխատանքի արտադրողականությունը, վորը ապահովում է աշխատավարձի ավելացման հնարավորությունը: Աշխատավորական մասսաների ակտիվ աջակցությամբ վերջին տարիների ընթացքում վորոշ հաջողություններ յեն ձեռք բերվել արդյունաբերական ապրանքների գների իջեցման ասպարեզում: Բայց զգալի կերպով գինը իջեցնել հնարավոր է միայն այն դեպքում, յերբ զգալի չափերով կիջեցվի ապրանքների ինքնարժեքը: Մեր արդյունաբերության վերակառուցումը միայն՝ ամբողջությամբ և լրիվ կերպով կարող է լուծել այդ խնդիրը:

Արտադրության ռացիոնալացումը. — *Ռեկոնստրուկցիայի հետ կապված, մեր արդյունաբերության առաջ ռացիոնալացման բնագավառում խոշոր խնդիրներ են դրվում: Արտադրությունը ռացիոնալացման յենթարկել—նշանակում է ավելի լավ օգտագործել մարդկային կենդանի աշխատանքը, մեքենաներն ու նյութեղենը:*

Հին, կապիտալիստական Ռուսաստանում այդ տեսակետից արդյունաբերությունը շատ ցածր մակարդակի վրա յեր կանգնած: Ռուսական արդյունաբերությունը վոչ միայն տեխնիկապես, այլ և իր կառուցվածքի և աշխատանքի կազմակերպման տեսակետից յետ եր մնում արտասահմանից: Այդ պատճառով էլ Ռուսաստանում բանվորի արտադրանքը ավելի ցածր եր գերմանական կամ անգլիական բանվորի արտադրանքից: Մեզ մոտ միայն ներկայումս է, վոր մանածագործարանում բանվորը կարողանում է հետևել 4 դազգահների, իսկ Անգլիայում բանվորը հետևում է 16, Ամերիկայում մի քանի ձեռնարկների մեջ մինչև անգամ 96 դազգահի: Իհարկե, արտասահմանի արդյունաբերության տեխնիկ-

կան առավելությունները խոշոր նշանակություն ունեն: Այնուամենայնիվ, մեր տեխնիկայի պայմաններում էլ շատ բան կարելի յե անել արտադրության ավելի լավ կազմակերպման և ռացիոնալացման համար:

«Մեր արտադրողականությունը շատ ցածր է. սա փաստ է... Առաջավոր ազգերի հետ համեմատած՝ ռուս մարդը վատ աշխատող է: Աշխատել սովորել — այս խնդիրը խորհրդային իշխանությունը պետք է ժողովրդի առաջ դնի լայն իմաստով» (Լենին):

Ինչպես հարկն է աշխատել սովորել, ավելի լավ կազմակերպել աշխատանքը, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել կարողանալ,—սա այնքան էլ հեշտ խնդիր չէ: Ներկայումս, սակայն, սա Խորհրդային Միության տնտեսական հիմնական խնդիրներից մեկն է: Արտադրության ռացիոնալացումը մեզ հնարավորություն կտա թեթև ծախսումների միջոցով բարձրացնել մշակույթը և եժանացնել արդյունաբերական ապրանքների ինքնարժեքը: Արտադրության ռացիոնալացումն այսպիսով բաց է անում աշխատավարձի ավելացման, բանվորական օրվա կրճատման, բանվորների և աշխատավոր գյուղացիների դրության բարելավման և մեր տնտեսության հետագա զարգացման ուղին:

Աշխատանքներն այս բնագավառում շատ անհրաժեշտ են: Մենք ձեռնարկներում սովորաբար աշխատում ենք դեռևս մեծ մասամբ հին ձևով, չմտածելով արտադրության լավացման մասին: Բանվորական վողջ մասսան իր առաջ պետք է դնի այս խնդիրը: Հազվագյուտ չէ, վոր յերբեմն աշխատանքի հին մեթոդների թեթև փոփոխությունը շատ օգտակար է լինում. բարձրացնում է արտադրանքը և հազարավոր ու տասնյակ հազարավոր ռուբլիների տնտեսողություն է բերում: Բանվորն ամենից լավ գիտե արտադրության մանրունքները: Նա այդ բոլորի հետ բախվում է ամեն օր: Յեվ զարմանալի չէ, վոր նա կարող է տեսնել այնպիսի թերություններ, վորոնք կառավարչի և ինժեների աչքին չեն ընկնում:

Արտասահմանում և մասնավորապես Ամերիկայում ավելի փորձված կապիտալիստները ուշադրությամբ են լսում փորձված բանվորների առաջարկներն արտադրության բարելավման մասին և ընդունված առաջարկների համար տալիս են փոքրիկ պարգևներ: Խորհրդային Միության մեջ, ուր բանվոր դասակարգն է հանդի-

սանում վողջ արդյունաբերության տերը, այստեղ բացվում են անսովոր մեծ հնարավորություններ։ Արտադրական խորհրդակցություններում, պատի թերթերում և մեր մամուլում բանթղթակիցների արած դիտողությունների միջոցով բանվոր դասակարգն ամեն որ արտադրության բարելավման գործում աշխույժ մասնակցություն է ցույց տալիս. բանվորական գյուտերին պետք է լայն տեղ տալ և բազմակողմանի կերպով խրախուսել ու աջակցել։

Մեր պետական ձեռնարկների աշխատանքի մեջ դեռևս գլուխ մոլորելու, անճարակության կամ ուղղակի շահագործության դեպքերը հազվագյուտ չեն։ Վողջ բանվորական մասսաների աչալուրջ հսկողությունը միայն կարող է պայքարել բոլոր այդ թերությունների դեմ։ Խորհրդային Միության մեջ ամենուրեք ավելի ակտիվ բանվորները իրենց ձեռնարկներին տիրոջ պես են վերաբերվում։ Նրանք համարձակ կերպով հանդես են գալիս ամեն տեսակի չարաշահումների դեմ, նրանք յերևան են հանում սխալներն ու վոճրագործ անփութությունը։ Բանվորական մասսաների այդպիսի գործնական և համարձակ ինքնաքննադատությունը միայն կարող է ապահովել բոլոր հիվանդագին յերևույթների և մեր արդյունաբերության բարձրացման բոլոր խոչընդոտների վերացումը։

Ռացիոնալացման ուղիները. — Իհարկե, ամեն տեղ դեռևս չեն կիրառվել ռացիոնալացման համար անհրաժեշտ այդ թեթև միջոցները։ Յերբեմն նրանց չի կարելի կիրառել տեխնիկական կամ տնտեսական խոչընդոտների պատճառով։ Բայց հազվագյուտ են այն դեպքերը, յերբ տնտեսական հիմնարկների ու բանվորական մասսաների միացյալ ուժերով նման խոչընդոտները վերացվել են։ Յուրաքանչյուր ձեռնարկ պետք է զբաղվի միայն վորոշ տեսակի արտադրանքների մշակումով։ Միևնույն գործարանում յեթե պատրաստվեն շոգեմեքենաներ, հեծանիվներ, գրչահատներ, մեխեր և գործող մեքենաներ,—սրանից ոգուտ չի կարելի ստանալ։ Նշանակում է մեզ անհրաժեշտ է մասնագիտացում։ Իսկ այդ բանի համար անհրաժեշտ է վերացնել արտադրանքի ավելորդ տեսակները։ Հայտնի յե, վոր շուկայի համար արտադրվում են հազար հինգ հարյուր զանազան տեսակի գրչահատներ, իսկ զանազան տեսակի ճաշակի տերերին բավարարելու համար հազարն էլ բավական է։ Մեր ռետինի արդյունաբերությունը արտադրում է մոտ 200 տեսակի ավտոմոբիլների շիներ, իսկ արտասահմանյան

գործարաններն արտադրում են 20—30 տեսակի։ Տեսակների քանակի կրճատումը շատ եժանացնում է արտադրությունը։ Ավտոմոբիլների հայտնի ամերիկական գործարանատեր Ֆորդը իր հակառակորդ մրցակիցներին հաղթեց գլխավորապես նրանով, վոր սկսեց արտադրել ավտոմոբիլների միայն մի տեսակը։ Յեվ այդ տեսակն ամենից հարմարն հանդիսացավ մասսայական սպառողի համար։ Միաժամանակ նա ամենից եժանագինն էր, վորովհետև Ֆորդը իր ավտոմոբիլներն սկսեց արտադրել մեծ քանակությամբ։ Ֆորդի ավտոմոբիլի յուրաքանչյուր պտուտակը շատ հեշտ է փոխել, վորովհետև Ֆորդի գործարանները հատկապես իրենց ավտոմոբիլների համար պահեստի մասեր են պատրաստում։ Արդյունաբերության նման տիպի արտադրությունը կոչվում է ստանդարտ։ Սահմանափակ քանակությամբ միևնույն տեսակի արտադրության անցումն ստանդարտիզացիա յե կոչվում։ Ստանդարտիզացիան խոշոր ոգուտներ է բերում։ Նա եժանացնում է արտադրությունը։ Նա ապահովում է արտադրանքի լավ վորակը։ Զանազան մասերի հեշտ ճարվելու պատճառով՝ ստանդարտիզացիան առանձնապես կարևոր է մեքենաների, տրակտորների, հեծանիվների և նման ապրանքների արտադրության համար, վորոնց մաշված մասերը շատ հաճախ անհրաժեշտ է լինում փոխել։

Արտադրությունն անչափ հեշտացնում է անընդհատ թափով տարվող աշխատանքը (այսպես կոչված կոնվեյեր միջոցը)։ Այդ միջոցի ժամանակ բանվորն իր տեղն է մնում, իսկ մշակվող առարկան շարժվում է անընդհատ, ժապավենի վրայով։ Յուրաքանչյուր բանվոր կատարելու յե վորոշ գործողություն—հագցնել վորևե մասը, ամրացնել նրան, պտտեցնել պտուտակը և այլն։ Մինչև վերջին րոպեն աշխատանքը հաշված է։ Յուրաքանչյուրն իր գործը պետք է կատարի ժամանակին։ Միաժամանակ յուրաքանչյուր աշխատողին բաժին է ընկնում միայն մի թեթև ոպերացիա (գործողություն)։ Նա սովորում է իր գործը և կարողանում է վարժվել այդ գործում ավելի, քան թե առաջ էր։

Այսպես, որինակ, Լենինգրադում ընկ. Վոլոդարսկու անվան կարուձևի գործարանում՝ յոթժամյա բանվորական որվա կիրառման հետ կապված՝ վողջ արտադրությունը վերակառուցված է։ Կոստյում կարելը նախկին 70-ի փոխարեն բաժանված է 125 ոպերացիաների (առանձին գործողությունների)։

սանում վողջ արդյունաբերության տերը, այստեղ բացվում են անսովոր մեծ հնարավորություններ։ Արտադրական խորհրդակցություններում, պատի թերթերում և մեր մամուլում բանթղթակիցների արած դիտողությունների միջոցով բանվոր դասակարգն ամեն որ արտադրության բարելավման գործում աշխույժ մասնակցություն է ցույց տալիս. բանվորական գյուտերին պետք է լայն տեղ տալ և բազմակողմանի կերպով խրախուսել ու աջակցել։

Մեր պետական ձեռնարկների աշխատանքի մեջ դեռևս գլուխ մոլորելու, անճարակության կամ ուղղակի շահագործության դեպքերը հազվագյուտ չեն։ Վողջ բանվորական մասսաների աչալուրջ հսկողությունը միայն կարող է պայքարել բոլոր այդ թերությունների դեմ։ Խորհրդային Միության մեջ ամենուրեք ավելի ակտիվ բանվորները իրենց ձեռնարկներին տիրոջ պես են վերաբերվում։ Նրանք համարձակ կերպով հանդես են գալիս ամեն տեսակի չարաշահումների դեմ, նրանք յերևան են հանում սխալներն ու վոճրագործ անփութությունը։ Բանվորական մասսաների այդպիսի գործնական և համարձակ ինքնաքննադատությունը միայն կարող է ապահովել բոլոր հիվանդագին յերևույթների և մեր արդյունաբերության բարձրացման բոլոր խոչընդոտների վերացումը։

Ռացիոնալացման ուղիները. — Իհարկե, ամեն տեղ դեռևս չեն կիրառվել ռացիոնալացման համար անհրաժեշտ այդ թեթև միջոցները։ Յերբեմն նրանց չի կարելի կիրառել տեխնիկական կամ տնտեսական խոչընդոտների պատճառով։ Բայց հազվագյուտ են այն դեպքերը, յերբ տնտեսական հիմնարկների ու բանվորական մասսաների միացյալ ուժերով նման խոչընդոտները վերացվել են։ Յուրաքանչյուր ձեռնարկ պետք է զբաղվի միայն վորոշ տեսակի արտադրանքների մշակումով։ Միևնույն գործարանում յեթե պատրաստվեն շոգեմեքենաներ, հեծանիվներ, գրչահատներ, մեխեր և գործող մեքենաներ,—սրանից ոգուտ չի կարելի ստանալ։ Նշանակում է մեզ անհրաժեշտ է մասնագիտացումն։ Իսկ այդ բանի համար անհրաժեշտ է վերացնել արտադրանքի ավելորդ տեսակները։ Հայտնի յե, վոր շուկայի համար արտադրվում են հազար հինգ հարյուր զանազան տեսակի գրչահատներ, իսկ զանազան տեսակի ճաշակի տերերին բավարարելու համար հազարն էլ բավական է։ Մեր ռետինի արդյունաբերությունը արտադրում է մոտ 200 տեսակի ավտոմոբիլների շիներ, իսկ արտասահմանյան

գործարաններն արտադրում են 20—30 տեսակի։ Տեսակների քանակի կրճատումը շատ էժանացնում է արտադրությունը։ Ավտոմոբիլների հայտնի ամերիկական գործարանատեր Ֆորդը իր հակառակորդ մրցակիցներին հաղթեց գլխավորապես նրանով, վոր սկսեց արտադրել ավտոմոբիլների միայն մի տեսակը։ Յեվ այդ տեսակն ամենից հարմարն հանդիսացավ մասսայական սպառողի համար։ Միաժամանակ նա ամենից էժանագինն էր, վորովհետև Ֆորդը իր ավտոմոբիլներն սկսեց արտադրել մեծ քանակությամբ։ Ֆորդի ավտոմոբիլի յուրաքանչյուր պտուտակը շատ հեշտ է փոխել, վորովհետև Ֆորդի գործարանները հատկապես իրենց ավտոմոբիլների համար պահեստի մասեր են պատրաստում։ Արդյունաբերության նման տիպի արտադրությունը կոչվում է ստանդարտ։ Սահմանափակ քանակությամբ միևնույն տեսակի արտադրության անցումն ստանդարտիզացիա յե կոչվում։ Ստանդարտիզացիան խոշոր ոգուտներ է բերում։ Նա էժանացնում է արտադրությունը։ Նա ապահովում է արտադրանքի լավ վորակը։ Զանազան մասերի հեշտ ճարվելու պատճառով՝ ստանդարտիզացիան առանձնապես կարևոր է մեքենաների, տրակտորների, հեծանիվների և նման ապրանքների արտադրության համար, վորոնց մաշված մասերը շատ հաճախ անհրաժեշտ է լինում փոխել։

Արտադրությունն անչափ հեշտացնում է անընդհատ թափով տարվող աշխատանքը (այսպես կոչված կոնվեյեր միջոցը)։ Այդ միջոցի ժամանակ բանվորն իր տեղն է մնում, իսկ մշակվող առարկան շարժվում է անընդհատ, ժապավենի վրայով։ Յուրաքանչյուր բանվոր կատարելու յե վորոշ գործողություն—հագցնել վորևե մասը, ամրացնել նրան, պտտեցնել պտուտակը և այլն։ Մինչև վերջին րոպեն աշխատանքը հաշված է։ Յուրաքանչյուրն իր գործը պետք է կատարի ժամանակին։ Միաժամանակ յուրաքանչյուր աշխատողին բաժին է ընկնում միայն մի թեթև ոպերացիա (գործողություն)։ Նա սովորում է իր գործը և կարողանում է վարժվել այդ գործում ավելի, քան թե առաջ էր։

Այսպես, որինակ, Լենինգրադում ընկ. Վոլոդարսկու անվան կարուձևի գործարանում՝ յոթժամյա բանվորական որվա կիրառման հետ կապված՝ վողջ արտադրությունը վերակառուցված է։ Կոստյում կարելը նախկին 70-ի փոխարեն բաժանված է 125 ոպերացիաների (առանձին գործողությունների)։

Կոստյում կարելու ժամանակը 800 րոպեյից իջեցված է 384-ի։ Կարվող կոստյումների թիվը ավելանում է օրեկան 350-ով, իսկ վերարկուներինը — 100-ով։

Մեր արտադրության ցավոտ կողմերից մեկն էլ հանդիսանում է բանվորական օրվա ոչ լրիվ օգտագործումը։ Մի շարք գործարաններում հետազոտություն է կատարվել և պարզվել է, որ բանվորական օրվա միայն կես մասն է օգտագործվում արտադրական աշխատանքների համար։ Օրվա մեկ քառորդը և նույնիսկ ավելին գնում է օժանդակող աշխատանքների համար։ Մոտավորապես քառորդ էլ կորչում է կանգնումների, նյութի ուշացման, գործիքներ փնտրելու և այլն պատճառներով։ Նման թերի ծանրաբեռնումը և ոչ մի օգուտ չի բերում բանվորին։ Ավելի շուտ նա թուլանում է դես ու դեն վազելով և անտեղի սպասումներով։ Իսկ դա սպանիչ է արդյունաբերության համար։ Այստեղից էլ պարզ է, որ պետք է դնել բանվորական օրվա կանոնավորման խնդիրը, մանավորապես ներկայումս, երբ անցնում ենք 7-ժամյա բանվորական օրվան։

Կապիտալիստական յեվ սոցիալիստական ռացիոնալացում.— Խորհրդային Միության մեջ կիրառվող ռացիոնալացումը պարզ է որ սուր կերպով տարբերվում է կապիտալիստական ռացիոնալացումից։ Խոշոր կապիտալիստական յերկրներում պատերազմից հետո [ձեռնարկատերերն հևհև ընկել են իրենց արտադրությունը եժանացնելու ու բարելավելու յետևից։ Դրանով նրանք ուզում են ջարդել իրենց ախոյաններին, վերադարձնել կորցրած շուկաները կամ ամրապնդել նոր նվաճումները։ Կապիտալիստական ռացիոնալացումը կիրառվում է բանվոր դասակարգի վրա գործադրվող ճնշումի ուժեղացումով։ Տեխնիկական կատարելագործությունները նույնիսկ, նրանք օգտագործում են առաջին հերթին նրա համար, որպեսզի ուժեղացնեն բանվորների շահագործումը։ Այսպես, օրինակ, անընդհատ թափով տարվող աշխատանքն օգտագործվում է նրա համար, որպեսզի ստիպեն բանվորներին ավելի արագացնել իրենց գործողությունները, լարվելով մինչև վերջին սահմանը։ Ֆորդի բանվորները պատմում են, որ բանվորական օրվանից հետո նրանք և ոչ մի բանի մասին մտածելու ընդունակ չեն, — կատաղի աշխատանքը այդ աստիճան շշմեցնում է նրանց։

կապիտալիզմի օրոք արտադրության բարելավումը անխուսափելիորեն հանգում է այն հետևանքին, որ շատ բանվորներ, ավելորդ լինելով, փողոց են շպրտվում։ Նրանց վիճակված է յերկար տարիների գործազրկություն։ Կապիտալիստներն, իհարկե, գործ չունեն գործազուրկների վիճակի հետ։ Աշխատողներից և ոչ մեկը վաղվա օրվա վրա հույս չունի։ Կապիտալիստական ռացիոնալացումը հասցնում է աշխատավարձի իջեցման։

Խորհրդային պայմաններում ռացիոնալացումը բոլորովին ուրիշ պայմաններում է կիրառվում։ Բանվորական օրվա կարգավորումը, ավելի գիտակից և ուշադիր աշխատանքը միանգամայն անհրաժեշտ են մեր արդյունաբերության համար։ Բայց և բանվորական ուժի և ոչ մի շահագործման մասին մեզ մոտ խոսք չի կարող լինել։ Ռացիոնալացումն, ընդհակառակը, հնարավորություն է ստեղծում աշխատանքի պայմանները բարելավելու։ Ռացիոնալացման պտուղներն այնտեղ ամբողջությամբ ընկնում են կապիտալիստների ճանկը։ Մեզ մոտ, ընդհակառակը, արտադրության բարելավումը տանում է դեպի աշխատավարձի հավելումը, բանվոր դասակարգի վիճակի բարվոքումը, սոցիալիստական արդյունաբերության ամրապնդումը։

«Նոր տեխնիկայի կիրառումը, աշխատանքի կազմակերպման բարելավումը, բանվորական ուժի վորակի բարձրացումը և բանվորական օրվա կրճատման հետ միասին վերջինիս խտացումը — սրանք են ռացիոնալացման պրոցեսի գլխավոր բաղկացուցիչ մասերը։ Այս ասպարիզում ձեռք առնված յեռանդուն միջոցների հետևանքները, հնարավորություն տալով ավելացնելու աշխատավարձը և բանվոր դասակարգի կենցաղային մակարդակի հետագա բարձրացումը, միաժամանակ պետք է իջեցնեն արտադրված միավորի վրա կատարված ծախքը, նվազեցնեն նրանց ինքնարժեքը, բարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը, գների իջեցման համար հաստատուն բազա տան» (Կուսակցության 15-րդ համագումարի վորոշումներից)։

Յերբեմն ռացիոնալացումը խորհրդային պայմաններում բանվորների առանձին խմբերին զրկանք է պատճառում։ Յեր-

բեմն ռացիոնալացման՝ հետևանքով բանվորական ուժի մի մասը հնարավոր չէ օգտագործել նույն ձեռնարկության մեջ։ Նման դեպքերում բոլոր միջոցները ձեռք են առնվում՝ ավելորդ բանվորական ձեռներն ուրիշ հիմնարկություններ տեղափոխելու և նրանց ուրիշ աշխատանք տալու ուղղությամբ։ Նշանակում է այս զրկանքները ժամանակավոր բնույթ են կրում, մանավանդ վոր ռացիոնալացումը արագացնում է արդյունաբերության ընդհանուր զարգացումը։

Արտադրության բարելավմանը պետք է օժանդակություն ցույց տան բոլոր պրոլետարական կազմակերպությունները, և մասնավորապես, պրոֆմիությունները։ Արդյունաբերության ռացիոնալացումը բանվոր դասակարգի համար կենսական խնդիր է։ Պրոֆմիությունների աշխույժ մասնակցությունն առանձնապես կարևոր է այս գործում։ Պրոֆմիություններն արտադրության խնդիրները մասսաների ուշադրության կենտրոնը պետք է դարձնեն, հրահրեն բանվորների ինքնագործնեյությունը, օգնեն բանվորների առաջարկությունների օգտագործմանը, հետևեն նրանց կիրառմանը կյանքի մեջ։ Պրոֆմիությունները բանվորների մեջ պետք է դաստիարակեն — գիտակցական վերաբերմունք ցույց տալ դեպի արտադրությունը և նրա կարիքները։

Աշխատավարձը ԽՍՀՄ-յան մեջ. — Մեր պետական սոցիալիստական արդյունաբերության մեջ աշխատավարձը բոլորովին ուրիշ կերպ է սահմանվում, քան կապիտալիստական գործարաններում ու ֆաբրիկներում։ Բանվոր դասակարգն այնտեղ համառ պայքարի ընթացքում պետք է ձեռք բերի իր աշխատավարձը իր թշնամի կապիտալիստից։ Նրանց շահերը հակառակ են միմյանց. — վորքան բարձր է բանվորի աշխատավարձը, նույնքան քիչ է վարձողի ստացած շահը, և ընդհակառակը։ Դրությունը մեզ մոտ բոլորովին այլ է։ Մեզ մոտ էլ, իհարկե, աշխատավարձի բարձրացման համար միայն բարի ցանկությունը բավական չէ։ Աշխատավարձը բանվորի աշխատանքով ստեղծվող արժեքից ավելի չի կարող լինել։ Յեվ այդ արժեքն էլ, ինչպես բոլորին հասկանալի յէ, ամբողջությամբ չի կարելի տալ աշխատողին վորպես աշխատավարձ։

Մեր գործարաններում արտադրվածի մի մասը գնում է պրոլետարական պետության ծախքերը ծածկելու ուղղու-

թյամբ — Կարմիր բանակը պահելու, յերկիրը կառավարելու և այլն։ Բանվորի զուտ արտադրանքի մի մասն էլ պետք է գնա արդյունաբերության լայնացման, սոցիալիստական շինարարության կարիքների համար։ Միայն այս յերկուսի դուրս գալուց հետո բանվորը կարող է աշխատավարձի ձևով ստանալ այն, ինչ վոր ստեղծել է իր աշխատանքով։ Բայց բանը նրանումն է, վոր այդ գանձումների չափը վորոշում է ինքը բանվոր դասակարգը, հանձինս իր պրոլետարական պետության։ Այդ գանձումները գնում են վոչ թե կապիտալիստների գրպանը, այլ պրոլետարական պետության ամրապնդման և կառուցվող սոցիալիզմի համար։ Մեր տնտեսության զարգացմանը զուգընթաց՝ աշխատավարձը մեզ մոտ անընդհատ աճում է։

Աշխատավարձը, միջին հաշվով, մեր արդյունաբերության մեջ հասավ նախապատերազմյան չափին այն ժամանակ, յերբ մենք դեռ չէյինք հասել նախապատերազմյան մակարդակին։ Յեվ այս տարբերությունը տեղի ունեցավ՝ բանվորական օրվա նախապատերազմյան 10—12 ժամի փոխարեն 8-ժամյա բանվ. օր կիրառելու հետևանքով։ Առանձնապես բարձրացավ բանվորական այն խմբերի աշխատավարձը, վորոնք ցարիզմի օրով խղճուկ աշխատավարձ էյին ստանում։ Կառուցողների և մանածագործների աշխատավարձը նախապատերազմյանից անհամեմատ բարձր է։ Իհարկե, մեզ մոտ բանվորի աշխատավարձը դեռևս ցածր է. շատ անգամ նա չի բավարարում մասսաների աճող պահանջը ծածկելու համար։ Մեծ խոչընդոտ է հանդիսանում գործազրկությունը։ Ծանր են պրոլետարիատի բնակարանային պայմանները։ Թաքցնել կամ ժխտել այս բոլորը չի կարելի, ընդհակառակը, ճշմարտությունը պետք է տեսնել պարզ, չթաքցնելով աղքատության և յերկար տարիների քայքայման այդ հետևանքները։ Սակայն մենք շատ արագ ենք ազատվում անցյալի ժառանգությունից։ Մենք քայլ առ քայլ դուրս ենք գալիս աղքատությունից։ Յեվ գլխավորն այն է, վոր բանվոր դասակարգն ինքն է յերկրի բոլոր հարստությունների տերը, և հաստատուն քայլերով գնում է սոցիալիստական շինարարության ուղիյով։

Վերջին յերեք տարվա ընթացքում բանվորների աշխատավարձն ավելացել է շատ արագ։ 1924—25 թ. հիշյալ աշխատավարձն աճել է 21%-ով, 1925—26 թ. 10%-ով, 1926—27 թվին 13%-ով։ Իհարկե, ներկայումս էլ ԽՍՀՄ-յան մեջ բանվորն ավելի

բեմն ռացիոնալացման՝ հետևանքով բանվորական ուժի մի մասը հնարավոր չի ոգտագործել նույն ձեռնարկության մեջ։ Նման դեպքերում բոլոր միջոցները ձեռք են առնվում՝ ավելորդ բանվորական ձեռներն ուրիշ հիմնարկություններ տեղափոխելու և նրանց ուրիշ աշխատանք տալու ուղղությամբ։ Նշանակում է այս զրկանքները ժամանակավոր բնույթ են կրում, մանավանդ վոր ռացիոնալացումը արագացնում է արդյունաբերության ընդհանուր զարգացումը։

Արտադրության բարելավմանը պետք է ոժանդակություն ցույց տան բոլոր պրոլետարական կազմակերպությունները, և մասնավորապես, պրոֆմիությունները։ Արդյունաբերության ռացիոնալացումը բանվոր դասակարգի համար կենսական խնդիր է։ Պրոֆմիությունների աշխույժ մասնակցությունն առանձնապես կարևոր է այս գործում։ Պրոֆմիություններն արտադրության խնդիրները մասսաների ուշադրության կենտրոնը պետք է դարձնեն, հրահրեն բանվորների ինքնագործնեյությունը, ոգնեն բանվորների առաջարկությունների ոգտագործմանը, հետևեն նրանց կիրառմանը կյանքի մեջ։ Պրոֆմիությունները բանվորների մեջ պետք է դաստիարակեն — գիտակցական վերաբերմունք ցույց տալ դեպի արտադրությունը և նրա կարիքները։

Աշխատավարձը ԽՍՀՄ-յան մեջ. — *Մեր պետական սոցիալիստական արդյունաբերության մեջ աշխատավարձը բոլորովին ուրիշ կերպ է սահմանվում, քան կապիտալիստական գործարաններում ու ֆաբրիկներում։ Բանվոր դասակարգն այնտեղ համառ պայքարի ընթացքում պետք է ձեռք բերի իր աշխատավարձը իր թշնամի կապիտալիստից։ Նրանց շահերը հակառակ են միմյանց. — վորքան բարձր է բանվորի աշխատավարձը, նույնքան քիչ է վարձողի ստացած շահը, և ընդհակառակը։ Դրությունը մեզ մոտ բոլորովին այլ է։ Մեզ մոտ ել, իհարկե, աշխատավարձի բարձրացման համար միայն բարի ցանկությունը բավական չե։ Աշխատավարձը բանվորի աշխատանքով ստեղծվող արժեքից ավելի չի կարող լինել։ Յեվ այդ արժեքն ել, ինչպես բոլորին հասկանալի յե, ամբողջությամբ չի կարելի տալ աշխատողին վորպես աշխատավարձ։*

Մեր գործարաններում արտադրվածի մի մասը գնում է պրոլետարական պետության ծախքերը ծածկելու ուղղու-

թյամբ—Կարմիր բանակը պահելու, յերկիրը կառավարելու և այլն։ Բանվորի զուտ արտադրանքի մի մասն ել պետք է գնա արդյունաբերության լայնացման, սոցիալիստական շինարարության կարիքների համար։ Միայն այս յերկուսի դուրս գալուց հետո բանվորը կարող է աշխատավարձի ձևով ստանալ այն, ինչ վոր ստեղծել է իր աշխատանքով։ Բայց բանը նրանումն է, վոր այդ զանձումների չափը վորոշում է ինքը բանվոր դասակարգը, հանձինս իր պրոլետարական պետության։ Այդ զանձումները գնում են վոչ թե կապիտալիստների գրպանը, այլ պրոլետարական պետության ամրապնդման և կառուցվող սոցիալիզմի համար։ Մեր տնտեսության զարգացմանը զուգընթաց՝ աշխատավարձը մեզ մոտ անընդհատ աճում է։

Աշխատավարձը, միջին հաշվով, մեր արդյունաբերության մեջ հասավ նախապատերազմյան չափին այն ժամանակ, յերբ մենք դեռ չեյինք հասել նախապատերազմյան մակարդակին։ Յեվ այս տարբերությունը տեղի ունեցավ՝ բանվորական որվա նախապատերազմյան 10—12 ժամի փոխարեն 8-ժամյա բանվ. որ կիրառելու հետևանքով։ Առանձնապես բարձրացավ բանվորական այն խմբերի աշխատավարձը, վորոնք ցարիզմի որով խղճուկ աշխատավարձ եյին ստանում։ Կառուցողների և մանածագործների աշխատավարձը նախապատերազմյանից անհամեմատ բարձր է։ Իհարկե, մեզ մոտ բանվորի աշխատավարձը դեռևս ցածր է. շատ անգամ նա չի բավարարում մասսաների աճող պահանջը ծածկելու համար։ Մեծ խոչընդոտ է հանդիսանում գործազրկությունը։ Ծանր են պրոլետարիատի բնակարանային պայմանները։ Թագցնել կամ ժխտել այս բոլորը չի կարելի, ընդհակառակը, ճշմարտությունը պետք է տեսնել պարզ, չթագցնելով աղքատության և յերկար տարիների քայքայման այդ հետևանքները։ Սակայն մենք շատ արագ ենք ազատվում անցյալի ժառանգությունից։ Մենք քայլ առ քայլ դուրս ենք գալիս աղքատությունից։ Յեվ գլխավորն այն է, վոր բանվոր դասակարգն ինքն է յերկրի բոլոր հարստությունների տերը, և հաստատուն քայլերով գնում է սոցիալիստական շինարարության ուղիով։

Վերջին յերեք տարվա ընթացքում բանվորների աշխատավարձն ավելացել է շատ արագ։ 1924—25 թ. հիշյալ աշխատավարձն աճել է 21%-ով, 1925—26 թ. 10%-ով, 1926—27 թվին 13%-ով։ Իհարկե, ներկայումս ել ԽՍՀՄ-յան մեջ բանվորն ավելի

քիչ է ստանում, քան թե, օրինակ, Ամերիկայում։ Բայց չպետք է մոռանանք և այն, վոր Ամերիկայում աշխատավարձը վերջին քսան տարիների ընթացքում աճել է միայն 12%-ով։ Դրան հակառակ, անհամեմատ չափերով աճել է կապիտալիստների շահը։ Մեզ մոտ այլ պատկեր է։ Աշխատանքի արտադրողականության աճման, արտադրության բարելավման, յերկրի հարստությունների աճման հետ միասին աճում է և աշխատավարձը։

Յոթժամյա բանվորական օր. — *Սոցիալիստական շինարարության հսկայական նվաճումներից մեկը հանդիսանում է յոթժամյա բանվորական օրվան անցնելը, վոր իրագործվում է ներկայումս արտադրության ռացիոնալացման հետ միասին։ Յոթժամյա բանվորական օրը աշխարհի բոլոր բանվորներին պարզ կերպով ցույց է տալիս ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրների աշխատանքային դրության միջև յեղած հակադրությունը։ Այսպես, յերկար տարիների պայքարի գնով, բանվորները մի քանի կապիտալիստական յերկրներում կարողացան ձեռք բերել ութժամյա բանվորական օր։ Պատերազմից հետո մի քանի խոշոր յերկրներում բուրժուազիան ստիպված եր 8-ժամյա բանվորական օր հայտարարել։ Բայց հայտարարության հաջորդ օրը կապիտալիստներն սկսեցին հարձակում գործել պրոլետարիատի այդ նվաճումի վրա։ Ներկայումս կապիտալիստական աշխարհում ութժամյա բանվորական օրը շատ հազվագյուտ բան է։ Յեվ հենց այդ ժամանակ Խորհրդային Միության մեջ յոթժամյա բանվորական օր է կիրառվում։*

Յոթժամյա աշխատանքի անցնելը կատարվում է աստիճանաբար, արդյունաբերության յուրաքանչյուր բնագավառի և ձեռնարկության պատրաստ լինելու հետ միասին։ Յոթժամյա աշխատանքի անցնելը բանվորների աշխատավարձի նվազում չպետք է առաջացնի։ Չպետք է ընկնի նաև ձեռնարկության արտադրանքը։ Այդ պատճառով էլ յոթժամյա օրվան անցնելը կապված է ձեռնարկի վողջ աշխատանքների դասավորման բարելավման անհրաժեշտության հետ։

Դա այնքան էլ հեշտ խնդիր չէ, բայց և այնպես մի քանի ձեռնարկներում այդ խնդիրը հաջողությամբ է լուծվել։ Այսպիսով, յոթժամյա օրվան անցնելու գործն անմիջականորեն կապված է ռացիոնալացման կիրառման հետ։

Բանվորական յոթժամյա օրը իր հերթին բացում է՝ արտադրությունը բարելավող մի շարք միջոցների կիրառման հնարավորություններ։ Հաջողվում է բանվորական օրը լիովին և ավելի լրիվ կերպով օգտագործել, աշխատանքի կանոնավորման հետևանքով կրճատվում է յուրաքանչյուր բանվորի իզուր տեղը վատնըվող աշխատանքը։ Յոթ ժամ աշխատելով, բանվորն ավելի ուշադիր է. Նրա աշխատանքի արտադրողականությունը բարձրանում է։

Գրեթե ամեն օր մեր մամուլում տպագրվում են այսպիսի լուրեր. Վիշնեվոլոցկի մանածագործարանում գործն այնպես են դրել, վոր բանվորների աշխատավարձն ավելացել է ամսական 10—12 ռուբլով։ Բանվորուհին նախկին 750 իլիկի փոխարեն բանեցնում է 1.000 իլիկ։ Մշակույթն ավելացել է 25%։

Այնտեղ, վորտեղ հնարավոր է, յոթժամյա աշխատանքի անցնելը կապվում է հերթերի քանակի ավելացման հետ։ Դրանով միանգամից մի քանի նպատակների յենք հասնում։ Ամենից առաջ՝ գործազրկությունը թուլանում է։ Հաշված է, վոր յոթժամյա օրվա կիրառման հետ միասին, նոր բանվորական սմենաների համար առաջիկա 5 տարվա ընթացքում պահանջվելու յե մոտ կես միլիոն մարդ։ Նշանակում է ամբողջ կես միլիոն մարդ աշխատանք են ստանալու։ Յեվ հետո, նոր սմենաների (հերթերի) կիրառումով ավելանալու յե արդյունաբերության արտադրանքը։ Հասկանալի յե, թե դա մեզ այժմ ինչքան անհրաժեշտ է, յերբ ապրանքների պակասություն (ապրանքային սով) է մեզանում տիրում։

Զրույց յերրորդ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՅՈՒՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղի շերտավորումը խորհրդային պայմաններում. — Վոչ վոք չի կարող ժխտել այն, վոր ներկայումս գյուղը նախահեղափոխական գյուղից շատ է տարբերվում։ Միջակ և չքավոր աշխատավոր գյուղացիության դրությունը շատ է փոխված։ Իհարկե, ներկայումս էլ գյուղում կաթնաղբյուրներ չեն հոսում։ Յերկար տարիների աղքատությունը, քայքայվածությունն ու յետամնացությունը միանգամից արմատախիլ անել չես կարող։ Բայց գլխավորն այն է, վոր գյուղը հաստատուն ճանապարհով ընթանում է դեպի լավը, դեպի սոցիալիստական ապագան։ Այդ ուղին բացեց Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Գյուղացու մարմնի վրա սարդի պես նստած կալվածատերը Հոկտեմբերից յետո չքացավ անհետ։ 55 միլիոն հեկտար հողը, վորն առաջ պատկանում եր կալվածատերերին, վանքերին և ցարական ընտանիքին, գյուղացիների ձեռքն անցավ։ Գյուղում հեղափոխությունը հարվածեց նաև կուլակին։ Մոտ 55 միլիոն հեկտար կուլակների հողն անցավ չքավորներին և միջոցներից զուրկ գյուղացիներին։ Առաջվա հողազուրկ գյուղացիները և կալվածատերերի նախկին բատրակները հող ստացան։ Յերևան յեկավ փոքր և շատ մանր տնտեսությունների մի մասսա։ Մինչ հեղափոխությունը գոյություն ունեցող 16 միլիոն գյուղացիական տնտեսությունների փոխարեն ներկայումս ԽՍՀՄ-յան մեջ գոյություն ունեն վոչ պակաս քան 24—25 միլիոն անհատական գյուղացիական տնտեսություններ։ Հեղափոխության առաջին տարիներին առաջացավ «ապակուլակացումն»։ Գյուղը հավասարվեց։ Գյուղացիական զանազան խավերի մեջ գոյություն ունեցող սուր տարբերությունները ուժեղ չափով վոչնչացվեցին։ Գյուղացիությունը «միջակացավ»։ Շատ չքավորներ բարձրացան մինչև միջակների տնտեսության մակարդակը։ Նախկին կուլակներից շատերն էլ դարձյալ «խուզվեցին» մինչև միջակության աստիճանը։ Հեղափոխությունից հետո միջակները գյուղում սկսեցին կազմել գյուղացիության *ճնշող մեծամասնությունը*։

Նեպը գյուղի շերտավորման համար նոր շրջան բացեց։ Մենք արդեն տեսանք, վոր ցրված մանր տնտեսությունների և ազատ առևտրի պայմաններում անխուսափելիորեն ծնվում է կապիտալիզմը, յերևան է գալիս շահագործումը։ Մեկն հարստանում է, մյուսը՝ քայքայվում։ Կապիտալիզմի տիրապետության ժամանակ միջակ գյուղացիության առաջ բաց է միայն այդ ճանապարհը։ Միջակ խավի աստիճանաբար վոչնչացումն և գյուղի սուր շերտավորումն է տեղի ունենում այնտեղ։ Խորհրդային յերկրի պայմաններում գյուղացիական հիմնական մասսաների առաջ բացվում է այլ՝ զարգացման վոչ կապիտալիստական ուղի։ Գյուղում տեղի յե ունենում պայքար զարգացման յերկու ուղիների — հին կապիտալիստական ուղիի և բանվոր դասակարգի իշխանության շնորհիվ յերկրում նոր բացված ուղիի միջև։ Յեվ այն շերտավորումը, վոր տեղի յե ունենում խորհրդային գյուղում, շատ խորը կերպով տարբերվում է կապիտալիզմի տիրապետության որոք տեղի ունեցող շերտավորումից։ Բուրժուազիայի իշխանության որոք վողջ շրջապատն օգնում է կուլակին՝ հարստանալու համար։ Ծանրությունն ամբողջությամբ ընկնում է չքավորի և միջակի վրա, վորոնք վերջիվերջո քայքայվում են։ Յեվ բուրժուական պետության վողջ քաղաքականությունը կառուցված է այնպես, վորպեսզի «ընկնողին աքացի տրվի», վորպեսզի ապահովվի կուլակի, գյուղի կապիտալիստի, խոշոր տնտեսության զարգացումը։

Մեզ մոտ բոլորովին այլ պատկեր է։ Կուլակի զարգացումն առնված է շրջանակների մեջ, մի բան, վորը չի կարող լինել և վոչ մի կապիտալիստական յերկրում։ Կուլակը չի կարող ընտրել և ընտրվել խորհուրդներում, չի կարող իշխանության որգանների միջոցով պետական գործերի ընթացքի վրա ազդեցություն ունենալ։ Նա հող չի կարող գնել. — ամբողջ հողը պետականացված է և հանդիսանում է պրոլետարական պետության սեփականություն։ Աշխատող վարձելու դեպքում էլ նա պետք է պահպանի խորհրդային որենքները, վորոնք բատրակին պաշտպանում են ամեն շահագործումից։ ԽՍՀՄ-յան մեջ հողն արենդով վերցնելն էլ

թուլատրվում է ամենաշատը 6 տարի ժամանակով, և այն էլ այն պայմանով, վոր վարձողը մշակի ինքը, և վոչ ուրիշ աշխատողների միջոցով։ Կապիտալիզմի յերկրներին հակառակ, կուլակը մեր բանկերից վարկ չի ստանում։ Յեթե կուլակն աշխատում է հացի սպեկուլյացիայի միջոցով շահվել, այստեղ էլ խորհրդային իշխանությունը նրա ախորժակի վրա քացախ է ածում։ Կոոպերացիան նեղում է նրան առևտրի մեջ։ Հողային հանձնաժողովում, վորը լուծում է գյուղի բոլոր գործերը, շահագործող կուլակը ձայնի իրավունքով չի ոգտվում։ Խոշոր մեքենաներ ազատ կերպով նա չի կարող գնել, վոր կարողանա շահագործել իր հարևաններին։ Յեվ, վերջապես, կուլակը պետք է ավելի շատ հարկ տա, քան մնացած գյուղացիությունը։ Կուլակն, իհարկե, աշխատում է տիրել գյուղին, յենթարկել իրեն և ղեկավար դառնալ գյուղում։ Բայց մեր պայմաններում այդ բանին հասնելն այնքան էլ հեշտ չէ։ Խորհ. իշխանության քաղաքականությունն ուղղված է կուլակի դեմ, այդ պատճառով էլ կուլակը խորհ. իշխանության անհաշտ թշնամին է։ Միաժամանակ խորհ. իշխանությունը գյուղացիության միջոցներից զուրկ մասսային մեծ ոգնություն է ցույց տալիս, ազատելով նրան կուլակային ճնշումից։ Չքավորն ու միջակը նյութական խոշոր ոժանդակություն են ստանում խորհրդային պետությունից։ Աշխատավորական գյուղական տնտեսության համար կապիտալիզմը գիտե միայն յերկու ուղի.—դեպի վեր—կուլակ-շահագործողների շարքերը, և կամ ներքև—քայքայման միջոցով՝ բատրակ-շահագործվողների շարքերը։ Խորհրդային իշխանությունը բաց է անում բոլորովին նոր ուղի—ընկերական միությունների ուղի, կոոպերացման և կոլլեկտիվացման ուղի, դեպի սոցիալիզմը տանող ուղին։

Այս ուղին հեռավոր է, և շատ տարիներ են պահանջվում։ Խորհրդային իշխանությունն ոգնություն է ցույց տալիս միջոցներից զուրկ գյուղացիական տնտեսությանը՝ նրա առորյա աշխատանքների, նրա զարգացման գործում։ Գյուղացիական տնտեսությունների մեկ յերրորդից ավելին՝ 35 տոկոսը (այս թիվն ընդգրկում է չքավորության հիմնական մասսան) մեզ մոտ հարկից ազատվում է։ Իսկ կապիտալիստական պայմաններում հարկերը շատ արագացնում են մանր տնտեսության քայքայումը։ Մեզ մոտ գյուղացիությանը, վորպես ոգնություն, սերմացու և վարկ է տրվում։ Վերջին տարիների ընթացքում այս ձևով բաց է

թողնված 318 հազար տոննա։ Գյուղացիության չքավոր տնտեսությունների մի մասի սերմացուի պարտքը զեղչված է։ Գյուղատնտ. վարկային ընկերության հիմնարկների միջոցով սակավազոր տնտեսությունների բարձրացման համար 600 միլիոն վարկ է բաց թողնված։ Լծկան չունեցող տնտեսություններին լծկան գնելու համար բաց է թողնված 40 միլիոն ռուբլուց ավելի։ Գյուղ տարված մեքենաների և գործիքների արժեքը հսկայական գումարների յե հասնում։ Դրանք առաջին հերթին տարածվում են ազգաբնակչության չքավոր և միջակ խավերում, տրվում են զեղչով և ապառիկ։ Խորհրդային պետությունը խոշոր միջոցներ է ծախսել գյուղի վրա՝ հողաշինարարության անցկացման, վերաբնակչության կարիքների, գյուղատնտեսական և անասնաբուժական ոգնություն ցույց տալու համար։

Գյուղատնտեսության վերականգնումը.— Իմպերիալիստական և քաղաքացիական կռիվներից հետո յերևաց, վոր գյուղատնտեսությունը մեծ չափով քայքայվել էր։ 1921 թվականի քաղցն ավելի թուլացրեց գյուղի ուժերը։ 1921 թվականից միայն վերքերը սկսեցին բուժվել։ Գյուղացիության հիմնական մասսային պետության ցույց տված ոգնությունը մեծ գործ տեսավ։ Հինգ տարվա ընթացքում գյուղատնտեսությունն ընդհանուր առմամբ հասավ նախապատերազմյան մակարդակին, մի քանի բնագավառներում նախապատերազմյան մակարդակից առաջ անցավ, հացահատիկների տնտեսության մեջ միայն մի քիչ յետ մնալով նախապատերազմյան մակարդակից։

1913 թ. 11,5 միլիոն հեկտար ցանքսերի տարածության դիմաց, 1927 թ. մեր ցանքսերի տարածությունը կազմում էր 114,7 միլիոն հեկտար։ Բայց ներկայումս էլ հացի բերքը, նախապատերազմյանի հետ համեմատած, մի քիչ ավելացել է։ Այն ժամանակ մի հեկտարից ստացվում էր 0,75 (այսինքն յերեք քառորդ) տոննա, իսկ ներկայումս՝ 0,82 (չորս հինգերորդից ավելի) տոննա (տոննան = 62 փթի)։ Իհարկե, պարզ է, վոր այդքանի հասնող բերքն էլ անհամեմատ ցածր է։ Դա Յեվրոպայի առաջավոր յերկրների բերքից 3—4 անգամ ցածր է։ Մենք պետք է հսկայական աշխատանք թափենք գյուղատնտեսության բարելավման ուղղությամբ, մինչև վոր հասնենք բերքի այն չափին, վոր ստացվում է Գերմանիայում, Ամերիկայում և Բելգիայում։

Նախապատերազմյան դրության հետ համեմատած՝ տեխնիկական կուլտուրաների բնագավառում գյուղն առաջ է անցել: Վեց գլխավոր տեխնիկական կուլտուրաների (վուշ, կանեփ, բամբակ, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ և կարտոֆիլ) ցանքադաշտը 1913 թ. կազմում եր մոտավորապես 9,2 միլիոն, իսկ 1927 թ.՝ 12,6 միլիոն հեկտար. — ավելացել է մեկ յերրորդից շատ: Սա մի խոշոր քայլ է դեպի առաջ: Տեխնիկական կուլտուրաները գյուղատնտեսությանը ձեռնտու յեն: Նրանք ավելի ոգուտ են տալիս, քան հացահատիկները, և պահանջում են ավելի շատ աշխատանք: Այս բանը շատ կարևոր է, վորովհետև գյուղում ավելորդ աշխատող ձեռքերը շատ են: Տեխնիկական կուլտուրաների աճումը կարևոր է արդյունաբերության համար ել, վորը այդ հում նյութը վերամշակման է յենթարկում, պատրաստում արդյունաբերական արտադրանքներ: Նախապատերազմյան ժամանակների հետ համեմատած՝ գյուղատնտեսությունը ուրիշ շատ բաներում ել առաջ է գնացել:

Տարածվում են բարձր վորակի սերմերը: Նախապատերազմյան գյուղը տրակտորի անունը չեր ել լսել, իսկ ներկայումս տրակտորների թիվը մի քանի տասնյակ հազարների յե հասնում: Գյուղացու տավարն ազնվանում է: Սակայն մեր գյուղատնտեսության զարգացման լուրջ պակասություն են հանդիսանում հացահատիկների արտադրության յետամնացությունը և գյուղատնտեսության ապրանքայնության ցածր մակարդակը: 1927 — 1927 — 28 տնտեսական տարվա ընթացքում հացամթերման դժվարությունները իրենց հիմքում ունեյին արմատական պատճառ, դա — յերկրում ապրանքային հացի քանակի աճման յետ մնալն եր՝ հացի սպառման պահանջի աճումից: Դրա պատճառը քաղաքների աճումն է, արդյունաբերության զարգացումը և արդյունաբերության մեջ զբաղված բանվորների թվի աճումը: Այդ պատճառով ել հացահատիկների տնտեսության, նրա զարգացման և ապրանքայնության վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել, վորովհետև հացահատիկների արտադրության աճումն անչափ անհրաժեշտ է խորհրդային յերկրի վողջ տնտեսության նորմալ զարգացման համար: Համ. Կոմունիստ. (բ) Կուս. Կենտկոմի հուլիսյան պլենումը (1928 թ.) լայն կերպով դրեց հացահատիկների տնտեսության պրոբլեմը:

Մեր գյուղացիական տնտեսության չարիքը հողաշինարարության բացակայությունն է: Յերբեմն տնտեսատերն ունի տասնյակ հողաշերտեր, վորոնք ցրված են մի քանի վերստ տարածության վրա: Վատ է մանավանդ մեծ գյուղերում, վորտեղ գյուղացին ահագին ժամանակ և աշխատանք է կորցնում, մինչև հասնում է իր մի կտոր հողին: Վերաբաժանումները, տնտեսությունների կտրատվելը մեծ շփոթություն մտցրին հողային գործի մեջ: 1927 թվի վերջին միայն գյուղացիության հողի մեկ յերրորդ մասը յենթարկվեց հողաշինարարության: Խորհ. իշխանությունը ներկայումս վորոշել է առաջիկա տարիների ընթացքում հողաշինարարություն կատարել գյուղացիության տնտեսությունների մեծամասնության համար: Հողաշինարարության կատարումը պետք է ոժանդակի գյուղատնտեսության բարեքավությանը և միաժամանակ հեշտացնի կոլեկտիվ ձևերին անցնելու գործը:

Կուսակցության դասակարգային քաղաքականությունը գյուղում. — Գյուղատնտեսության աճումը մեզ մոտ կատարվում է այնպես, վոր բարձրանում է գյուղացիության վողջ հիմնական մասսան: Շատ չքավորական տնտեսություններ ուժ են առնում և դառնում միջակ տնտեսություններ: Այդ պատճառով ել միջակային խավի նշանակությունը չի ընկնում, նրա քանակը նույնիսկ ավելանում է, չնայած այն բանին, վոր ուռճացած միջակների մի մասը հարստանում է և սողոսկում կուլակության շարքերը: Միջակ Միջակը մնում է վորպես գյուղի կենտրոնական դեմքը: Այդ խավին է պատկանում գյուղացիության մեծամասնությունը: Այդ պատճառով ել բանվոր դասակարգի՝ չքավոր ու միջակ գյուղացիության հետ ունեցած միության ուժեղացումը պահպանում է իր ամբողջ նշանակությունը:

Բայց վողջ գյուղի աճման հետ միասին աճում է և կուլակը: Աճում է գյուղի կապիտալիստական սեկտորը: Գյուղում առաջիկա տարիների ընթացքում կապիտալիստական և սոցիալիստական ուժերի միջև պայքարը պետք է նորից շարունակվի, ըստ վորում նա մասամբ ուժեղանում է և սուր բնույթ ստանում: Ինչպես ցույց տվին 1927 — 28 թվի հացամթերումները, կուլակը ակտիվ կերպով դուրս է գալիս խորհ. իշխանության՝ հացամթերումների խնդրում ունեցած քաղաքականության դեմ:

Այս լարվածությունն առաջանում է սոցիալիստական շինարարության հաջողություններով և դժվարություններով: Մեր տնտեսության նվաճումները կուլակի առաջ դնում են նրա լինելու

և չլինելու սոսկալի հարցը։ Կուլակը դժգոհ է խորհրդային տնտեսության նվաճումներից։ Նա ամեն կերպ աշխատում է լարել աշխատավոր գյուղացիության մասսաներին պրոլետարիատի դեմ։ Նա օգտագործում է յուրաքանչյուր դժվարություն, յուրաքանչյուր սխալ, յուրաքանչյուր վրիպում։ Իսկ ներկայումս՝ ռեկոնստրուկցիայի շրջանին անցնելու ժամանակ՝ դժվարություններն այնքան էլ քիչ չեն։

Այդ պատճառով էլ — մեր շինարարության, նվաճումների և խորհ. իշխանության քաղաքականության դեմ կուլակների կողմից մղվող պայքարի ուժեղացումից ելնելով, կուսակցության 15-րդ համագումարը առաջադրեց կուլակների դեմ ուժեղ հարձակում գործելու լոզունգը։ Այդ արշավանքի համար մենք հարկ եղած ուժն ունենք։ Կապը միջակի հետ ամուր է, չնայած որ ակամայից կիրառվող արտակարգ միջոցները ստեղծել էին այդ կապի համար որոշ վտանգ։ Վերջին տարիների ընթացքում ձեռք բերած մեր նվաճումներն անվիճելի յեն։ Այդ նվաճումները կուլակին «տնտեսական տեսակետից ավելորդ ֆիգուրա» յեն դարձնում գյուղում։ Պրոլետարիատի միությունը գյուղացիության հետ—այդ ամենևին չի նշանակում թե դա միություն է ամբողջ գյուղացիության հետ առանց խտրության։ Գյուղի կուլակային վերնախավը այդ միությունից արտաքսված է։ Պարզ է, որ առանց կուլակության դեմ պայքարելու՝ միջակ գյուղացու հետ միությունն անիրագործելի յէ։ Չէ՞ որ կուլակությունն աշխատում է միջակին իր կողմը քաշել, բաժանել նրան պրոլետարիատի հետ ստեղծած միությունից։

Միաժամանակ, առանց չքավորությանը (բանվոր դասակարգի հենարանը գյուղում) կազմակերպելու, առանց կուսակցության աշխատանքը նրանց մեջ խորացնելու, անհնարին է միջակ գյուղացիության հետ միություն հաստատել։ Այդ պատճառով էլ գյուղում կուսակցության կարևոր խնդիրներից մեկը հանդիսանում է գյուղի չքավորության՝ որպես խորհրդային իշխանության հենարանի (գյուղում)՝ համախմբումը։

Գյուղատնտեսական բանվորներն իրենցից ներկայացնում են պրոլետարիատի այն ջոկատը, որ գտնվում է գյուղացիության շարքերում։ Յերեք միլիոն գյուղատնտեսական բանվորների կեսն աշխատում է խորհրդային տնտեսություններում, գյուղացիական զանազան ընկերությունների մեջ, փայատմերումների

գործում և այլն. բատրակների կես մասն է միայն (մոտ մեկ և կես միլիոն) աշխատում մասնավոր տերերի մոտ, բատրակների զգալի մասին շահագործում է կուլակությունը։ Բատրակները պրոլետարիատի ամենայետամնաց ջոկատն են։ Բատրակությունը պրոֆմիության մեջ կազմակերպելը, նրա շահերի պաշտպանությունը, կուլակների կողմից շահագործման յենթարկվելու մեծ չափի նվազումը, — այս խնդիրներն անչափ կարևոր են՝ գյուղում մեր դիրքերն ամրացնելու համար։

Գյուղական չքավորությունը, որն օգտվում է խորհ. իշխանության օժանդակությամբ, հանդիսանում է պրոլետարիատի ամենամոտիկ խավը։ Չքավորությանը կուլակներին յենթարկվելուց պաշտպանելով, մեր կուսակցությունը կազմակերպում է միջոցներից զուրկ գյուղացիությանը, առնում է նրան կոոպերացիայի մեջ, նրան գրավում է ակտիվ մասնակցելու խորհրդային շինարարության գործում։

«Տարօրինակ կլիներ մտածել, որ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման պայմաններում բանվորների և գյուղացիների միությունը նշանակում է միություն ամբողջ գյուղացիության՝ որոնց թվում և կուլակության՝ հետ։ Ոչ, մենք նման միություն չենք քարոզում և չենք էլ կարող քարոզել։ Պրոլետարիատի դիկտատուրայի, բանվոր դասակարգի իշխանության հաստատուն գտնվելու պայմաններում՝ բանվոր դասակարգի միությունը գյուղացիության հետ նշանակում է՝ հենվել չքավորի վրա, դաշն կապել միջակի հետ, — պայքար մղել կուլակության դեմ։ Ով կարծում է, որ մեր պայմաններում դաշինքը գյուղացիության հետ նշանակում է դաշինք նաև կուլակության հետ, նա ոչ մի ընդհանուր բան չունի լենինիզմի հետ։ Ով որ մտածում է գյուղում այնպիսի քաղաքականություն տանել, որը դուր գա և՛ հարուստներին, և չքավորներին, նա մարքսիստ չէ, այլ՝ հիմար, որովհետև աշխարհի յերեսին նման քաղաքականություն գոյություն չունի։ Մեր քաղաքականությունը դասակարգային քաղաքականություն է» (Ստալին)։

Գյուղի զանազան սոցիալական խավերի նկատմամբ ունեցած մեր քաղաքականությամբ, սոցիալիստական շինարարության ճանապարհին, անշեղ ղեկավարվում ենք Վ. Ի. Լենինի որոշած ֆորմուլով. «կարողանալ համաձայնության գալ միջակի հետ՝ ոչ մի րոպե չհրաժարվելով կուլակության դեմ

պայքարելուց, և հաստատուն կերպով հենվելով միայն չքավորության վրա»:

Տրոցկիստների հիմնական սխալը կայանում էր նրանում, որ նրանք չէին տեսնում կապիտալիզմի պայմաններում աճող և խորհ. իշխանության օրոք աճող գյուղի արմատական տարբերությունը: Կապիտալիստական պայմանների չափանիշով էին նրանք մոտենում մեր գյուղին: Նրանք չէին նկատում այն գլխավոր առանձնահատկությունը, որով տարբերվում է խորհրդային գյուղի շերտավորումը: Տրոցկիստների կողմից միջակը մոռացության էր տրվել: Մոռացվել էր լենինյան պատգամը.— ամրապնդել միությունը միջակի հետ, որն (միությունը) ապահովում է սոցիալիստական շինարարության հաղթանակը մանր-գյուղացիական յերկրում: Լենինը նայում էր գյուղացիության հիմնական մասսայի վրա որպես պրոլետարիատի դաշնակցի վրա. Լենինի կարծիքով այդ դաշինքը կամրապնդվի այն չափով, ինչ չափով որ մեր սոցիալիստական շինարարությունը հաջողություններ կունենա: Ահա լենինյան այդ տեսակետը տրոցկիստները փոխարինեցին այն հայացքով, թե պրոլետարիատն անպայման պետք է ընդհարվի գյուղացիության հետ:

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆՆ ԱՆՑՆԵԼԸ

Չքավոր յեվ միջակ գյուղացիության կոոպերացման գործի հաղթանակը — հաղթանակի գրավական է կուլակների դեմ.— Գյուղի հիմնական ճանապարհը դեպի սոցիալիզմ — դա Լենինի ցույց տված կոոպերացման ուղին է: Միայն պրոլետարիատի դիկտատուրան է, միայն խորհ. իշխանությունն է, որ մանր տնտեսությունների առաջ բաց է անում, առանց հիվանդագին յերևույթների, խոշոր հասարակական տնտեսությանն անցնելու ուղին: Գյուղում կոոպերացիան — դա գյուղացիական մանր և շատ փոքր տնտեսությունների ընկերական միությունն է: Այդ միությունը միայն աստիճանաբար է ընդգրկում գյուղական կյանքի բոլոր կողմերը: Սկզբում միանում են՝ իրենց մթերքները միասին վաճառելու, քաղաքային ապրանքները միասին գնելու համար: Յեթե գործը լավ ընթացք է ստանում, մտածում են գնել մեքենա ընդհանուր ուժերով կամ ձիթհան կառուցել ընդհանուրի օգտվելու համար: Իսկ հետո անցնում են ընդհանուր վարին,

ոչնչացնելով հողաշերտերի սահմանները՝ միացնում են իրենց տնտեսությունները և ընդհանուր (կոլլեկտիվ) մի տնտեսություն ստեղծում: Այս աշխատանքը յերկարատև է, մի օրվա և կամ նույնիսկ մի տարվա ընթացքում չես կարող իրագործել: Սակայն պետք է հիշել, որ «լրիվ կոոպերացման դեպքում մենք յերկու ոտով կկանգնեյինք սոցիալիստական հողի վրա» (Լենին):

Խոշոր, հասարակական տնտեսության անցնելը միայն՝ արմատախիլ կանի կուլակության հիմքերը: Չքավորի կամ միջակի ցրված, անհատական տնտեսությունը թույլ է խոշոր կուլակայինից: Կուլակային տնտեսությունը հսկայական առավելություններ ունի չքավորների և միջակների տնտեսությունների հանդեպ հատկապես նրա համար, որովհետև նա ավելի խոշոր տնտեսություն է հանդիսանում: Ճիշտ է, խորհ. իշխանությունը պաշտպանում է գյուղի ավելի թույլ մասին, սակայն միաժամանակ նա սահմանափակում է կուլակային վերնախավի աճումը: Կուլակին վերջնական պարտություն կարող է պատճառել միայն չքավոր և միջակ խավերի տնտեսությունների միացումը կոոպերացիայում և կոլլեկտիվների մեջ.— խոշոր հասարակական տնտեսության անցնելը: Այստեղ խոշոր տնտեսության առավելությունները, որոնք առաջ կուլակի ձեռքին էին գտնվում, անցնում են խոշոր կոլլեկտիվ տնտեսության ձեռքը: Ահա սրա մեջ կկայանա կուլակի դեմ տարված վերջնական հաղթանակը:

Սակայն ընկերական խոշոր տնտեսությանն անցնելու նշանակությունը միայն սրա մեջ չէ: Այդ անցումը գյուղի բարեկեցության բարձրացման միակ ճանապարհն է: Անհատապես դժվար է և յերբեմն էլ անհնարին է դուրս գալ աղքատությունից: Ուժերը միացնելով, ընդհանուր (կոլլեկտիվ) տնտեսություն վարելու միջոցով միայն գյուղացիությունը կարող է դուրս գալ ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի լայն ճանապարհի վրա, որը թեթևացնում է աշխատանքը, բազմապատկում նրա պտուղները:

Հեղափոխությունը գյուղացիությանը հող տվեց, բայց բոլորն էլ միջոցներ չունեն, որ ինչպես հարկն է մշակեն այդ հողը: Մեքենաներ, գործիքներ ու լծկաններ չկան: Հեղափոխության ժամանակ անհատ տնտեսությունների թիվը աճեց: Նախկին հողազուրկները, նախկին բատրակները հող ստացան:

Տիրելով այդ հողին, նրանք սկսեցին տնտեսություն կազմել։ Նախկին խոշոր տնտեսություններից շատերը բաժան-բաժան յեղան, ընտանիքները բաժանվեցին, հիմնվեցին նոր տնտեսություններ։ Գյուղում յերեք տնտեսություններից մեկը լծկան չունի։ Սա կուլակի համար ձեռնտու պայմաններ է ստեղծում գյուղացիության չքավոր խավերին ոգտագործելու, շահագործելու, հարստանալու համար։ Սակայն ցավն այն չէ, վոր այդ տնտեսությունները ներկայումս լծկան չունեն։ Պետության ոժանդակությամբ կարելի յե լծկան եվ յել ձեռք բերել. ամբողջ ցավը նրանումն է, վոր այդ շատ մանր տնտեսությունների մեծամասնությունը լծկանը մինչև անգամ պահել չի կարողանում։ Հաշված է, վոր յեթե այդ տնտեսություններին լծկան տրվի — միևնույն է, չեյին կարող դրանց պահել, վորովհետև լծկաններին կերակրելու համար պահանջվում է ավելի, քան թե այդ ցրված շատ փոքրիկ տնտեսություններն են արտադրում։

Փոքրիկ տնտեսության մեջ գյուղացու յեկամուտը բարձրացնող զգալի բարելավումներ մտցնելը դժվարին գործ է։ Անգամ ամենալավ գութանը մի շարք տնտեսությունների մեջ լրիվ չափով չի ծածկում իր ծախսերը, եվ չենք խոսում այն մասին, վոր նա ավելի թույլ տնտեսությունների համար մատչելի չէ։ Գյուղատնտեսական ավելի բարդ — քաղող, ցանող, կալսող — մեքենաները գյուղացիական շատ մանր տնտեսությունների մեջ, անգամ բարեհաջող պայմաններում, ոգտագործելն անհնարին է։ Եվ ինչ խոսք կարող է լինել տրակտորի մասին։

Կոոպերացիայի աճումը գյուղում. — Սրանից եվ պարզվում է, վոր մանր (չքավոր և միջակ) տնտեսության միակ յելքը հանդիսանում է կոլլեկտիվ տնտեսությանն անցնելը։ Կոոպերացիան հեշտացնում է այդ փոխանցումը։ Յեվ, հիրավի, վերջին տարիների ընթացքում գյուղում մենք արտակարգ թափով կոոպերացիայի աճումն ենք նկատում։ Կոոպերացիան ամենից արագ թափով աճում է փոխանակության, ապրանքների գնման և վաճառման բնագավառում։ Սա զարմանք չպիտի պատճառի. մանր տնտեսությունների միանալն այստեղ ամենահեշտ բանն է։ Այս դեպքում նրանք չեն կորցնում իրենց յուրահատուկ տնտեսական ինքնուրույնությունը։

Նեպի սկզբնական շրջանում գյուղի և քաղաքի միջև յեղած միակ միջնորդը համարյա թե մասնավորն եր։ Կոոպերացիան միայն ներկայումս է պարզել իր թևերը։ Իսկ ներկայումս պետության և կոոպերացիայի ձեռքում են գտնվում գյուղի ապրանքամատակարարման կեսից ավելին և գյուղատնտեսական մթերքների մթերման համարյա յերկու յերրորդ մասը։ Գյուղատնտեսական մթերքների առանձին տեսակների նկատմամբ կոոպերացիան ընդգրկում է վաճառքի 20-ից մինչև 90%-ը։ Գյուղացիներին գյուղատնտեսական արտադրության միջոցներ (մեքենաներ, պարարտանյութեր, սերմացու, տրակտորներ) մատակարարելու գործում կոոպերացիան ընդգրկում է 30-ից մինչև 60%-ը։ Գյուղատնտեսական կոոպերատիվների թիվն աճում է, նրանք հետզհետե ընդգրկում են գյուղացիության ավելի մեծ քանակ։

Գյուղատնտեսական կոոպերացիայի աճումը.

	1923 թ.	1925 թ.	1927 թ.
1. Կոոպերատիվների թիվը	12.000	25.000	42.000
2. Ընդգրկված տնտեսությունների թիվը	$1\frac{1}{2}$ միլիոն։	$3\frac{1}{2}$ միլիոն։	5 միլիոն։

1927 թվին գյուղատնտեսական կոոպերացիայի շրջանառությունը հասնում եր 1.800 միլիոն ռուբլու, իսկ կոոպերատիվների սեփական միջոցները՝ 200 միլիոն ռուբլու։

Մեր կոոպերացիան — չքավոր և միջակ գյուղացիական կոոպերացիա յե։

Ճիշտ է, խորամանկ կուլակն աշխատում է ամեն կերպ իր ձեռքն առնել կոոպերատիվը. նա հարստանալու համար աշխատում է ոգտագործել այն ոգնությունն ու այն արտոնությունները, վոր ստանում է կոոպերացիան խորհրդային պետությունից։ Կոոպերատիվային ցուցանակի տակ գոյություն ունեցող կուլակային դուքանները — «կեղծ կոոպերատիվները» — պետք է յերևան հանել և կոոպերատիվ ընտանիքից անխնա կերպով արտաքսել։

Վերջին տարիների ընթացքում գյուղատնտեսական կոոպերացիան զգալի կերպով աշխուժացրել է իր աշխատանքները գյուղատնտեսության բարելավման ուղղությամբ։ Յուրաքանչյուր տարի աճում են կոոպերացիայի կողմից հիմնվող սերմազտման պունկտերը, պանրագործական և յուղագործա-

կան գործարանների թիվը։ Գյուղացիական մասսաների մեջ կոոպերացիան ամրապնդում է գյուղատնտեսական գիտելիքները։ Կոոպերացիան ցույց է տալիս, թե ինչպես պետք է ճիշտ վարել տնտեսությունը, ինչպես պետք է բարձրացնել նրա յեկամուտը։

Արտադրական միություններ յեվ կոլտնտեսություններ. — Ընդհանուր ուժերով գյուղատնտեսական մեքենա գնելով, գյուղացիները միանում են՝ այդ մեքենան միասին օգտագործելու համար։ Առաջ է գալիս մեքենաօգտագործման ընկերություն։ Այս միությունն արդեն միացնում է վոչ թե վաճառումը, այլ և արտադրությունը։ Ճիշտ է, սա արտադրական միություն ստեղծելու առաջին քայլն է։ Բայց ճիշտ են ասում, թե՝ դժվար է միայն առաջին քայլը։ Համարյա թե նույն նշանակությունն ունեն՝ սերմացույի, ճակնդեղի մշակման, ձիաբուծական, մելիորատիվ (այսինքն ջրանցքեր անցկացնող, ճահիճներ չորացնող և հողը մշակման համար պետքական դարձնող) և ուրիշ միությունները։

Թե վերջին ժամանակներում ինչպես են աճել գյուղացիական այդ արտադրական միությունները, վորպես որինակ, վերցնենք ՌՍՖԽՀ-ը.

Արտադրական ընկերությունների աճումը ՌՍՖԽՀ մեջ.

		1925 թ.	1927 թ.
1. Մեքենաօգտագործման ընկերութ.		2.268	6.356
2. Մելիորատիվ	»	3.361	4.819
3. Հացահատիկների բուծման	»	450	1.130
4. Ճակնդեղի մշակման	»	210	338
5. Ձիաբուծական	»	380	570

Արտադրական այդ տիպի միությունները ներկայումս Խորհրդային Միության մեջ մոտավորապես մեկ և կես միլիոն գյուղացիական տնտեսություններ են ընդգրկում։ Նման ընկերությունները գյուղացիությանը գործնականում ցույց են տալիս, թե ինչպես պետք է միասին ձեռնարկել և բարելավել տնտեսության առանձին բնագավառները։

Մինչև այժմ կոլեկտիվ տնտեսություններն այնքան էլ արագ չեն աճել։ Դրանք կազմում են լրիվ միացումն այնպիսի տնտե-

սությունների, վորոնք միասին աշխատում են ու միասին էլ օգտվում իրենց աշխատանքի պտուղներով։ Վերջին տարիները կոլտնտեսությունների զգալի աճում է նկատվում։ 1923 թվին կոլտնտեսությունների թիվը հասնում էր 12.000-ի, վորոնք ընդգրկում էյին մոտ 120 հազար տնտեսություններ։ 1927 թվին բոլոր տեսակի կոլտնտեսությունների թիվն հասնում էր արդեն 18 հազարի — մոտավորապես 180 հազար տնտեսություններով։

1928 թվին կոլտնտեսությունների աճումն ավելի արագ է ընթանում։ Ճիշտ է, կոլեկտիվացման ճանապարհին հանդիպում ենք շատ դժվարությունների. մանր սեփականատեր-գյուղացու համար այնքան էլ հեշտ չէ հրաժարվել իր տնտեսությունից և դա ամբողջությամբ մուծել ընկերական միության մեջ։ Սակայն կյանքի փորձը գեղեցիկ կերպով ցույց է տալիս, վոր կարիքներից դուրս գալու միակ հուսատու յելքը նման միությունն է։ Մեր լրագրներին ուղղած՝ չքավոր գյուղացիների նամակներում յերբեմն արդեն այսպիսի դարձվածքներ, մտքեր կան. «Վերցրեք մեր հացը, կազմակերպեցեք խոշոր տնտեսություններ և վերածեցեք մեզ բանվորների։ Բավական է տանջվենք մեր բոլորովին անպետք տնտեսության ձեռքում»։

Գյուղացիության այս տրամադրությունները կուսակցությունը ուղղում է դեպի խոշոր հասարակական տնտեսություններ ստեղծելու հունը։ Միջակների և չքավորության կոլեկտիվ միությունններին ամեն տեսակի աջակցություն և օգնություն է ցույց տրվում։ Կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը ամեն կերպ օգնում են աշխատավոր գյուղացուն՝ մանր արտադրության փակուղուց դուրս գալ դեպի խոշոր կոլեկտիվ տնտեսության լայն ճանապարհը։

Խորհրդային տնտեսությունները հասարակական հողագործության նախաձեռնողներն յեն. — Գյուղի վերակառուցման գործում պակաս դեր չեն խաղում խորհ. ըդային տնտեսությունները։ Սրանք հացահատիկների խորհրդային գործարաններ են։

Գյուղի սոցիալիստական այս բնագավառն այնքան էլ մեծ չէ։ Մենք ունենք մոտ 5.000 խորհ. տնտեսություններ՝ 3 միլիոն հեկտար ընդհանուր տարածությամբ։ Դրանց կշիռն ու նշանակությունը գյուղում անհամեմատ մեծ է։ Սովորաբար խորհրդային տնտեսությունների մեջ տնտեսությունը կուլտուրական ձևով է

տարվում: Նա վողջ շրջանի գյուղացիության օրինակ է հանդիսանում:

Իր օրինակով շատ հաճախ իր ոգնությամբ՝ խորհ. տնտեսությունը աջակցում է փոքրիկ գյուղացիական տնտեսությունների բարձրացման և համայնացման գործին: Կոլլեկտիվ հողագործության համար մղվող պայքարում խորհ. տնտեսությունը շատ հաճախ է հանդես գալիս վորպես նախաձեռնող:

Տարաս Շևչենկոյի անվան խորհ. տնտեսության (Օդեսայի շրջան, Ուկրայինայում) փորձը շատ հետաքրքիր է. խորհրդային այդ տնտեսությունը մոտավորապես հարյուր տրակտորներից կազմակերպել է տրակտորական ջոկատ: Շրջակայքի հողագործական ընկերությունների հետ նա պայման է կնքել դաշտերը տրակտորներով մշակելու համար: 1928 թվի գարնանը 22 ընկերությունների հետ նա պայման է կնքել 30 հազար հեկտարից ավելի վարելահող մշակելու համար: Ըստ պայմանագրի, մշակվող ամբողջ հողամասը միացվում է, դառնալով մի հսկայական հողամաս:

Այն բոլոր շերտերը, վորոնք բաժանում եյին անհատ գյուղացիների առանձին հողամասերը, վոչնչացվում են: Հողի մշակման գործը ղեկավարում է խորհ. տնտեսության կողմից վարձատրվող հմուտ գյուղատնտեսը: Ցանքսը կատարվում է խորհ. տնտեսության սերմացուական տնտեսություններից վերցրած ամենալավ տեսակի սերմերով: Վողջ բանվորական ուժը, դրանց թվում և տրակտորիստները, գյուղացիներն են տալիս: Յուրաքանչյուր գյուղացի իր հողային գործի չափի համաձայն բանվորական ուժ է տալիս: Խորհրդային տնտեսությունը տրակտորիստներին սովորեցնում է ձրի: Խորհ. տնտեսության ձմերային կարճատև դասընթացքներով անցել են 200 մարդ: Այս նոր ջոկատի (տրակտորային) շարքերում կան մի քանի գեղջկուհի տրակտորիստներ:

Հողը տրակտորով մշակելու համար գյուղացիությունը խորհրդային տնտեսությանը վճարում է աշնանացան ցորենի մեկ քառորդ և մնացած ցանքսերի բերքի մեկ յերրորդ մասը: Այդ վճարը գնում է խորհ. տնտեսության տրակտորների ծախսերը ծածկելու ուղղությամբ և այլն:

Գյուղացիական դաշտերը տրակտորային ջոկատով մշակելու դեպքում ցանքսի տարածությունն զգալի չափով լայնանում է: Այդ լայնացումը կատարվում է այն հողերի հաշվին, վորոնք

մինչ այդ զանազան պատճառներով չեյին ցանվել, ինչպես նաև սահմանային հողամասերի ու թմբերի հաշվին: Զցանված սահմանային հողամասերի տարածությունը կազմում են մեր ցանքսերի 7%-ը: Գյուղատնտեսական կատարելագործված գործիքների և տրակտորի մշակման միջոցով բերքատվությունն աճում է (20—25%): Շարքացանով կատարված ցանքսը վոչ միայն նպաստում է բերքատվությանը, այլ և տալիս է սերմիացույի տնտեսողականություն (մինչև 20%): Կամով կալսելու ժամանակ դարմանի մեջ մնում է հատիկների 15 տոկոսից ավելին. իսկ քամհարը հարդի մեջ կորչող հացահատիկի կորուստը նվազեցնում է մինչև 5—7%:

Ցանքսային տարածությունը լայնանում է, ավելանում է բերքատվությունը: Միայն այս բանն արդեն ծածկում է այն ցորենի գինը, վորը գյուղացին խորհ. տնտեսությանն է տալիս: Իսկ հետո բացվում են տնտեսության ծավալման համար հսկայական հնարավորություններ: Աշխատող անասունների թվի կրճատման հաշվին աճում են կաթնատու անասունները: Տրակտորային վարը կրճատում է գյուղացու աշխատանքը: Այդ պատճառով էլ կարող են աճել հողագործության ինտենսիվ ձևերը, վորոնք մեծ աշխատանք են պահանջում, բայց շատ արժեքավոր մթերքներ են տալիս (պտղաբուծության, բանջարաբուծության և այլն):

Այսպիսով, խորհ. տնտեսությունը այդ ուղղությամբ աշխատանք տանելով գյուղը առաջնորդում է դեպի սոցիալիզմ:

Բացի այս, խորհ. տնտեսությունները ավելի ապրանքային տնտեսություններ են հանդիսանում: Մեր լավ խորհ. տնտեսությունները 60%-ից ավելի ապրանքայնություն են տալիս: Բոլոր այս պատճառներից ելնելով, Կենտկոմի հուլիսյան (1928 թ.) պլենումը վորոշեց կազմակերպել նոր (հացահատիկների) խորհ. տնտեսություններ, ծավալելով գործն այնպես, վորպեսզի այդ նոր խորհ. տնտեսություններն առաջիկա հինգ տարվա ընթացքում 100 միլիոն փութ ապրանքային հաց տան:

Կալվածատիրական հողի հսկայական մասն, ինչպես մենք արդեն տեսանք, անցավ գյուղացիության չքավոր և միջակ մասսաների ձեռքը: Գյուղի կուլակային վերնախավն էլ շատ ճնշվեց: Հացի բերքի ամենամեծ մասը մանր գյուղացիական տնտեսությունների մեջ է հավաքվում: Այդ տնտեսությունները սովորաբար վաճառում են իրենց բերքի համեմատաբար չնչին մասը:

Այս տախտակն այդ մասին բավական ցայտուն պատկեր է տալիս.

	Հացի ընդհանուր բերքը		Ապրանք. հացը		Ապրանքայնութ. %-ը
	Մլն. փութ.	%	Մլն. փութ.	%	
Մինչև պատերազմը					
1. Կալվածատերեր . . .	500	12,0	281,6	21,6	47
2. Կուլակներ	1.900	38,0	650,0	50,0	34
3. Միջակներ և չքավորներ	2.500	50,0	369,0	28,4	14,7
Ընդամենը . . .	5.000	100	1.300,6	100	26
1926/27 թվին					
1. Խորհր. և կոլտնտեսութ.	80,0	1,7	37,8	6,0	47,0
2. Կուլակներ	617,0	13,0	126,0	20,0	20,0
3. Միջակներ և չքավորներ	4.052,0	85,3	466,2	74,0	11,2
Ընդամենը . . .	4.749,0	100	630,0	100	13,3

Այս տախտակը ցույց է տալիս, վոր յերկրում հացի ընդհանուր պրոդուկցիան համարյա թե հասել է նախապատերազմյան մակարդակին, և միաժամանակ շուկա հանվող հացի քանակը կրճատվել է յերկու անգամից ավելի — 1.300 միլիոն փթի փոխարեն — 630 միլիոն փութ միայն։ Այս բանը կատարվել է այն պատճառով, վոր խոշոր տնտեսությունների տեսակարար կշիռը գյուղատնտեսական արտադրության մեջ պակասել է։ Կալվածատերերն ու կուլակները մինչ հեղափոխությունը տալիս եյին հացի ընդհանուր պրոդուկցիայի 50 և ապրանքային հացի 70 տոկոսը։ Ներկայումս խոշոր տնտեսությունների տեսակարար կշիռն այնքան էլ մեծ չէ, իսկ կապիտալիստական (կուլակային) տնտեսությունները տալիս են ընդհանուր արտադրության 13 և ապրանքային հացի 20 տոկոսը։ Հացի պրոդուկցիայի հիմնական մասսան տալիս են միջակ և չքավոր գյուղացիական տնտեսությունները, իսկ սրանց ապրանքայնությունը, ինչպես տեսնում ենք տախտակում, բավական ցածր է խոշոր տնտեսություններից, և՝ հեղափոխությունից հետո ուժեղացող ցրվածության շնորհիվ՝ ներկայումս ավելի ցածր է, քան հեղափոխությունից առաջ եր։

Գյուղատնտեսության այդպիսի ցրվածության և յետամնացության, նրա ցածր ապրանքայնության և յերկրում ապրանքային հաց արտադրելու գործի շատ դանդաղ աճելու պատճառով մենք շատ քիչ չափով կարող ենք օգտագործել հացի եքսպորտը մեր գործարանների և ֆաբրիկների համար, — արտասահմանից մեքենաներ ու զանազան անհրաժեշտ սարքավորում ներմուծելու համար, վորպեսզի ավելի արագ քայլերով առաջ շարժվենք մեր տնտեսական զարգացման գործում։ Հացի եքսպորտը անցյալ տարիներին կազմում եր նախապատերազմյան ժամանակի 10—15 (չնչին) տոկոսը, իսկ 1927—28 թ., հացի ֆրոնտում յեղած դժվարությունների պատճառով, նա բոլորովին դադարեց։ Սակայն հացահատիկային տնտեսության ցածր ապրանքայնությունը միայն եքսպորտին չի հարվածում։ Նա մեր տնտեսության համար խոշոր դժվարություններ է ստեղծում այն պատճառով, վոր ապրանքային հացի արտադրության աճումը յերկրում յետ է մնում հացի պահանջի աճումից։ 1927—28 թվի հացամթերումների դժվարությունների հիմնական պատճառն այստեղ պետք է վորոնել։

Հացամթերման բնագավառում յեղած դժվարություններից օգտվում է կուլակությունը։ Նա աշխատում է թաքցնել հացի պաշարները՝ աշխատելով բարձրացնել հացի գինը։ Հացի գները թանգացնելով, նա ձեռնարկում է սպեկուլյացիայի, վորը հարվածում է բանվորին և չքավորությանը։

Դրությունից դուրս գալու յելքն այն է, վոր չքավոր և միջակ անհատական տնտեսությունների զարգացման հետ միասին՝ ամեն կերպ զարգացնենք խոշոր հասարակական տնտեսությունը։ Կուսակցության 15-րդ համագումարը վճռական կերպով դրեց այդ հարցը։ Հակառակ մանր տնտեսության, վորը վաճառում է իր բերքի միայն մեկ տասներորդ մասը, հակառակ կուլակային տնտեսության, վորը վաճառում է իր բերքի մեկ հինգերորդական մասը, խորհրդային և կոլլեկտիվ տնտեսությունները պետությանը տալիս են իրենց հավաքած հացի կեսից էլ մի քիչ ավելին։ Ներկայումս արդեն բերքատվությունը հասարակական տնտեսության մեջ զգալի կերպով ավելի բարձր է, քան ցրված մանր տնտեսությունների մեջ։ Դեպքերը շատ են, յերբ խորհ. տնտեսությունները դեսյատինից ստանում են 150—200 փութ։ Գոյություն ունեցող կոլլեկտիվ և խորհ. տնտեսությունների լայնացումն ու նորերի կազ-

մակերպումը՝ առաջիկա տարիների ընթացքում պետք է տան այն մի քանի միլիոն փութ պակասող հացը, որ անհրաժեշտ է ներքին պահանջների բավարարման և արտասահման արտահանելու համար։ Սրա հետ միասին, պետք է հասնել չքավոր և միջակ տնտեսությունների մեջ բերքատվության բարձրացմանը։ Բավական պարզ միջոցների ոգնությամբ հացի բերքատվությունը կարող է բարձրանալ առանձնապես այն տնտեսություններում, որոնք ընդգրկված են կոոպերացիայի մեջ, միացված են ընկերությունների մեջ։

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Սոցիալիստական արդյունաբերության ղեկավարող դերը.— Գյուղատնտեսությունը, որի մեջ զբաղված է Խորհրդային Միության ազգաբնակչության համարյա թե չորս հինգերորդը, մեր յերկրում ավելի ցածր մակարդակի վրա յե կանգնած, քան թե մի ուրիշ յերկրում։ Կարող է հարց ծագել — իսկ չի՞ կարելի բոլոր միջոցները տրամադրել գյուղատնտեսության վերելքի համար։ Արդյոք ճի՞շտ է մեր ինդուստրացման քաղաքականությունը։ Արդյոք լա՞վ չեր լինի առայժմ մեծ ծախս չանել արդյունաբերության ընագավառում, և նախ, ինչպես հարկն է, բարձրացնել գյուղատնտեսությունը և հետո միայն արդյունաբերությանը ձեռնամուխ լինել, առավել ևս, որ, ինչպես 1927—28 թվի հացամթերումների դժվարությունները յեն ցույց տալիս, հացի պահանջի աճումից ապրանքային հացի արտադրության աճումի յետ մնալը մեր տնտեսության համար մեծ դժվարություն է առաջացնում։

Առաջին իսկ հայացքից թվում է թե նման դատողությունն իսկապես որ ճիշտ է։ Բայց իսկապես այդ բանը հիմնականում սխալ է, և նման քաղաքականության կիրառումը կործանիչ կհանդիսանար սոցիալիստական շինարարության վողջ գործի համար։

Մենք արդեն տեսանք, որ մեր յերկիրն ինքնուրույն, կապիտալիստական աշխարհից անկախ կարող է դարձնել միայն խոշոր արդյունաբերությունը։

Յեթե արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերություն գոյություն չունի, չի լինի վոչ տնտեսական և վոչ ել քա-

ղաքական ինքնուրույնություն։ Արդյունաբերությունը յեթե թույլ է — դժվար է ինքնուրույնություն պաշտպանել։ Պատերազմի դեպքում՝ զարգացած արդյունաբերությունը առաջին հենարանն ու ոգնականն է։ Նշանակում է, որ յեթե սեփական արդյունաբերության ուժեղացումից թեկուզ ժամանակավորապես հրաժարվենք, մեզ լիովին կուլ կտա կապիտալիստական աշխարհը։

Հարցը միայն սրանով չի սպառվում։ Չէ՞ որ մեր անցման շրջանի արդյունաբերությունը կառուցվող սոցիալիզմի հենարանն է հանդիսանում։ Յուրաքանչյուր նոր գործարան բանվոր դասակարգի համար նոր ամրոց է դառնում։ Միայն արդյունաբերության աճումն է ծավալում սոցալիզմի հիմքերը մեր յերկրում։

Գյուղացիության տնտեսությունը սոցիալիստականորեն վերակառուցելու համար անհրաժեշտ է ուժեղացնել և ամրապնդել խորհրդային արդյունաբերությունն առաջին հերթին։ Մենք տեսնում ենք թե ինչպես է ազդում մեր գյուղի վրա տնտեսության սոցիալիստական հատվածը — պետարդյունաբերությունը, առևտուրը, բանկերը։ Իսկ այս ընագավառի հիմքը հանդիսանում է պետական արդյունաբերությունը։

Պարզ է, որ գյուղի սոցիալիստականորեն վերակառուցումն հաջողություն կունենա միայն այն դեպքում, յեթե ամրապնդվի սոցիալիզմի հենարանը մեր յերկրում — պետական արդյունաբերությունը։ Այդ դեպքում ապահովվում է հաղթանակը գյուղի բոլոր շահագործող տարրերի նկատմամբ, որոնք աշխատում են վիժեցնել գյուղի սոցիալիստական վերակառուցման գործը։

Կապիտալի թագավորության ժամանակ քաղաքի արդյունաբերությունը վայրի գիշատիչի նման մտնում է գյուղի փակ կյանքի մեջ, նա իր հետ բերում է գյուղացիության սուր շերտավորումն, նրա հիմնական մասսայի աղքատություն։

Մեր խորհրդային արդյունաբերությունը բոլորովին այլ ազդեցություն է թողնում գյուղի վրա։ Նա ամեն կերպ ամրապնդում է սոցիալիզմի սաղմերը գյուղում։ Տնտեսության սոցիալիստական ընագավառը հզոր հակառակորդ է դուրս գալիս ծնվող կուլակային բուրժուազիայի դեմ։ Խորհրդային արդյունաբերությունը գյուղի հիմնական մասսաներին տանում է կոոպերացման և կոլեկտիվացման ուղիով։

Այստեղից ել պարզվում է, որ գյուղի սոցիալիստական կառուցման համար անհրաժեշտ է կիրառել ինդուստրացման քա-

ղաքականությունը, որը և իրագործում է մեր կուսակցությունը։ Արդյունաբերության և մեքենագործության աճումը՝ գյուղը սոցիալիստական ուղիներով տանելու անհրաժեշտ պայմանն է հանդիսանում։ Առանց ինդուստրացման — գյուղացու տնտեսության աճումը, վերելքը և վերակառուցումն անհնարին է։

Կոնտրակտացիա. — Արդյունաբերական շատ ձեռնարկներ վերամշակման են ենթարկում գյուղատնտեսության տված հում նյութը. որպեսզի այդ հում նյութը որոշ գներով և քանակությամբ իր ժամանակին ստացվի, — այդ ձեռնարկությունները հաճախ պայմանագիր են կնքում հում նյութ արտադրող գյուղացիների հետ։ Նման պայմանագրեր ամենից շատ կնքվում են գյուղացիների կոոպերատիվ միությունների հետ. այդ ձևը կոնտրակտացիա յե կոչվում։ Խորհրդային պայմաններում արդյունաբերությունը կոնտրակտացիայի օգնությամբ գյուղին մղում է դեպի կոլլեկտիվ տնտեսություն, օգնում է գյուղատնտեսության բարձրացմանը, մատակարարելով նրան գյուղատնտեսական մեքենաներ, զտած սերմացու, հանքային պարարտանյութեր և այլն։

Կոնտրակտացիան լայն չափերով կիրառվում է շաքարային ճակնդեղի շրջաններում, ուր նա ընդգրկում է 900 հազար տնտեսություն, հետո բամբակաբուծական շրջաններում, ուր ընդգրկված են մոտավորապես 800 հազար տնտեսություններ, ավելի քիչ չափով արևածաղկի, վուշի և մի քանի այլ կուլտուրաների շրջանում։ Վերջին ժամանակները կոնտրակտացիան սկսում է հացահատիկների արդյունաբերության մեջ ևս կիրառվել։ Այնտեղ. ուր կոնտրակտացիա յե կիրառվում, գյուղացիությունը ամբողջապես միանում է կոոպերատիվ ցանցում (ճակնդեղաբուծական, բամբակաբուծական ընկ. և այլն)։ Այդ կոոպերատիվները զբաղվում են ոչ միայն պրոդուկցիայի վաճառման գործով, այլ և ընդգրկում են գյուղատնտեսական արտադրության առանձին ընագավառները (գործիքներից միասին օգտվելը, հողի համայնական մշակումը և այլն)։ Կոնտրակտացիան գյուղացիությանը բավական հասկանալի և մատչելի միջոցներով աստիճանաբար մղում է նրան դեպի խոշոր հասարակական տնտեսությունների կազմակերպման ուղին։ Կոնտրակտացիան ամենացայտուն կերպով օրինակ է հանդիսանում այն բանի, թե ինչպես խորհրդային արդյունաբերությունը գյուղին դեպի սոցիալիզմ է տանում։

Գյուղատնտեսական մեքենաներ. — Ներկայումս՝ տեխնիկայի արդի զրությամբ՝ առանց ուժեղ արդյունաբերության օգնության գյուղատնտեսությունը բարձրացնել չի կարելի։ Միայն արդյունաբերությունն է տալիս այն ամենը, ինչ բոլորովին փոխում է գյուղի պատկերը։ Անհրաժեշտ է մատնանշել, որ հենց ծանր արդյունաբերությունն է, որ ապահովում է խորհրդային յերկրի ինքնուրույնությունը, ամրապնդում նրա պաշտպանողական ընդունակությունը և միաժամանակ օժանդակում գյուղատնտեսության արմատական վերափոխմանը։

Հայտնի յե, թե տրակտորն ինչպիսի նշանակություն ունի։ Մի շարք յերկրներում գյուղատնտեսության գործում տրակտորի աշխատանքը արդեն խորը արմատացել է։ Տրակտորը յերկրագործության պատկերը փոխում է։ Մյուս մեքենաների հետ միասին տրակտորը գյուղական արտադրության աշխատանքը նման է դարձնում ֆաբրիկների և գործարանների աշխատանքներին։ Իզուր տեղը չէ, որ Ամերիկայում «հացի գործարան» են ասում այնպիսի տնտեսություններին, որոնք գործադրում են կատարելագործված մեքենաներ։

Մինչև պատերազմը մեր գյուղը տրակտոր չէր էլ տեսել։ Բայքայման տարիներին Լենինը յերազում էր այն մասին, որպեսզի դեպի գյուղ շարժենք հարյուր հազարավոր տրակտորներ։ Այդ դեպքում — ասում էր նա — գյուղի սոցիալիստական վերակառուցման գործը կհեշտանար հսկայական չափերով։ Այն ժամանակ նման յերազանքը անիրագործելի յեր թվում։ Մենք ընդամենը մի քանի հարյուր տրակտոր ունեյինք։ Այդ օրվանից շատ տարիներ չեն անցել։ Ներկայումս Խորհրդային Միության մեջ գյուղն արդեն 30.000 տրակտոր ունի։ Լենինի միտքը մեկ-յերրորդ մասով արդեն իրագործվել է։ Առաջիկա տարիները դա պետք է ամբողջությամբ իրագործվի։

Յեղած տրակտորների կեսից ավելին կոլտնտեսություններին է պատկանում։ Այս բանը ցույց է տալիս, թե գյուղացիական տնտեսություններից ընկերական միություններ ստեղծելու գործում ինչպիսի հսկայական գործիք է հանդիսանում տրակտորը։ Տրակտորը գյուղատնտեսության մեջ ներկայումս կիրառվող բոլոր մեքենաներից ամենակարևորն է։ Այդ «յերկաթե ձին» գյուղում հանդես է գալիս որպես հասարակական արտադրության նախաձեռնող։

Յեղած տրակտորների մեծ մասը արտասահմանից է ներմուծված։ Բայց արդեն մի քանի տարի յե, վոր սկսել ենք խորհրդային գործարաններում տրակտորներ արտադրել։ Առաջին հերթին՝ Լենինգրադի «Կարմիր Պուտիլովեց»-ում։

«Կարմիր-Պուտիլովեց»-ն առաջին տարին բաց թողեց միայն 5 տրակտոր։ 1925 թվից սկսվում է տրակտորակառուցման գործի անընդհատ աճումը։ 1925 թվին պատրաստվում է 100 տրակտոր, 1926 թվին՝ 500 տրակտոր, 1927 թվին՝ 700, և վերջապես 1928 թվին արտադրվելու յե 1.225 տրակտոր։ Ներկայումս գործարանում արտադրվող տրակտորների քանակն ամսական հասնում է 225-ի։ Առաջիկա տարիների համար վորոշված է տրակտորների արտադրությունն ավելացնել այն հաշվով, վոր 5 տարուց հետո «Կարմիր Պուտիլովեց»-ը տարեկան բաց թողնի 5.000 տրակտոր։ Ներկայումս ԽՍՀՄ-յան մեջ աշխատում են արդեն մեկ և կես հազար «կարմիր-պուտիլովյան» խորհրդային տրակտորներ։

«Կարմիր-Պուտիլովեց»-ից բացի՝ տրակտորակառուցման աշխատանքները տարվում են նաև Կոլոմենսկի գործարանում։ Ստալինգրադում սկսվել է խոշոր տրակտորային գործարանի կառուցումը։ Յերկու տարի հետո այդ գործարանները յուրաքանչյուր տարի գյուղ են ուղարկելու հազարավոր նոր տրակտորներ և տասնյակ ու հարյուր հազարավոր պահեստի մասեր։

Սակայն գյուղը միայն տրակտորով չի ապրում։ Մեզ մոտ ներկայումս էլ տասնյակ հազարավոր տրակտորների հետ միասին գյուղում գոյություն ունեն 5 միլիոն արոր։ Բոլորն էլ գիտեն, թե ինչքան ավելորդ աշխատանք է թափվում հողագործության այդ նախապատմական գործիքը կիրառելիս։ Դժվար չե յերևակայել, թե վորքան արժեքներ են իզուր տեղը կորչում նման պալենական գործիքների գործածության պատճառով։ Լավ գութանով փոխարինել արորը — այս խնդիրը գյուղի առաջ կանգնած է իր վողջ հասակով։ Բայց գութաններ և գյուղատնտեսական այլ մեքենաներ վորտեղից պետք է վերցնել։ Ցարական Ռուսաստանը մեծ մասամբ ներմուծում էր արտասահմանից։ Գյուղատնտեսական խոշոր յերկրի համար դա ուղղակի խայտառակություն էր։ Ներկայումս գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը Խորհրդային Միության մեջ նախապատերազմյան չափերից վաղուց է անցել։ Առաջիկա տարիներում այդ արտադրությունը պետք է զարգանա և ծավալվի։ Մեր սեփական արդյունաբերությունը

գյուղատնտեսության մեքենաների առաջադրած պահանջը լիովին ծածկում է։ Ռոստովում (Դոնի վրա) գյուղատնտեսական մեքենաների մի հսկայական գործարան է կառուցվում։

Գութանների, տրակտորների, հնձող, կալսող մեքենաների գործարաններն ոդի չափ անհրաժեշտ են մեր գյուղատնտեսությանը։ Բայց հենց այդ գործարանները համաշխարհային պատերազմի ժամանակ բոլոր պատերազմող յերկրներում հրաշալի կերպով ծառայում եյին պաշտպանության գործին։ Տրակտորային գործարանում կառուցվեցին այնքան հայտնի տանկերը և այլն։ Նման գործարանները խաղաղ ժամանակ մեզ տալիս են հսկայական ոգուտ, իսկ յեթե մեր Միության վրա հարձակվեն իմպերիալիստները, — այդ դեպքում էլ այդպիսի գործարանները կբարձրացնեն մեր հզորությունը։

Արհեստական պարարտացում. — Հայտնի յե, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունեն թունավոր գազերը այժմյան պատերազմի մեջ։ Այդ գազերը պատրաստվում են քիմիական արդյունաբերության մեջ։ Բայց այդ քիմիական արդյունաբերությունը խաղաղ պայմաններում գյուղատնտեսությանը հսկայական ոգուտ է բերում։ Հենց նույն թունավոր նյութերն ու գազերը ոգտագործվում են գյուղատնտեսության վնասատուների վոչնչացման համար։ Քիմիան մորեխի և ուրիշ վնասատուների դեմ պայքարելու ուժեղ միջոցներ է տալիս։

Ավելի մեծ նշանակություն ունեն քիմիական արդյունաբերության այն բնագավառները, վորոնք արհեստական պարարտանյութեր են պատրաստում։ Ռուսաստանում քիմիական արդյունաբերության անչափ թույլ զարգացած լինելու պատճառով արհեստական պարարտացման մասին գյուղը համարյա թե վոչինչ չգիտեր։ Թույլ չեյին տալիս վոր հողը հանգիստ առնի, շարունակ, տարեց-տարի քամում եյին նրա ուժերը և ինարկե ավելի վատ բերք եյին ստանում։ Իսկ զարգացած կապիտալիստական յերկրներում արհեստական պարարտանյութերի գործածության հետևանքով բերքը յուրաքանչյուր տարի ավելանում էր։

Թվերը ցույց են տվել, վոր յեթե հացաբույսերի կուլտուրայի յուրաքանչյուր դեսյատինի համար մոտավորապես 20 փութ պարարտանյութեր գործածվեն, իսկ տեխնիկական կուլտուրաների մի քանի տեսակների համար 35-ական փութ, այդ դեպքում

բերքը մեկ և կես անգամ կկրկնապատկվեր։ Բերքի այդօրինակ աճումն յեթե վերածենք դրամի, կստանանք 5 միլիարդ ռուբլի։ Այդ գումարի կեսը վճարվելու յեր արհեստական պարարտանյութերին, իսկ մնացած կեսը — լինելու յեր գյուղացիության զուտ արդյունքը։

Ահա թե ինչպիսի հնարավորություններ են թաքնված մեր տնտեսության մեջ։ Այդ պատճառով էլ խորհ. իշխանությունն աշխատում է հանքային պարարտանյութերն եժանացնել, և նրանց գնումի համար բաց է թողնում արտոնյալ վարկեր։

Այս բոլորից պարզվում է, վոր գյուղատնտեսության համար եժանագին և լավ ապրանքներ ու մեքենաներ արտադրող արդյունաբերության զարգացման և ինդուստրացման ուղիյով գյուղը կարող է դուրս գալ այն յետամնաց վիճակից, վորի մեջ նա գտնվում է։

Գյուղատնտեսության ինդուստրացումը. — Մենք արդեն ասացինք, վոր սոցիալիզմը վերացնելու յե այն անդունդը, վոր կապիտալիզմը փորել է քաղաքի և գյուղի միջև։ Այդ բանի համար անհրաժեշտ է վերացնել գյուղի դարավոր յետամնացությունը։ Գյուղատնտեսության մեջ տարվող աշխատանքը իր բնույթով, իր պայմաններով պետք է մոտենա արդյունաբերական աշխատանքին։

Ժամանակակից տեխնիկան այդ տեսակետից բաց է անում լայն հնարավորություններ։ Գյուղատնտեսության, ինչպես և արդյունաբերության մեջ, հնարավոր է գործադրել մարդու աշխատանքը մեծ չափերով թեթևացնող, նրա արտադրողականությունը բարձրացնող մեքենան։

Ժամանակակից տեխնիկան ցույց է տալիս գյուղատնտեսական մթերքների ավելի խելացի կերպով մշակման և օգտագործման ուղիները։ Վուշը ձեռքով մշակելու դեպքում մեծ չափերով կորցնում է իր արժեքը — կտրվում են թելերը և ցածրանում է նրանց վորակը։ Իսկ գործարանում մշակելը զգալի կերպով բարձրացնում է գյուղատնտեսական հում նյութի վորակը և այսպիսով ավելացնում է նրա արտադրողի — գյուղացու յեկամուտը։

Հողը մեքենայով մշակելուն անցնելը, գյուղատնտեսական հում նյութերի մշակման համար անհրաժեշտ ձեռնարկներ ստեղ-

ծելը — այս բոլորը գյուղական աշխատանքը մոտեցնում են արդյունաբերական աշխատանքին։ Այդ պատճառով էլ նման դեպքերում մենք խոսում ենք գյուղատնտեսության ինդուստրացման մասին։

Նշանակում է՝ յերկրի ինդուստրացման ուղին ընդգրկում է վոչ միայն արդյունաբերության զարգացումը։ Գյուղատնտեսության ինդուստրացման գործը կազմում է յերկրի ինդուստրացման ընդհանուր խնդրի ամենակարևոր մասերից մեկը։

Գյուղատնտեսական մթերքների մշակման համար ձեռնարկների կառուցումը անհատ գյուղացու ուժից վեր է։ Այստեղ էլ կոոպերացիան օգնության է հասնում։ Բամբակազտիչ, վուշ մշակող և այլ կոոպերատիվ զանազան գործարանները բարձրացնում են գյուղացու մթերքից ստացվող յեկամուտը։ Գյուղատնտեսության մեջ մեքենաների գործադրությունը գյուղացիության մեծամասնության համար նույնպես հնարավոր է կոոպերատիվ միության օգնությամբ միայն։ Այսպես ուրեմն, գյուղատնտեսության ինդուստրացումը, վոր իրագործվում է ամրապնդվող սոցիալիստական արդյունաբերության օժանդակությամբ, արագացնում է գյուղացիական մասսաների կոոպերացման ընթացքը։

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Կուլտուրական մակարդակը յեվ սոցիալիզմի կառուցումը. — *1917 թվին, յերբ չքավոր գյուղացիության հետ դաշնադիր բանվորական մասսաներին բոլշևիկյան կուսակցությունը առաջնորդում եր դեպի պայքար՝ կապիտալիստական իրավակարգը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու համար, — մեր թշնամիներն ամեն անկյունից հարա հրոց եյին բարձրացրել, թե բոլշևիկներն անհույս գործ են բռնել։ Նրանք ասում եյին. — Ռուսաստանը կուլտուրական ասպարեզում այնքան յետամնաց է, բանվորական դասակարգը կուլտուրապես այնքան տհաս է, գյուղն այնքան մութ ու անգրագետ է, վոր պարզապես խելագար մարդիկ կհուսան՝ նման մի յերկրում սոցիալիստական կարգերի անցնելու փորձ կատարելու։ Յեթե վորևե տեղ կարելի յե հուսալ, թե բանվոր դասակարգը, իշխանությունն իր ձեռքն առնելով, կարող է պաշտպանել յերկիրը, կարող է յերկիրը կառավարելու բարդ խնդիրներից (վորոնք դրվում են նրա առաջ իշխանությունը նվաճելու յերկրորդ որը) դուրս հանել, — դա հնարավոր կլիներ միայն այնպիսի յերկրներում, ուր բանվորների կուլտուրական մակարդակն ավելի բարձր է, ուր գիտության և տեխնիկայի զարգացումը կանգնած է ավելի խոշոր բարձրության վրա։ Մենշևիկներից ամենաձախերն անգամ գտնում եյին, վոր բանվոր դասակարգը իշխանությունը նվաճելուց առաջ իր շարքերում առաջորեն պետք է կուտակի կազմակերպիչների բավական լայն կադրեր, այնպիսի մարդկանց, վորոնք ունենան փորձառություն և գիտելիքներ՝ ղեկավարելու թե տնտեսական աշխատանքը և թե հասարակական գործունեյության զանազան բնագավառները, պետք է կուտակել իր դասակարգի մարդկանցից այնպիսի կադրեր, վորոնք իշխանությունը նվաճելուց հետո անմիջապես ղեկավարել կարողա-*

նան պետական, հասարակական և տնտեսական բոլոր և ամեն տեսակի աշխատանքների բնագավառները։ Առանց այս բանի պրոլետարիատը կարող է միայն խորտակել գոյություն ունեցող կապիտալիստական կարգերը, բայց նա ուժ չի ունենա այդ կարգերի փոխարեն ստեղծել նորը, հարազատը։

Պարզ է, վոր նման տեսակետը հանգեցնում է այնպիսի յեզրակացության, վոր բանվոր դասակարգն ընդհանուր առմամբ, յերբեք չի կարող ընդունակ լինել իր դիկտատուրան իրականացնելու։ Չե՞ վոր, քանի իշխանության գլուխը բուրժուազիան է կանգնած, պետական ապարատի բոլոր հրամանատարական դիրքերում՝ տնտեսության մեջ, գիտության մեջ, հասարակական կյանքում բուրժուազիան կարգում է իր մարդկանց, իր և կամ ուրիշ դասակարգից դուրս յեկած այնպիսի մարդկանց, վորոնք պատրաստ են հավատով և ճշմարտությամբ ծառայել կապիտալիստական կարգերի բարգավաճման և ամրապնդման շահերին։ Բուրժուազիան չի թողնի, վոր յերկրի ղեկավարման գործին, այդ հրամանատարական բարձունքներին մոտենան նրանք, վորոնք կապիտալիստական կարգերին դեմ են։ Բանվորական դասակարգից դուրս յեկած այն անհատները, վորոնք կապիտալիզմի պայմաններում կարող են բարձրանալ իրենց դասակարգի կենցաղային պայմաններից վեր, կարողանում են կրթություն ստանալ, այս կամ այն ասպարեզում մասնագետ դառնալ, — բուրժուազիան այդպիսիներին թույլ է տալիս ղեկավարել միայն այն ժամանակ, յերբ համոզվում է, վոր նրանք բուրժուական «կուլտուրայի» հրաշալիքներով բավական չափով այլասերվել են, իրենց դասակարգից կորվել, թքում են վերջինիս վիճակի վրա, ամբողջությամբ ծախվել են բուրժուազիային։ Պետական իշխանությունն իր ձեռքն առնելով միայն, բանվոր դասակարգը հնարավորություն է ստանում գործնականում ղեկավարել յերկիրը, գործնական շինարարության մեջ կոփել պետական և հասարակական աշխատանքների զանազան բնագավառների համար կազմակերպիչների լայն կադրեր։

Ի դեպ, նաև սրանում է կայանում պրոլետարական հեղափոխության (վորը իշխանության գլուխ է կարգում բանվոր դասակարգին) խոշոր տարբերությունը բուրժուական հեղափոխությունից (վորը կալվածատեր-ֆեոդալների փոխարեն իշխանության գլուխ է կարգում բուրժուական դասակարգին)։ Բուրժու-

ալիան, վորպես շահագործող դասակարգ, վորի ներկայացուցիչները խոշոր հարստություններ են դիզում, հնարավորություն ունի անցյալի կուլտուրական ժառանգությանը տիրապետել դեռևս նախ քան իշխանությունը իր ձեռքը գցելը։ Պրոլետարիատը, վորպես շահագործվող դասակարգ, այդ հնարավորությունից զուրկ է, և սրանում են կայանում պրոլետարական հեղափոխության այն խոշոր դժվարությունները, վորոնց ծանոթ չէ բուրժուական հեղափոխությունը։ Բայց բանվոր դասակարգի համար ուրիշ ճանապարհ գոյություն չունի։ Պետական իշխանությունը տիրապետելով, իր դիկտատուրան հաստատելով միայն, բանվոր դասակարգն ի վիճակի յե լինում սկսել նվաճել կուլտուրական այն նախադրյալները, ղեկավարության այն փորձը, վորի միջոցով նա կարողանում է ամրապնդել իր իշխանությունը և վորը նրան ընդունակ է դարձնում արգելելու բուրժուազիայի ամեն մի քայլը՝ իշխանությունը վերականգնելու, ընդունակ է դարձնում լուծելու այն հսկայական խնդիրները (ամեն տեսակի շահագործման, դասակարգերի բաժանման, սոցիալիզմի կառուցման), վորոնք կանգնած են պրոլետարական դիկտատուրայի առաջ և վորոնց իրագործման համար է, վոր բանվոր դասակարգը իր դիկտատուրան է հաստատում։

Իհարկե, կուլտուրապես յետամնաց յերկրում, վորպիսին մեր յերկիրն է հանդիսանում, այդ խնդիրների կենսագործումը կրկնակի դժվարությունների յե հանդիպում։ «Անգրագետ յերկրում, անկուլտուրական յերկրում սոցիալիստական հասարակակարգ լիովին կառուցելն անհնարին է» — ասել է Լենինը, բայց այդ բանը նա ասել է վոչ այն իմաստով, թե սոցիալիզմ չի կարելի լիովին կառուցել այն յերկրում, վորը անգրագետ, անկուլտուրական է հանդիսանում այն ժամանակի համար, յերբ յերկրում իշխանության գլուխ է անցնում պրոլետարիատը, — այլ հետևյալ իմաստով. — վորպեսզի այդ յերկրում սոցիալիզմի լիովին կառուցումն հնարավոր լինի, միաժամանակ անհրաժեշտ է, վոր նա դառնա գլխովին գրագետ, կուլտուրական, լուսավորված ժողովրդով մի յերկիր։

Պրոլետարիատի համար ինչքան հեշտ կլիներ իր դասակարգային նպատակներն (վերացնել հասարակության բաժանումն ըստ դասակարգերի) իրականացնել, ինչքան հեշտ կլիներ լուծել սոցիալիզմի կառուցման խնդիրը, յեթե պատմության ընթացքը այնպես լիներ, վոր պրոլետարական հեղափոխության պայմանները զարգանային ամենից առաջ այն յերկրում, վորտեղ ուրիշ բոլոր յերկրներից ավելի յեն զարգացած արտադրական ուժերը, վորտեղ պրոլետարիատն ավելի գրագետ ու կուլտուրական է։ Բայց պրոլետարական հեղափոխության համար զանազան յերկրների «հասունացումը» այնքան էլ ուղիղ գծով չի ընթանում։ «Հասարակական զարգացման անորինաչափությունը կապիտալիզմի որենքն է անպայման»։ Կապիտալիզմի այդ անհամաչափ զարգացման հետևանքով հանգամանքներն այնպես դասավորվեցին, վոր պրոլետարական հեղափոխության համար պայմանները շուտ հասունացան այնպիսի յերկրում, վորն իր տնտեսական ու կուլտուրական զարգացմամբ ավելի յետ է մնում այնպիսի կապիտալիստական յերկրներից, ինչպես են՝ Գերմանիան, Անգլիան, Ամերիկան, Ֆրանսիան։ Պարզ է, վոր մեր յերկրում բանվոր դասակարգի խնդիրը, իշխանությունը նվաճելուց հետո, հանդիսանում է — պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում անցնել մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման այն ուղին, վորը ուրիշ յերկրներում անցած են դեռևս կապիտալիզմի որով։ Նա, ինչպես արդեն ասացինք, ստեղծել է մեր հեղափոխության համար կրկնակի դժվարություններ, բայց միևնույն ժամանակ պրոլետարիատի դիկտատուրայի գոյությունը տալիս է նախապայմաններ այդ ուղին ավելի շուտ անցնելու համար, պայմաններ է ստեղծում կուլտուրական հեղափոխության իրականացման համար։

Ի՞նչ է կուլտուրան. — Բայց ի՞նչ է կուլտուրան։ Հաճախ կարծում են, վոր կուլտուրան — դա ազգաբնակչության գրագետ լինելն է, գիտության, գեղարվեստի զարգացումը, մամուլը, դպրոցները, համալսարանները, հիվանդանոցները, թատրոնները, բաղնիսները, առողջապահությունը և այլն։ Կուլտուրայի նման ըմբռնումը սխալ է, վորովհետև դա միակողմանի յե — ընդգրկում է կուլտուրայի միայն մի կողմը։ Կուլտուրան — դա նաև յերկաթուղագծերն են, մեքենաները, բազմադաշտային սիստեմը, արհեստական պարարտացումը, ավիացիան, հեռագիրը և այլն։ Մի խոսքով, կուլտուրան — դա այն բոլորն է, ինչ վոր ստեղծված է մարդու ջանքերով, աշխատանքով հակառակ այն բոլորի, ինչ վոր տալիս է նրան բնությունը։ Կուլ-

տուրան — դա այն բոլորն է, ինչով վոր մարդ զինված է՝ բնության տարերքի դեմ պայքարելու համար, կուլտուրան — դա այն ամենն է, ինչ վոր մարդուն տալիս է իշխանություն՝ բնության ուժերի վրա։ Վորքան ցածր է մարդկանց կուլտուրական մակարդակը, այնքան նրանք անօգնական են բնության հանդեպ, այնքան ավելի քիչ ուժ ունեն նրանք ստիպելու բնությանը ծառայել իրենց նպատակներին, հասարակությունը իր կարիքները բավարարելու համար այնքան ավելի շատ աշխատանք է թափում, և իրենք պահանջներն էլ ավելի պակաս են լինում և վոչ բազմազան։ Ընդհակառակը, վորքան կուլտուրան բարձր է, նույնքան բարձր է մարդու իշխանությունը բնության վրա, մարդ այնքան ավելի մեծ չափով է զինված բնության տարերքի դեմ պայքարելու համար։ Մենք տարբերում ենք — նյութական կուլտուրա և «հոգևոր» կուլտուրա։ Նյութական կուլտուրային ենք վերաբերում — մարդկային բնակարանը, նրա հագուստը, ֆաբրիկներն ու գործարանները, հեռագիրն և յերկաթուղին, լաբորատորիաներն ու գրադարանները, համալսարաններն ու հիվանդանոցները, տպարաններն ու աստղադիտական կայանները և այլն։ «Հոգևոր» կուլտուրային մենք վերագրում ենք՝ հայացքները, համոզմունքները, գիտությունը, սովորությունները, մարդկանց հասարակական ունակությունները։

Պարզ է, վոր նյութական կուլտուրան կազմում է հիմքը, կուլտուրայի բազիսը։ Ամենակուլտուրական ժողովրդից վերցրեք նյութական կուլտուրան—մեքենաները, բնակարանները, յերկաթուղիները, տպարանները, լաբորատորիաները, աշխատանքի բոլոր գործիքները, — և նրա վողջ կուլտուրան հոդս կցնդի։ Սակայն միայն նյութական կուլտուրան էլ — մի բան չէ։ Յեթե գյուղացու խրճիթում ռադիո-ընդունիչ դնենք և նրան չբացատրենք, թե ինչպես պետք է վարվել նրա հետ, — նա անգործության մատնված պետք է մնա և կամ յերեխաները նրան տանելու յեն խաղալու համար։ Գործարան բերեք մի մարդու, վորն իր կյանքում գործարան չի տեսել և դրա մասին թեթև գաղափար անգամ չունի, և դրեք նրան դազգահը ղեկավարելու, նա նույնիսկ չի իմանա, թե ինչպես պետք է շարժվի։ Ուրեմն, նշանակալից են վոչ միայն նյութական արժեքները, այլ և կարողանալը, նրանց ղեկավարել գիտենալը, նրանց հետ վարվելը, նրանց օգնությամբ աշխատել իմանալը։

Կուլտուրան դասակարգային հասարակության մեջ. — Այսպիսով, մարդկանց կուլտուրականությունն ամենից առաջ նրանում է, վոր նրանք կարողանում են կառավարել ամենաբազմակողմանի բաներ, վոր ստեղծել է մարդը՝ բնությունն իրեն էլ ավելի մեծ չափով յենթարկելու համար։ Ուստի թվում է թե բանվոր դասակարգը, իշխանությունն իր ձեռքը վերցնելուց հետո, իր կուլտուրական մակարդակը բարձրացնելու, ինչպես և աշխատավոր գյուղացիության կուլտուրական վերելքի համար, պետք է միայն յուրացնի կուլտուրական բոլոր այն ժառանգությունը, վոր մնացել է կապիտալիստական հասարակակարգից, յուրացնի ամենաառաջավոր կապիտալիստական յերկրների կուլտուրական նվաճումները, իսկ հետո կուլտուրան առաջ շարժի բնության վրա նոր հաղթանակներ տանելու ուղղությամբ։ Սակայն բանն այդքան էլ հեշտ չէ, ինչպես յերևում է։ Մենք տեսանք, վոր կապիտալիստական հասարակակարգը հանդիսանում է այնպիսի հասարակակարգ, վորտեղ հասարակության մի մասը — նրա չնչին փոքրամասնությունը, բուրժուական դասակարգը — ապրում է շահագործվող դասակարգերի հաշվին, և առաջին հերթին՝ պրոլետարիատին շահագործելու հաշվին։ Մենք տեսանք, վոր քանի գոյություն ունի հասարակության մեջ դասակարգերի բաժանումը, պետք է գոյություն ունենա պետական իշխանություն, այսինքն հարկադրող ուժ, վորը հենվում է գործիքների և ճնշման միջոցների վրա, վորոնք գտնվում են տիրող դասակարգի ձեռքում՝ իրեն հակառակ դասակարգերի դիմադրությունը խորտակելու համար, հոգուտ տիրող դասակարգի։ *Կուլտուրան տիրող դասակարգը օգտագործում է այնպես, վոր այն բոլոր իշխանությունը, վոր կուլտուրան տալիս է մարդկանց՝ բնության վրա իշխելու համար*, — բավարարի պրոլետարիատի պահանջները, ուժեղացնի և հաստատուն դարձնի իր իշխող դիրքը հասարակության մեջ։ Այդպիսով կապիտալիստական հասարակակարգում* կուլտուրան տիրող դասակարգի (կապիտալիստների) ձեռքում հանդիսանում է վոչ միայն գործիք՝ բնության վրա իշխելու, այլ և մարդկանց վրա իշխելու գործիք, *ծառայում է վոչ թե իրերը, այլ և մարդկանցը կառավարելու գործին*։ Դասակարգային հասարակության մեջ այդ պատճառով էլ մենք տեսնում ենք

* Յեվ ընդհանրապես ամեն տեսակի հասարակության մեջ, վորը հիմնված է մեկ դասակարգի կողմից մյուսին շահագործելու հիմունքների վրա։

«կուլտուրայի» այնպիսի նվաճումներ, ինչպիսիք են՝ մարդկանց ոչնչացնելու միջոցները (զենքերը, տանկերը, խեղդող գազերը և այլն), յեկեղեցիներն ու բանտերը, դատարաններն ու կախաղանները։ Դասակարգային հասարակության մեջ կան այնպիսի գիտություններ, վորոնք սովորեցնում են վոչ միայն բնական ուժերի վրա իշխանությունն ավելացնել, այլ և սովորեցնում են մարդկանց կառավարելու գործը։ Կապիտալիստական հասարակության մեջ «գիտությունը» ծառայում է մասսաների միտքը բթացնելու գործին։ Դասակարգային հասարակության մեջ կուլտուրան դրա համար էլ դասակարգային բնույթ է կրում։ Տիրող դասակարգը նրա վրա դնում է իր կնիքը, զարգացնում է նրա այն կողմերը, վորոնք վոչ միայն աջակցում են մարդկանց իշխանությունը բնության վրա ավելացնելու գործին, այլ և բնության վրա ձեռք բերած իշխանության այդ ուժեղացման միջոցով ոժանդակում են ուժեղացնելու տվյալ դասակարգի տիրող դրությունը։ Ըստ վորում, շահագործման վրա հիմնված ամեն տեսակի հասարակակարգում հաճախ այնպիսի դրություն է ստացվում, վոր շահագործողների դասակարգը դեմ է լինում կուլտուրայի զարգացման այն ձևին, վորը թեպետ և ավելացնում է մարդկանց գերիշխանությունը բնության նկատմամբ, բայց միաժամանակ վտանգ է ստեղծում նրա տիրող վիճակի համար։ Ահա թե ինչու ցարական ինքնակալությունը խավարի և տգիտության մեջ էր պահում հին Ռուսաստանի ժողովրդական մասսաներին։ Գրագետ ազգաբնակչությունը ավելի բանիմաց բանվորներ է տալիս, բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և դրանով էլ ավելացնում շահագործող դասակարգերի յեկամուտները, բայց միաժամանակ գրագետ բանվորներն ու գյուղացիները ավելի գիտակից կլինեյին, և ավելի քիչ տրամադրված կլինեյին հաշտվելու կյանքի այն սոսկալի պայմաններին, վորոնց մեջ դնում էր նրան կալվածատերերի և կապիտալիստների գերիշխանությունը։ Ցարական ինքնակալությունը այդ պատճառով էլ հնար յեղածին չափ խոչընդոտ էր հանդիսանում մասսաների կուլտուրական վերելքին, թույլ տալով վերջինս միայն այն չափերով, ինչ միանգամայն անհրաժեշտ էր՝ ավելի կուլտուրական բուրժուական պետությունների կողմից չխորտակվելու համար։

Մի ուրիշ որինակ — Դարվինի ուսմունքը. դա մարդկության կուլտուրական զարգացման գործում դեպի առաջ կատարված մի նշանավոր քայլ է։ Բայց նա միաժամանակ ուժգին հարվածում է կրոնին, կրոնի այն ուսմունքին, վորն ասում է՝ աստված մարդուն ստեղծեց հողից, նրա մեջ փչեց հոգի, բանիմաց և անմահ... և այլն։ Իսկ կրոնը շահագործման վրա հիմնված յուրաքանչյուր հասարակակարգի կարևորագույն հիմքերից մեկն է կազմում, նա ծառայում է ճնշված դասակարգերին հիմարացնելու գործին, նրանց կասեցնելով ճնշողների դեմ պայքար մղելուց, սովորեցնում է, վոր շահագործողների իշխանությունը սրբացրել է ինքը աստված և վոր աստված պատժում է այն մարդկանց, վորոնք կհանդգնեն շահագործողների լուծը թոթափելու համար վորևե փորձ անել։ Կրոնը հաշիշ է ժողովրդի համար։ Այդ հաշիշը, ժողովրդին հիմարացնելու այդ միջոցը բուրժուազիային ձեռնտու չե, և այդ պատճառով էլ վերջինս կապիտալիզմի «ամենակուլտուրական» յերկրներից մեկում — Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում — ստեղծում է «կապկային պրոցեսներ», — մեղադրյալների նստարանին է նստեցնում այն պրոֆեսորներին, վորոնք սովորեցնում են, թե Դարվինի թեորիան ճիշտ է։

Դպրոցներն ու համալսարանները, բազմաթիվ գրքերն ու լրագրները, գեղարվեստն ու կրոնը, մասսաների վրա ազդելու բոլոր միջոցները բուրժուազիան ծառայեցնում է իրեն, վորպեսզի պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը բթացնի, մարեցնի նրա սրտում դեպի բուրժուազիան տածած ատելությունը, փշրի շահագործողների դեմ պայքարի ուղղված նրա կամքը, այլասերե նրա գիտակցությունը և պիրկ շղթայե կապիտալիզմի սայլին, նրան դաստիարակե այնպես, վոր նա իր ստրկական շղթաներն անտրտունջ կրի ու իր տիրոջ ձեռքը համբուրի։ Տիրապետության յերկար տարիները բուրժուազիային լավ սովորեցրել են կառավարելու յեղանակները, նա գիտե՝ թե յերբ և ինչպես պետք է խարազանին դիմել և յերբ ու ինչպես պետք է շաքարհացով հրապուրել։ Բուրժուազիայի ձեռքին կուլտուրան դառնում է դասակարգային իշխանության մի միջոց։

Պրոլետարիատի վերաբերմունքը անցյալի կուլտուրական ժառանգության նկատմամբ. — *Այդ պատճառով էլ անցյալի կուլտուրական ժառանգության նկատմամբ պրոլետարիատի վերաբերմունքի խնդիրը շատ լուրջ բնույթ է ստանում։ Պրոլետարիատը չի կարող անցյալի կուլտուրական վողջ ժառանգությունը մի կողմ ձգել և*

իր կուլտուրայի կառուցումն սկսել հարթ ու դատարկ տեղում։ Պարզ է, վոր այնպիսի բաները, վորպիսիք են՝ գործարաններն ու ֆաբրիկները, յերկաթուղիներն ու տրամվայները, հեռախոսն ու հեռագիրը, տեխնիկայի բոլոր այն զարգացումը, վորին հասել են կապիտալիստական հասարակակարգում,—դա վոչ պակաս հաջողությամբ կարող է ծառայել և սոցիալիզմի կառուցման գործին՝ ինչպես վոր բուրժուազիայի տիրապետության որով դա ծառայում է պրոլետարիատի շահագործման գործին։ Նույնպես և բուրժուական ինտելիգենցիայի այն ներկայացուցիչները, բուրժուական այն մասնագետները, գիտության այն մարդիկ, վորոնք բուրժուական տիրապետության ժամանակներից են մնում, յեթե նրանք պրոլետարական պետության պայմաններում ազնվաբար ուզում են աշխատել, կարող են և պետք է օգտագործվեն այն մասնագիտության բնագավառում, վորին տիրապետում են։ Ավելին, պրոլետարական իշխանությունը կարող է ստիպել աշխատելու նրանցից այնպիսիներին, վորոնք սկզբնական շրջանում այնքան էլ սիրով չեն գնում աշխատելու «բոլշևիկների համար»։ Իհարկե, մի վողջ խավի ստիպել զոռով աշխատելու,—անհնարին է, այդ պատճառով էլ բանվորական պետությունը իր առաջ դնում է բուրժուական ինտելիգենցիայի կադրերի վերադաստիարակության խնդիրը, և, չնայած Շախտիի վնասատուների արարքներին, ընդհանուր առմամբ հաջողությամբ գլուխ բերելով այդ գործը։ Լենինը շատ անգամ ասել է, վոր հիմարություն է կարծել, թե կոմունիստական հասարակությունը կարելի յե միայն կոմունիստների ձեռքով կառուցել՝ սոցիալիզմի կառուցման գործում առանց ձեռնամուխ լինելու ինտելիգենցիայի այն կադրերի, մասնագետների օգտագործմանը, վորոնք կապիտալիստական հասարակակարգից են մնացել։ *Քանի դեռ պրոլետարիատը իր պրոլետարական ինտելիգենցիայի կադրերը, իր կարմիր մասնագետները շինարարության բոլոր բնագավառների համար չի ստեղծել, խնդիրը հանդիսանում է— սովորել բուրժուական մասնագետներից, միաժամանակ իրագործել նրանց աշխատանքների նկատմամբ հսկողությունը (կոնտրոլը), աշխատելով օգնել հին կարգերից մնացած նրանց սովորությունների վերացման գործին և վճռական կերպով թույլ չտալ հակահեղափոխական ամեն տեսակի սողոս-*

կումները։ Մեր կուլտուրական շինարարության ասպարեզում ամենախոշոր վտանգը կհանդիսանար — անցյալի կուլտուրական ժառանգությունը տիրապետելու հարցն անուշադրության մատնելը։ Առանց անցյալի կուլտուրայի յուրացման՝ պրոլետարական կուլտուրա ստեղծել չի կարելի։ Լենինն ասել է, վոր պրոլետարական կուլտուրան հանկարծ, ինչ վոր տեղից պատրաստի չի կարող դուրս պրծնել,—նա պետք է յերևան գա այն գիտությունների օրինաչափական զարգացման հետևանքով, վոր մարդկությունը կուտակել է բուրժուական հասարակության, կալվածատիրական հասարակության լծի տակ։

Սակայն սոցիալիստական շինարարության գործի համար պակաս վտանգ չի հանդիսանում և այն թեքումը, վորը պրոլետարիատի կուլտուրական վողջ խնդիրների լուծումը գտնում է բուրժուական կուլտուրան *առանց քննադատության յուրացնելու* մեջ,—մի թեքում, վորը մոռացության է տալիս այն, վոր կուլտուրայի ասպարեզում էլ տեղի յե ունենում նույնպիսի կատաղի պայքար հնի և նորի միջև, բուրժուազիայի և պրոլետարիատի միջև, ինչպես և տնտեսական շինարարության բնագավառում։ *Լենինը բանվոր դասակարգին զգուշացրել է, վոր չպետք է արհամարհաբար վերաբերվել դեպի անցյալի կուլտուրական ժառանգության գործի յուրացմանը, ինչպես նաև չպետք է անքննադատաբար յուրացնել այդ ժառանգությունը*։ Լենինը հիշատակում է մի օրինակ, վորը պատմության մեջ մի անգամ չէ, վոր կրկնվել է. յերբ կուլտուրապես ավելի ցածր կանգնած ժողովուրդը նվաճում է ավելի կուլտուրական ժողովրդին, հաղթվողները իրենց կուլտուրան հաղթողների վզին են փաթաթում։ Յեվ ահա, վորպեսզի նման դեպք չպատահի, այսինքն հաղթված բուրժուազիան իր կուլտուրան չփաթաթի հաղթողի վզին, պրոլետարիատը պետք է միշտ հիշի, վոր կուլտուրական ֆրոնտը դասակարգային պայքարի կարևորագույն ճակատներից մեկն է հանդիսանում, և կարևոր է հասկանալ փոխհարաբերությունը քաղաքականության, քաղաքական պայքարի և կուլտուրական շինարարության միջև։ Դա խիստ կարևոր է հիշել այժմ, յերբ, ինչպես այդ մատնանշեց կուսակցության 15-րդ համագումարը, մենք այնպիսի պայմաններում ենք գտնվում, յերբ նկատվում է յերկրում դասակարգային պայքարի մասնակի սրումն, յերբ, «չնայած սոցիա-

լիստական տնտեսական միջուկի ղեկավարող և աճող դերին, ԽՍՀՄ տնտեսության մեջ արտադրական ուժերի վերելքը ուղեկցվում է դասակարգային հակասությունների մասնակի աճումով»: Ներկայումս քաղաքի և գյուղի մասնավոր կապիտալիստական խավերը, միանալով պետական և տնտեսական ապարատի բյուրոկրատական էլեմենտների հետ, աշխատում են իրենց ազդեցությունն ունենալ ծառայողների և ինտելիգենցիայի որոշ խավի, տնայնագործների և արհեստավորների յետամնաց խավերի, բանվորների և գյուղացիների վրա: Այդ ազդեցությունը իր արտահայտությունը գտնում է նաև կուլտուրայի բնագավառում: Այդ պատճառով էլ ներկայումս առանձնապես վտանգավոր է այն թեքումը, որը կուլտուրական ֆրոնտում չի նկատում դասակարգային պայքարը, և որը կուլտուրական շինարարության խնդիրներին նայում է որպես ապադասակարգային կուլտուրականության:

Դասակարգային գիծը կուլտուրական շինարարության մեջ. — Վերցնենք անգրագիտության վերացման օրինակը: Թվում է թե այստեղ դժվար է խոսել որևէ դասակարգային գծի մասին. — լայն ծավալիր անգրագիտության վերացման գործը, որքան շատ անգրագետների գրագետ դարձնենք, այնքան լավ է: Սակայն իրերի դրությունն այնպես է, որ անգրագիտության տոկոսը բատրակների և չքավորների մեջ մի քանի անգամ բարձր է, քան կուլակների, և նույնիսկ միջակների մեջ: Պարզ է, որ դրա համար էլ ասպարիզում պետք է արթուն հսկել, որպեսզի դասակարգային գիծը չխախտվի. — մենք յերկրում անգրագիտության լիկվիդացիայի գործի արագ ընթացքի մեջ շահագործված ենք անպայման, բայց առավել ևս շահագրգռված ենք նրանում, որպեսզի առաջին հերթին անգրագիտությունը լիկվիդացիայի յենթարկվի բատրակների և չքավորության մեջ, որովհետև անգրագիտության լիկվիդացիան մի միջոց է՝ մասսաներին դեպի շինարարություն ներգրավելու համար:

Ուրիշ օրինակ: ՌՍՖՍՀ Սոցդաստիարակության 2-րդ աստիճանի դպրոցների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ուսուցման առաջին տարվա ընթացքում սովորողների մեջ բանվորների յերեխաները կազմում են 12.600, ոչ բանվորներինը — 11.500, յոթներորդ տարում բանվորներն ընդամենը — 3.100, մինչդեռ ոչ բանվորները — 7.500, իսկ իններորդ տարում — բանվորները՝ մի

այն 715, իսկ ոչ բանվորները՝ 2657*, այսինքն՝ քանի անցնում ենք ուսուցման բարձր տարիներին, բանվորների տոկոսը հարաբերական չափերով և այն էլ ցայտուն կերպով պակասում է: Բոլորի համար էլ պարզ է, որ իրերի նման դրությունը պրոլետարիատի դիկտատուրայի յերկրի համար աննորմալ է, և որ թե կուսակցության և թե ժողլուսօրգանների կարևորագույն խնդիրներից մեկը լինելու յէ — պայքարել այն ուղղությամբ, որպեսզի այդ պատկերը փոխվի:

Հասարակական գիտությունների, գրականության, գեղարվեստի մեջ մենք նկատում ենք, թե մեզ համար թշնամի բուրժուական ազդեցությունը ինչպես է ներծծվում, յերբեմն ինչպես գեղարվեստական-գրական արտադրությունը, կինոնկարը և կամ պիեսան բուրժուական ազդեցությունների ռուպորն են հանդիսանում:

Մեր ուսանողական պրոլետարական յերիտասարդության առանձին խավերի մեջ մենք յերբեմն կարող ենք նկատել կտրվածություն իր դասակարգից, ձգտումներ՝ ընդունվող գիտությունների վրա նայել ոչ թե այնպիսի գիտելիքների վրա, որոնք պետք է գործադրվեն ողջ բանվոր դասակարգի օգտի համար, այլ մի միջոցի վրա, որը ձեռք է բերվում՝ ավելի լավ ապրելու համար:

Այս բոլորն ստիպում են կուսակցության ու կոմսոմոլին առանձնապես կտրուկ կերպով շեշտել *հաստատուն դասակարգային գծի ապահովման անհրաժեշտությունը մեր ողջ կուլտուրական աշխատանքների մեջ, կուլտուրական շինարարությունը որպես քաղաքականությունից դուրս մի գործ պատկերացնող բոլոր տեսակի փորձերին վճռական հարված տալու անհրաժեշտությունը*, որովհետև նման հայացք ունենալ նշանակում է — չհասկանալ բանվոր դասակարգի խնդիրները կուլտուրական շինարարության ասպարիզում, և կարող է հասցնել այն հետևանքին, որ մենք կընկնենք բուրժուական մասնագետների ազդեցության տակ, փոխանակ այն բանի, որ նրանց օգտագործենք մեր սոցիալիստական շինարարության գործի համար:

* Այդ բանը նկատվում է նույնպես գյուղում սոցդաստիարակության գծով գոյություն ունեցող դպրոցների մեջ, որտեղ ուսման տարիների ավելացմանը զուգընթաց նկատվում է չքավորության յերեխաների նվազումը:

2. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր կուլտուրական յետամնացությունը. — *Զրույցի սկզբին ասացինք, վոր մեր յերկիրը կուլտուրապես յետամնաց է։ Յեվ իսկապես, մենք ներկայումս էլ մեր յերկրում դեռևս ունենք անգրագետների հսկայական տոկոս։ Ներկայումս ԽՍՀՄ ազգաբնակչության հազար մարդուց գրագետ են միայն 441. ուրեմն ազգաբնակչության կեսից ավելին անգրագետ է մեր յերկրում,— անգրագետների տոկոսը բարձր է առանձնապես գյուղում։ Յեթե քաղաքներում վողջ ազգաբնակչության 67 տոկոսն է գրագետ, գյուղում գրագետների տոկոսը 37-ից չի անցնում։ Գյուղում, ճիշտ է, 18—33 տարեկան հասակ ունեցող գրագետ տղամարդկանց տոկոսը հասնում է մինչև 83-ի, սակայն հենց նույն տարիքն ունեցող գրագետ կանանց տոկոսը քառասուն վեց է։ Իսկ յեթե վերցնենք ԽՍՀՄ արևելյան, ավելի յետամնաց ժողովուրդները, ապա սրանց մեջ, որինակ, Դաղստանում, գրագետ կանայք կազմում են 4%։ Չնայած այն հանգամանքին, վոր հեղափոխության տարիներին գրագետների տոկոսը մեր յերկրում ավելացել է համարյա թե մեկ ու կես անգամ, այնուամենայնիվ անգրագիտությունը շարունակում է մնալ մեր կուլտուրական շինարարության մեջ վորպես ամենամեծ խոչընդոտը։*

Հեղափոխության տարիներին ազգաբնակչության ընդգրկումը դպրոցական ցանցում ԽՍՀՄ-ի մեջ հետևյալ պատկերն է ներկայացնում.

Դպրոցների տիպը	Սովորում եյին (հազարներով)		Ավելացումն %%
	1914 թ.	1926/27 թ.	
1. Ընդհանուր կրթական մասսայական տիպի դպրոց (ուսուցման 1—4 տարվա դասընթ.)	7.235	9.108	25
2. Մասնագիտական (սուրեն և միջնակարգ դպրոցներ)	267	499	86
3. Բարձրագույն դպրոց	110	168	52

Չնայած վոր աճումն զգալի յե, բայց այնուամենայնիվ նա յետ է մնում մեր պահանջներից, մանավանդ յեթե հաշվի առնենք

այն, վոր դպրոցական հասակ ունեցող պատանիների (մինչև 15 տարեկան) կեսը անգրագետ են մնում։ Գրագիտության խնդրում մենք դեռևս շատ յետ յենք մնում կապիտալիստական յերկրներից։ Պերճախոս են հետևյալ թվերը.

Ազգաբնակչության ամեն մեկ հազար մարդուց սովորում են՝

Միացյալ Նահանգներում (Հյուս. Ամերիկա) 206
Անգլիայում 187
Ճապոնիայում 148
ՌԽՍՖՀ 75

Խ. Հայաստանում, յեթե ազգաբնակչության թիվը կլոր գումարով վերցնենք 900 հազար, ապա առ 1-ն հունվար 1926 թ. տվյալների համաձայն յուրաքանչյուր 1.000 մարդուն սովորող ընկնում է 111 (ամբողջ Խ. Հայաստանում՝ 99.985 սովորող)։

Գրադարաններով և ամեն տեսակի կուլտուրական հիմնարկներով էլ մենք աղքատ ենք, կինոթատրոնների և ռադիո-ընդունիչների ցանցը մեզնում ինչքան քիչ է Արևմուտքից։

Մեր կենցաղի պայմաններն էլ շատ յետամնաց են։ Մեր բնակարանային պայմանները դեռևս շատ ծանր յեն։ Ժողովուրդը կուտակված ու կեղտոտ է ապրում։ Շատ քաղաքներում և բանվորական արվարձաններում ջրմուղին ու կոյուղին (կանալիզացիան) բացակայում են։

Մեր յետամնացության պատճառով դեռևս իրենց գործն են տեսնում այնպիսի դաժան հիվանդությունները, վորպիսին է ծաղիկը, ժանտախտը, վորոնց գոյության մասին Արևմուտքում վաղուց են մոռացել։ Մեր գյուղերում շատ հաճախ յենք հանդիպում տ ր ա խ ո մ ա (աչքացավ) կոչված հիվանդությանը, վորի տարածման պատճառները հակասանիտարական պայմաններն են։ ՌԽՍՖՀ մեջ ազգաբնակչության ամեն 600 մարդուն ընկնում է մեկ հիվանդանոցային մահճակալ, մինչդեռ Շվեդիայում — 90 մ., իսկ Գերմանիայում — 145 մ.։

Տնտեսության ռեկոնստրուկցիան յեվ կուլտուրական հեղափոխությունը. — *Կուլտուրական շինարարության խնդիրները վերջին տարվա ընթացքում, առանձին սուր բնույթ են ստացել*

և ընդհանուր ուշադրություն են գրավում իրենց վրա։ Նուսակցության և վոչ մի համագումար կուլտուրական աշխատանքի հարցերին այնքան մեծ ուշադրություն չեր դարձրել, վորքան XV համագումարը։ Այստեղ վոչ մի զարմանալի բան չկա։

Վերջին տարիների ընթացքում մեր տնտեսությունը վերջացրել ե իր վերականգնման շրջանը և ռեկոնստրուկցիայի (վերակառուցման) շրջանն ե մտել։ Այդ շրջանը մի շարք նոր խնդիրներ ե դնում և առանձնապես սուր կերպով նա կուլտուրական հեղափոխության խնդիրն ե դնում։ Տնտեսության վոր ճյուղը վերցնես, մեր աշխատանքի վոր բնագավառը վերցնես — ամենուրեք մեր դեմ ե յելնում մեր յերկրի կուլտուրական յետամնացությունը։

Արդյունաբերության ռեկոնստրուկցիան, մի կողմից՝ առաջադրում ե մասնագետների և այն էլ նոր տիպի, հասարակական ջիղ ունեցող մասնագետների հսկայական պահանջ, իսկ մյուս կողմից՝ նա առաջադրում ե շատ բարձր վորակի աշխատանքի պահանջ, քան այն մակարդակը, վոր ունենք մենք ներկայումս։

Գյուղական տնտեսության վերասարքավորման խնդիրները — գյուղատնտեսության կոլլեկտիվ ձևերի զարգացման տեմպի արագացումը, նոր խորհ. տնտեսությունների կազմակերպումը, անհատական չքավորական և միջակ տնտեսությունների բերքատվության բարձրացման խնդիրը, կոոպերացիայի աճումը գյուղում և այլն, — այս բոլոր խնդիրներում եա խոչընդոտ ե հանդիսանում մեր կուլտուրական յետամնացությունը — ղեկավար կադրերի պակասը, գյուղացիության կուլտուրական ցածր մակարդակը։

Ժողտնտեսության ռեկոնստրուկցիայի խնդիրները սերտ կերպով կապված են բանվորական մասսաների ակտիվության և ինքնագործնեյության բարձրացման, տնտեսական շինարարության խնդրի հետ, շինարարության թերությունների դեմ, բյուրոկրատիզմի դեմ պայքարելու ինքնաքննադատության ծավալելու խնդրի հետ։ Առանց դրան՝ ժողտնտեսության ռեկոնստրուկցիայի խնդիրը լուծել անհնարին ե դառնում։ Բյուրոկրատիզմի դեմ պայքարելու ամենաճիշտ միջոցն հանդիսանում ե բանվորների և գյուղացիների կուլտուրական մակարդակի բարձրացումը։ «Կարելի յե պետական ապարատում յեղած բյուրոկրատիզմն հայհոյել, կարելի յե կշտամբել ու անարգության սյունին գամել մեր առորյայում յեղած բյուրոկրատիզմը, բայց յեթե բանվորական լայն մասսաների մեջ գոյություն չունի կուլտուրականության վորոշ մակարդակ, վորը հնարավորություն, ցանկություն, կարողություն ե ստեղծում պետական ապարատը հսկողության տակ առնելու ներքևից, իրենց՝ բանվորական մասսաների ուժով, — բյուրոկրատիզմը բայց և այնպես գոյություն կունենա» (Ստալին)։

Դասակարգային պայքար յեվ կուլտուրական հեղափոխություն. — Ժողտնտեսության ռեկոնստրուկցիայի ժամանակաշրջանը սերտ կերպով կապված ե այն ուժեղ արշավի հետ, վոր պրոլետարիատը ձեռնարկում ե քաղաքի և գյուղի մասնավոր կապիտալիստական ելեմենտների դեմ։ Մասնավոր կապիտալիստական այդ ելեմենտները պրոլետարիատի արշավի ուժեղացման պատճառով սկսում են իրենց հակահարձակումը ծավալել, աշխատելով իրենց ազդեցությունը տարածել աշխատավորության զանազան խավերի վրա։ Այդ ինկատի ունենալով, 15-րդ համագումարը նշեց, վոր «այդ թշնամական ազդեցությանը և կապիտալիստական ելեմենտների աճող ակտիվությանը բանվոր դասակարգը Համկոմկուսի ղեկավարությամբ հակադրել ե պրոլետարական դիկտատուրայի ռեժիմի ամրապնդումը, պրոլետարական մասսաների ակտիվության ավելացումը, ինքնագործնեյությունն ու կուլտուրականությունը (խորհուրդների աշխուժացում, պրոֆդեմոկրատիայի և կոոպերատիվ-հասարակայնության ծավալում, պրոլետարիատի իդեյական ազդեցության ուժեղացումը գյուղի վրա, կուլտուր-կրթական աշխատանքը մասսաների մեջ և այլն), ինչպես և պրոլետարիատի իդեյական ազդեցության ուժեղացումը խորհրդային ինտելիգենցիայի լայն խավերի վրա։ Պայքարի այդ ֆրոնտում ունեցած անյերկրա հաղթանակներն ընդգծելով, համագումարը անհրաժեշտ ե համարում հետագայում պրոլետարական մասսաների ամեն ձևով համախմբումը և իդեոլոգիական ու կուլտուրական ֆրոնտում պայքարի առանձին ուժեղացումը»։

Բուրժուական և մանր բուրժուական ազդեցությունները յերևան են գալիս ամենատարբեր ձևերով։

Կրոնի ազդեցություն. — Մասսաների վրա բուրժուական ազդեցությունը տարածելու կարևորագույն ձևերից մեկն էլ հանդի-

և ընդհանուր ուշադրություն են դրավում իրենց վրա։ Կուսակցության և վոչ մի համագումար կուլտուրական աշխատանքի հարցերին այնքան մեծ ուշադրություն չեր դարձրել, վորքան XV համագումարը։ Այստեղ վոչ մի զարմանալի բան չկա։

Վերջին տարիների ընթացքում մեր տնտեսությունը վերջացրել է իր վերականգնման շրջանը և ռեկոնստրուկցիայի (վերակառուցման) շրջանն է մտել։ Այդ շրջանը մի շարք նոր խնդիրներ է դնում և առանձնապես սուր կերպով նա կուլտուրական հեղափոխության խնդիրն է դնում։ Տնտեսության վոր ճյուղը վերցնես, մեր աշխատանքի վոր բնագավառը վերցնես — ամենուրեք մեր դեմ է յելնում մեր յերկրի կուլտուրական յետամնացությունը։

Արդյունաբերության ռեկոնստրուկցիան, մի կողմից՝ առաջադրում է մասնագետների և այն էլ նոր տիպի, հասարակական ջիղ ունեցող մասնագետների հսկայական պահանջ, իսկ մյուս կողմից՝ նա առաջադրում է շատ բարձր վորակի աշխատանքի պահանջ, քան այն մակարդակը, վոր ունենք մենք ներկայումս։

Գյուղական տնտեսության վերասարքավորման խնդիրները — գյուղատնտեսության կոլլեկտիվ ձևերի զարգացման տեմպի արագացումը, նոր խորհ. տնտեսությունների կազմակերպումը, անհատական չքավորական և միջակ տնտեսությունների բերքատվության բարձրացման խնդիրը, կոոպերացիայի աճումը գյուղում և այլն, — այս բոլոր խնդիրներում ևս խոչընդոտ է հանդիսանում մեր կուլտուրական յետամնացությունը — ղեկավար կադրերի պակասը, գյուղացիության կուլտուրական ցածր մակարդակը։

Ժողտնտեսության ռեկոնստրուկցիայի խնդիրները սերտ կերպով կապված են բանվորական մասսաների ակտիվության և ինքնագործունեության բարձրացման, տնտեսական շինարարության խնդրի հետ, շինարարության թերությունների դեմ, բյուրոկրատիզմի դեմ պայքարելու ինքնաքննադատության ծավալելու խնդրի հետ։ Առանց դրան՝ ժողտնտեսության ռեկոնստրուկցիայի խնդիրը լուծելն անհնարին է դառնում։ Բյուրոկրատիզմի դեմ պայքարելու ամենաճիշտ միջոցն հանդիսանում է բանվորների և գյուղացիների կուլտուրական մակարդակի բարձրացումը։ «Կարելի յե պետական ապարատում յեղած բյուրոկրատիզմն հայհոյել, կարելի յե կշտամբել ու անարգության սյունին գամել մեր առորյայում յեղած

բյուրոկրատիզմը, բայց յեթե բանվորական լայն մասսաների մեջ գոյություն չունի կուլտուրականության վորոշ մակարդակ, վորը հնարավորություն, ցանկություն, կարողություն է ստեղծում պետական ապարատը հսկողության տակ առնելու ներքևից, իրենց՝ բանվորական մասսաների ուժով, — բյուրոկրատիզմը բայց և այնպես գոյություն կունենա» (Ստալին)։

Դասակարգային պայքարը յեվ կուլտուրական հեղափոխությունը. — Ժողտնտեսության ռեկոնստրուկցիայի ժամանակաշրջանը սերտ կերպով կապված է այն ուժեղ արշավի հետ, վոր պրոլետարիատը ձեռնարկում է քաղաքի և գյուղի մասնավոր կապիտալիստական էլեմենտների դեմ։ Մասնավոր կապիտալիստական այդ էլեմենտները պրոլետարիատի արշավի ուժեղացման պատճառով սկսում են իրենց հակահարձակումը ծավալել, աշխատելով իրենց ազդեցությունը տարածել աշխատավորության զանազան խավերի վրա։ Այդ նկատի ունենալով, 15-րդ համագումարը նշեց, վոր «այդ թշնամական ազդեցությանը և կապիտալիստական էլեմենտների աճող ակտիվությանը բանվոր դասակարգը Համկոմկուսի ղեկավարությամբ հակադրել է պրոլետարական դիկտատուրայի ռեժիմի ամրապնդումը, պրոլետարական մասսաների ակտիվության ավելացումը, ինքնագործունեությունն ու կուլտուրականությունը (խորհուրդների աշխուժացում, պրոֆդեմոկրատիայի և կոոպերատիվ-հասարակայնության ծավալում, պրոլետարիատի իդեյական ազդեցության ուժեղացումը գյուղի վրա, կուլտուր-կրթական աշխատանքը մասսաների մեջ և այլն), ինչպես և պրոլետարիատի իդեյական ազդեցության ուժեղացումը խորհրդային ինտելիգենցիայի լայն խավերի վրա։ Պայքարի այդ ֆրոնտում ունեցած անյերկբա հաղթանակներն ընդգծելով, համագումարը անհրաժեշտ է համարում հետագայում պրոլետարական մասսաների ամեն ձևով համախմբումը և իդեոլոգիական ու կուլտուրական ֆրոնտում պայքարի առանձին ուժեղացումը»։

Բուրժուական և մանր բուրժուական ազդեցությունները յերևան են գալիս ամենատարբեր ձևերով։

Կրոնի ազդեցությունը. — Մասսաների վրա բուրժուական ազդեցությունը տարածելու կարևորագույն ձևերից մեկն էլ հանդի-

սանում է կրոնը։ Կրոնը տիրող դասակարգերի ձեռքին միշտ զենք է հանդիսացել։ Մեր օրերում քաղաքի և գյուղի կապիտալիստական ելեմենտների՝ մասսաների վրա իրենց ազդեցությունն ուժեղացնելու փորձի հետ միասին նկատվում է զանազան կրոնների ու դավանությունների պատկանող հոգևորականության ակտիվությունը։ Շատ բնորոշ է այն, վոր տերտերները, մոլլաները, սեկտանտները և այլն ձգտում են ծավալել աշխատանքի մասսայական ձևեր, ճգնելով հենարան գտնել բանվորական և գյուղացիական մասսաների մեջ։ Այսպես, օրինակ, յեկեղեցական խորհուրդների ընտրության ժամանակ տերտերներն աշխատում են, վոր նրանց մեջ բանվորներ լինեն, և այն էլ հնար յեղածին չափ այնպիսինները, վորոնք գրավում են այս կամ այն ընտրական պաշտոն (խորհուրդների, զավկոմների անդամներ և այլն)։ Յեվ հոգևորականությունը և՛ սեկտանտները ձգտում են ծավալել աշխատանքի յուրահատուկ ձևեր կանանց և յերիտասարդության մեջ, անգամ կանգ չառնելով նույնիսկ իրենց կրոնի մի շարք կանոնների խախտման առաջ։ Այսպես, օրինակ, մոլլաները կանանց մզկիթ են թողնում։ Տերտերներն ու սեկտանտները առանձնակի ուշադրություն են դարձնում՝ յերիտասարդության շրջանում իրենց ազդեցության ուժեղացման վրա։ Յերբեմն կրոնը շատ նուրբ խաղեր է սարքում և իր ազդեցությունն ուժեղացնելու համար զանազան ձևեր ընդունում։ Ուշագրավ է այդ տեսակետից մեզ մոտ «ազատ յեկեղեցին» կամ «ազատ-յեկեղեցական յեղբայրությունը»։ Յուրաքանչյուր բանվոր ու գյուղացի գիտե, վոր Էջմիածինը կամ հին կրոնը գործել է իրենց թշնամիների — ցարիզմի ու դաշնակ-մաուզերիստների — հետ միասին։ Նա իր աղոթքներով ու քարոզներով, և երբեմն էլ զանազան մարդկանց միջոցով, ճնշել է մասսաների բողոքն ու զայրույթը՝ ցարիզմի ու դաշնակ-մաուզերիստների դեմ ուղղված։ Ներկայումս հին յեկեղեցին հեղինակություն չունի, նա վարկաբեկված է և անզոր՝ իր յետևից մասսաներ տանելու։ Յեվ ահա, նախկին յեկեղեցուն պատկանող կրոնավորներից վոմանք, իրենց յետևից մասսաներ տանելու համար, աշխատում են «բանվորագյուղացիականանալ»։ Բայց մասսաներին գրավելու համար պետք է նաև «թշնամական» դիրք բռնել դեպի հինը, հայհոյել, խայտառակել նրա վարմունքը։ Ազատ-յեկեղեցականներն այդպես էլ վարվում են. Նրանք իրենց

կոչն ուղղում են «հայ ժողովրդին», մերկացնում Էջմիածնի կեղտոտ արարքները և միաժամանակ քարոզում մի ուրիշ դավանություն, ինարկե, նույնքան հակահեղափոխական, նույնքան խայտառակ, ինչպես և հինը. Նրանք քարոզում են աշխատավորության «զոհաբերության գնալ», «ներշնչվել աստուծմե», այսինքն հեռու մնալ դասակարգային պայքարից ու սոցիալիստական շինարարությունից, հնազանդ լինել բուրժուազիային։ Սակայն այդ բոլորը նրանք անում են նոր, ճկուն ձևերով, աշխատելով հարմարվել տիրող պայմաններին։

Յեվ միայն մեզ մոտ, Հայաստանում չէ, վոր նկատվում է այս բանը։ ԽՍՀ Միության մեջ գոյություն ունեցող բոլոր կրոնները աշխատում են հարմարվել այժմեականությանը։ Տուլայի նահանգում հոգևորական համագումարը պարտավորեցրել է հոգևորականությանը ուսումնասիրել Մարքսի ուսմունքը։ Մոսկվայում և Լենինգրադում նրանք, ովքեր պատրաստվում են տերտեր դառնալ, լուրջ կերպով ուսումնասիրում են սոցիալիզմի պատմությունը և այլն։ Շատ ու շատ դեպքերում ագիտացիայի զանազան ձևեր յեկեղեցին վերցնում է մեզանից. — Ռուսաստանի մի շարք յեկեղեցիներում պատի լրագրներ են հրատարակվում, մեծ տոների ժամանակ յեկեղեցիները կոնցերտներ են սարքում, հրավիրելով օպերային արտիստներ։ Սեկտանտները յերիտասարդության համար պարեր յեն կազմակերպում իրենց «աղոթքներից» հետո։ Ղրիմում պատահել է դեպք, յերբ մոլլան յեղել է մայիս-մեկյան ցույցի ղեկավար։

Ինչո՞ւ համար են կատարվում այս բոլորը։ Յեկեղեցին աշխատում է նոր ձևեր գտնել մասսաների վրա իր ազդեցությունն ուժեղացնելու համար։ Հոգևորականության այդ փորձերին մենք պետք է հակադրենք հակակրոնական ուժեղ պրոպագանդը, վորը չպետք է թուլացնենք։

Անտիսեմիտիզմ. — Անտիսեմիտիզմը անցյալում, ցարական Ռուսաստանում խոշոր չափերի յեր հասնում։ Այդ հոսանքը հրահրվում եր ցարիզմի կողմից՝ յուրաքանչյուր հեղափոխական խմորումների ժամանակ։ Աշխատավորության ուշադրությունը ցարական կառավարությունը դրանով աշխատում եր չարիքի բուն հեղինակի վրայից հեռացնել, իսկ յեկեղեցին ժողովրդի մեջ դրդում եր կրոնական մոլեռանդություն՝ հրեաների հանդեպ, «վորոնք տանջել ու չարչարել են Հիսուսին և քրիստոնյա յերեխաների

արյուն են խմում»։ Յերբ յերկիրը ծանր վիճակ եր ապրում, յերբ զգացվում եր տնտեսական կրիզիս և մասսաների դժգոհությունները մեծ չափերի եյին հասնում, ցարական իշխանությունը գործի յեր դնում իր այդ հին և սովորական միջոցը — տարածվում եյին պրովակացիաներ, վոր այդ բոլորի հեղինակները հրեաներն են, վորոնք ապրանքը թանգ են ծախում և այլն, իսկ կոտորածի համար ամենից անգիտակից մասսաներին բավական եր ողի խմեցնել։ Ցարական վոստիկանությունը ինքն ել շատ հաճախ, շորերը փոխած, մասնակցում եր այդ ջարդերին։

Բուրժուազիան ու կալվածատերերը ուզում եյին անտիսեմիտիզմը ոգտագործել հեղափոխության դեմ կռվելու համար, տարածելով պրովակացիաներ, թե իբր հրեաներն են, վոր ուզում են Ռուսաստանը կործանել և այլն։

Ռուսաստանում ներկայումս էլ զգացվում ե այդ հոսանքը, վորին գլխավորում են բուրժուական ելեմենտները, աշխատելով ոգտագործել բանվորների և գյուղացիների ատելությունը դեպի շահագործողները։ Նրանք հրահրում են աշխատավորության անգիտակից խավերին հրեաների դեմ, վոր իբր թե վերջիններս նեպմաններ են, շահագործողներ։ Ինչ խոսք, վոր թե՛ հրեաների, թե՛ ռուսների, թե՛ հայերի մեջ կան և՛ շահագործողներ, և՛ ձրիակերներ, և՛ բուրժույներ, բայց կան և աշխատավորներ։ Յուրաքանչյուր կոմյերիտական պետք ե իմանա, վոր անխտիր բոլոր ազգերի, ինչպես և հրեա ազգի աշխատավորությունը՝ բանվորներն ու գյուղացիները՝ խորհ. իշխանության հենարանն են հանդիսանում, իսկ բուրժույները մեր թշնամիներն են՝ ինչ ազգի յել պատկանելիս լինեն։ Այս բանը պետք ե հասկացնել ամեն մի աշխատավորին։

Ազգային նախապաշարումներ: — Ռուսաստանում ցարիզմը հեղափոխության դեմ կռվելու համար ազգային ատելություն ե սերմանում։ Բուրժուազիան, յեկեղեցին ոգնում եյին այդ բանի կազմակերպման գործին, վորի միջոցով կարելի յե կռվել հեղափոխությունների դեմ, նա ձեռնտու յե բուրժուազիային, վորովհետև ջլատում ե պրոլետարիատի ուժերը և բուրժուազիայի դեմ մղված պայքարի թափը թուլացնում ու քայքայում ե։

Պրոլետարիատն ու աշխատավորությունն ընդհանրապես չեն կարող ազգայնական լինել, վորովհետև նրանք ճնշողների ու շահագործողների դեմ պայքարելու համար պետք ե համախմբվեն առանց ազգի խտրության։ Հայ բուրժուան և թուրք բուրժուան, ռուս կապիտալիստն ու վրացի կապիտալիստը միմյանց դեմ թշնամություն կարող են ունենալ (կապիտալիստներն ընդհանրապես ինչ ազգի յել պատկանելիս լինեն, այն չափով, ինչ չափով վոր պայքարում են շուկայի համար միմյանց դեմ, — իրար թշնամի կլինեն), վորովհետև հրեա կամ հայ բուրժույը կարող ե մի քիչ ավելի ճարպիկ լինել ու դրանով սնանկացնել ռուս կամ վրացի բուրժույին, և, ընդհակառակը. սակայն հայ, ռուս կամ թուրք բանվորը միմյանց դեմ վոչ մի թշնամություն չեն կարող ունենալ, վորովհետև նրանք միևնույն գործարանում շահագործվել են միասին և ճաշակել թե հայ, թե ռուս և թե թուրք գործարանատիրոջ արարքները։

Ներկայումս էլ մեզ մոտ ազգայնականության և շովինիզմի (շովինիզմը մի հայացք ե, վոր ասում ե — միայն իմ ազգն ե լավ, միայն իմ ազգը պետք ե իշխող դերում լինի, մյուս ազգերը վատ են) հրահրողները նորից հանդիսանում են բուրժույներն ու քաղաքի և գյուղի կապիտալիստները։ Նրանք են, վոր ուզում են ազգայնականությունը տարածել աշխատավորության մեջ, քարոզել՝ թե մեր ազգը դասակարգային խնդիրներից առաջ ազգային խնդիրներ ունի։ Դաշնակները կամ մենշևիկները մինչև հիմա յել աշխատում են նման ձևով մոտենալ աշխատավորությանը, հայ և վրացի գյուղացիների ու բանվորների մեջ ատելություն զարթեցնել դեպի ռուս բանվորներն ու գյուղացիները և դասակարգային պայքարի հարցից առաջ դնել ազգային ընդհանուր թշնամու (այսինքն հեղափոխության) դեմ կռվելու հարցը. դաշնակների, մենշևիկների և մուսավաթիստների կազմակերպություններն արտասահմանում շարունակ այս մասին ել գրում են, և նույնիսկ իրար հետ միացյալ ճակատ են կազմում «ռուսական լուծը թոթափելու համար», այսինքն պրոլետարիատի դիկտատուրան տապալելու համար։ Ազգայնականությունը զանազան և յերբեմն շատ նոր ձևեր ե ընդունում, վորոնց հրահրողը դարձյալ բուրժուազիան ե։ Ազգայնականության նոր ձևերից մեկն ել հանդիսացել ե (և հանդիսանում ե) հայկական սպեցիֆիզմը*, վորը

* ՍՊԵՑԻՖԻԿՆԵՐ — «այդ անունը ընկ. Ս. Շահումյանը կպցրեց «Հայ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը», վորը առաջ յեկավ 1903 թ.։ Դրա հիմ-

աշխատել է միշտ խոչընդոտ հանդիսանալ հայ պրոլետարիատին ռուս, վրացի և թուրք պրոլետարիատի հետ միանալու, և այդպիսով ջլատել է պայքարի ճակատը: Ներկայումս էլ նա մեզ համար հանդիսանում է մի խոշոր վտանգ, վորովհետև մեզ մոտ խոշոր կուլտուրական շինարարական աշխատանքներ են կատարվում և սպեցիֆիկները կարող են դրանց շեղել ինտերնացիոնալիստական ռելսներից ու տալ բուրժուական բովանդակություն: Մեր շինարարության մեջ յեղած «հայկական վոճի» յերևան գալը, շինված տների տեսքը, վոր այնքան հիշեցնում են հին ամրոցներ և վանքեր, արդեն իսկ վկայում են, վոր նման թեքումն յեղել է և

նադիրները նախկին դաշնակցականներ եյին: «Սպեցիֆիկները» մարքսիզմի դիմակով ու ֆրազեոլոգիայով՝ փաստորեն նացիոնալիստական իդեոլոգիա ունեյին: Սպեցիֆիկները գտնում եյին, վոր հայ բանվորական շարժումը, հետևապես և հայ սոցիալ-դեմոկրատիան, յուրահատուկ–ս պ ե ց ի ֆ ի կ խնդիրներ ունի, և անհրաժեշտ է, վոր հայ բանվորն ունենա իր ո ւ ր ո ւ յ ն կազմակերպությունը և այդպիսով կռիվ մղի հայրենի հակառակորդների դեմ: Սպեցիֆիկները գտնում եյին, վոր իրենք կկազմակերպեն հայ բանվորներին ազգային շրջանակներում և վորպես մի սեկցիա կմտնեն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ: Սակայն վերջին հաշվով նրանց կազմակերպչական սկզբունքը ջլատում եր բանվորական միասնական շարժումը, վորովհետև միևնույն ձեռնարկության մեջ աշխատող տարբեր ազգության պատկանող բանվորները պետք է անջատ-անջատ կազմակերպվեյին, իսկ այդ հանգամանքը շատ ձեռնտու յեր բուրժուազիայի համար և ջուր եր լցնում նրա ջրաղացին: Հայ բանվորի նկատմամբ՝ ըստ ձևի տարբեր, բայց ըստ եյության միատեսակ մոտեցում ունեյին հայ տերտերը, դաշնակցականը և սպեցիֆիկը, վորոնք հայ բանվորական մասսաներին բաժանում եյին նրանց այլազգի յեղբայրներից: Լենինը իր ժամանակին մի առիթով դրանց համարեց բունդական մի վիժվածք, կազմալուծող գրագետների մի շայկա: 1920 թ. հունվարին Յերևանում նրանց մի քանի պարագլուխները հրապարակում են մի մանիֆեստ, վոր նրանց կարապի յերգը դարձավ: Այդ մանիֆեստով, ճոռոմ ֆրազներով զինված, այդ կազմակերպությունը, վոր մի ժամանակ խոսքով կռվում եր դաշնակցության՝ ազգային-բուրժուական այդ կուսակցության դեմ, այժմ գլուխ է խոնարհում դաշնակցական պետականության առաջ, քարոզում մոռացության տալ ամեն սկզբունքային տարաձայնություն նրանց հետ, կուրծք ծեծում հանուն կոալիցիոն կառավարության, վորին պիտի մասնակցեյին բոլոր «կենսական ուժերը անխտիր, անկախ նրանց սոցիալական դիրքից, համոզմունքից և կուսակցական պատկանելիությունից»: Սպեցիֆիկների այդ կազմակերպությունը մանր-բուրժուական, մեշչանական և ինտելիգենտական մի խմբակցություն եր, վորը վոչ մի կապ չուներ մարքսիզմի հետ, պրոլետարական պայքարի հետ: Նրանք դարձան դաշնակցության հակահեղափոխական գործի պաշտպաններ և իրենց այդ ծառայության մեջ էլ մահ գտան»:

(«Ք ա ղ ա ք ա կ ա ն բ ա ռ ա ր ա ն», հ ր ա տ. ԽՍՀՄ Ժ ո ղ. Կ ե ն տ ր. Հ ր ա տ ա ր ա կ չ ո ւ թ յ ո ւ ն Մ ո ս կ վ ա, 1928 թ.)

վորը սակայն կանխվեց իր ժամանակին: Ազգայնականությունը արտահայտվում է բազմաթիվ ձևերով. որինակ՝ Անդրկովկասյան Ֆեդերացիան ստեղծելու խնդրում դա յերևան յեկավ Վրաստանի կոմունիստական կուսակցության մի փոքրիկ խմբի մեջ, վորը դեմ եր ֆեդերացիային, և Վրաստանի կոմունիստական կուսակցությունը դրանց վորակեց «ուկլոնիստներ» անունով:

Անցյալում վելիկոռուսները տիրել են ամբողջ ԽՍՀՄ սահմաններում յեղած յերկրներին, իշխել նրանց վրա, ճնշել այնտեղ ապրող մյուս ազգերին, նրանց թելադրել իրենց կամքը՝ ռուս լեզվով խոսելու, գրելու, փակել են նրանց դպրոցները: Իսկ ներկայումս, յերբ Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ այդ ազգերը դուրս են յեկել ճնշված վիճակից, ստեղծել են իրենց պետական կյանքը և այս կամ այն վելիկոռուսից պահանջում են՝ Ուկրայինայում, Վրաստանում, կամ Հայաստանում աշխատելու համար իմանալ պետական լեզուն — ուկրայիներեն, վրացերեն կամ հայերեն, — այդ բանը դուր չի գալիս վելիկոռուսներին, վորոնք, կորցնելով իրենց նախկին արտոնյալ վիճակը, այժմ ստիպված պետք է առաջվա ճնշված ազգի լեզուն սովորեն, և յերազում են ու յերբեմն էլ աշխատում՝ հին ժամանակների պես վարվել.— ս ա ա ր դ ե ն վ ե լ ի կ ո ռ ո ւ ս ա կ ա ն շ ո վ ի ն ի զ մ է: Շովինիզմի մի տեսակն էլ այն է, վոր նախկին ճնշված ժողովուրդների բուրժուազիան աշխատում է դասակարգային պայքարը տվյալ ազգի ներսում հարթել, աշխատում է կասկածելի վերաբերմունք քարոզել դեպի հարևան ազգի կամ նախկին իշխող ազգի աշխատավորությունը:

Ազգայնականության, շովինիզմի այս խիստ բազմազան ձևերի և յերևույթների դեմ կռվողը պետք է պայքարն անդուլ կերպով, աշխատելով աչալուրջ հսկել յերիտասարդության ինտերնացիոնալիստական դաստիարակության գործին, և հետևել, վոր ազգայնական-բուրժուական տենդենցները յերևան չգան մեր տնտեսական և կուլտուրական շինարարության ասպարեզում:

Պայքար՝ նոր կենցաղի համար.— Վերջերս կենցաղի, դաստիարակության և մարդկային փոխհարաբերությունների հարցերը բանվորական մասսաների մեջ սկսում են լուրջ ուշադրության առարկա դառնալ, մի բան, վոր առաջ այդ չափերով չէր նկատվում: Այս բանը զարմանալի չպետք է թվա, վորովհետև սոցիա-

լիստական շինարարության հաջողությունները մեզ սկսում են ընդհուպ մոտեցնել կենցաղի վերակազմության խնդրին։ Նեպի առաջին տարիները մենք զբաղված էյինք համարյա բացառապես տնտեսության վերականգնման խնդիրներով։ Այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ հասարակական սնունդը, հասարակական ճաշարանները, լվացատները, մանկամսուրները, մանկապարտեզները և այլն — հիմնարկություններ, որոնք ոժանդակում են կնոջ ազատագրության գործին, որոնք «սոցիալիզմը քաշում են դեպի կենցաղը», չէյին կարող առանձնակի ուշադրություն գրավել, որովհետև նման հիմնարկների կառուցման համար մենք միջոցներ շատ քիչ ունեյինք։ Ներկայումս, չնայած որ ժողովրդական տնտեսության վերակառուցման միջոցների հարցը մնում է նորից որպես մի շատ դժվարին հարց, այնուամենայնիվ յերկիրն ավելի յե հարստացել, և հնարավորություն է ստեղծվել կենցաղի վերափոխության գործին աջակցող հիմնարկությունների վրա ավելի ուշադրություն դարձնել։ Այդ հարցը չափազանց կարևոր է և այն պատճառով, որ հին կենցաղի մնացորդները հենց ներկայումս, քան յերբևիցե, տնտեսական շինարարության բնագավառում մեր առաջիկա առաջխաղացման համար արգելակ են հանդիսանում։

Ժողտնտեսության վերակառուցման գործի հաջողության հիմքն այն է, որ բանվոր դասակարգը գիտակից լինի, որ նրա յուրաքանչյուր անդամը իմանա թե բանվոր դասակարգն արդյունաբերության տերն է, թե սոցիալիստական ձեռնարկության մեջ ջանասեր աշխատանքն անհրաժեշտ է հենց յուրաքանչյուր բանվորի սեփական շահերի տեսակետից։ Մեր շինարարության հաջողությունը մեծ չափով կախված է նույնպես և այն բանից, թե յուրաքանչյուր բանվոր ինչ չափով է հետաքրքրվում ոչ միայն իր ձեռնարկության (ուր նա աշխատում է) աշխատանքներով, այլ և ընդհանրապես ողջ պետության ապարատի աշխատանքներով, և թե ինչ չափով է նրա մեջ զարգացած ցանկությունը և մասսայական հսկողությունը այդ ապարատի վրա ներքևից կիրառելու կարողությունը, այդ ապարատի թերությունները քննադատելու (անխնա, բոլոր անձանց) անհրաժեշտությունը, թե ինչ չափով է յուրաքանչյուր բանվորի մեջ զարգացած հասարակական աշխատանքների ջիղը։ Ցեվ հենց այս գծով է տեղի ունենում ուժեղ ընդհարումը բանվոր դասակարգի

խնդիրների և հին կենցաղի մնացորդների միջև։ Բանվորի մեջ պետք է ավելի ու ավելի՛ զարգացնել այն հայացքը, որ «ամեն ինչ նրան վերաբերում է», իսկ հին կենցաղի դաստիարակած հայացքներն ու սովորություններն ասում են՝ «իմ ի՞նչ գործն է, ի՞նչ բան ունիմ այս կամ այն կազմակերպության կամ հիմնարկության աշխատանքների հետ. աշխատանքն այնտեղ լավ է ընթանում թե վատ՝ դա ինձ չի վերաբերում»։ Սոցիալիստական շինարարության խնդիրները պահանջում են, որ կինը ակտիվ կերպով մասնակցի հասարակական ամեն տեսակ աշխատանքներին, որ նա իսկապես իր իրավունքներով տղամարդուն հավասար լինի, իսկ հնից ժառանգած սովորություններն ու տրադիցիաները — հին կենցաղը — կնոջը դեռևս շատ ամուր յեն պահում այն վիճակի մեջ, յերբ նա փաստորեն չի կարողանում հասարակական աշխատանքներին այնքան ուժ նվիրել, որքան՝ տղամարդը։ Հին կենցաղի պայմաններում դաստիարակված հայացքները արտահայտվում են և այն բանում, որ կնոջը այս կամ այն հասարակական աշխատանքին չեն ընտրում, չնայած որ նա այդ աշխատանքը կարող է տղամարդուց վատ չտանել։

Վերջապես, հին կենցաղի մնացորդների դեմ պայքարելու խնդիրը մեզ համար ներկայումս կարևոր նշանակություն է ստանում և այն պատճառով, որ հնից ժառանգություն մնացած սովորություններն ու նախապաշարումները հող են ստեղծում մեր թշնամիների համար՝ մասսաների վրա ազդելու։ Հին կենցաղը կապված է յեկեղեցու, ազգային նախապաշարումների, հասարակական աշխատանքներով չհետաքրքրվելու, սեփականատիրական հոգեբանության, հարբեցողության հետ և այլն։ Ներկա պայմաններում այս բոլորը կարող են բանվոր դասակարգի թշնամիների ձեռքին գործիք դառնալ։ Հին կենցաղի դեմ պետք է անխնա կռիվ մղել, և կոմսոմոլին այդ պայքարում պատկանելու յե առաջին տեղը, քանի որ յերիտասարդությունն ավելի քիչ է վարակված հին կարգերից մնացած սովորություններով և նախապաշարումներով։

Ալկոհոլի փոխարեն — կինո յեվ ռադիո. — Մեր շինարարության վտանգավոր թշնամիներից մեկն էլ հանդիսանում են գինին ու ոգին — ալկոհոլիզմը։ Ալկոհոլիզմը շատ վատ է ան-

լիստական շինարարության հաջողությունները մեզ սկսում են ընդհուպ մոտեցնել կենցաղի վերակազմության խնդրին։ Նեպի առաջին տարիները մենք զբաղված եյինք համարյա բացառապես տնտեսության վերականգման խնդիրներով։ Այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ հասարակական սնունդը, հասարակական ճաշարանները, լվացատները, մանկամսուրները, մանկապարտեզները և այլն — հիմնարկություններ, վորոնք ոժանդակում են կնոջ ազատագրության գործին, վորոնք «սոցիալիզմը քաշում են դեպի կենցաղը», չեյին կարող առանձնակի ուշադրություն գրավել, վորովհետև նման հիմնարկների կառուցման համար մենք միջոցներ շատ քիչ ունեյինք։ Ներկայումս, չնայած վոր ժողովրդական տնտեսության վերակառուցման միջոցների հարցը մնում է նորից վորպես մի շատ դժվարին հարց, այնուամենայնիվ յերկիրն ավելի յե հարստացել, և հնարավորություն է ստեղծվել կենցաղի վերափոխության գործին աջակցող հիմնարկությունների վրա ավելի ուշադրություն դարձնել։ Այդ հարցը չափազանց կարևոր է և այն պատճառով, վոր հին կենցաղի մնացորդները հենց ներկայումս, քան յերբևիցե, տնտեսական շինարարության բնագավառում մեր առաջիկա առաջխաղացման համար արգելակ են հանդիսանում։

Ժողտնտեսության վերակառուցման գործի հաջողության հիմքն այն է, վոր բանվոր դասակարգը գիտակից լինի, վոր նրա յուրաքանչյուր անդամը իմանա թե բանվոր դասակարգն արդյունաբերության տերն է, թե սոցիալիստական ձեռնարկության մեջ ջանասեր աշխատանքն անհրաժեշտ է հենց յուրաքանչյուր բանվորի սեփական շահերի տեսակետից։ Մեր շինարարության հաջողությունը մեծ չափով կախված է նույնպես և այն բանից, թե յուրաքանչյուր բանվոր ինչ չափով է հետաքրքրվում վոչ միայն իր ձեռնարկության (ուր նա աշխատում է) աշխատանքներով, այլ և ընդհանրապես վողջ պետության ապարատի աշխատանքներով, և թե ինչ չափով է նրա մեջ զարգացած ցանկությունը և մասսայական հսկողությունը այդ ապարատի վրա ներքևից կիրառելու կարողությունը, այդ ապարատի թերությունները քննադատելու (անխնա, բոլոր անձանց) անհրաժեշտությունը, թե ինչ չափով է յուրաքանչյուր բանվորի մեջ զարգացած հասարակական աշխատանքների ջիղը։ Յեվ հենց այս գծով է տեղի ունենում ուժեղ ընդհարումը բանվոր դասակարգի

խնդիրների և հին կենցաղի մնացորդների միջև։ Բանվորի մեջ պետք է ավելի ու ավելի՛ զարգացնել այն հայացքը, վոր «ամեն ինչ նրան վերաբերում է», իսկ հին կենցաղի դաստիարակած հայացքներն ու սովորություններն ասում են՝ «իմ ի՞նչ գործն է, ի՞նչ բան ունիմ այս կամ այն կազմակերպության կամ հիմնարկության աշխատանքների հետ. աշխատանքն այնտեղ լավ է ընթանում թե վատ՝ դա ինձ չի վերաբերում»։ Սոցիալիստական շինարարության խնդիրները պահանջում են, վոր կինը ակտիվ կերպով մասնակցի հասարակական ամեն տեսակ աշխատանքներին, վոր նա իսկապես իր իրավունքներով տղամարդուն հավասար լինի, իսկ հնից ժառանգած սովորություններն ու տրադիցիաները — հին կենցաղը — կնոջը դեռևս շատ ամուր յեն պահում այն վիճակի մեջ, յերբ նա փաստորեն չի կարողանում հասարակական աշխատանքներին այնքան ուժ նվիրել, վորքան՝ տղամարդը։ Հին կենցաղի պայմաններում դաստիարակված հայացքները արտահայտվում են և այն բանում, վոր կնոջը այս կամ այն հասարակական աշխատանքին չեն ընտրում, չնայած վոր նա այդ աշխատանքը կարող է տղամարդուց վատ չտանել։

Վերջապես, հին կենցաղի մնացորդների դեմ պայքարելու խնդիրը մեզ համար ներկայումս կարևոր նշանակություն է ստանում և այն պատճառով, վոր հնից ժառանգություն մնացած սովորություններն ու նախապաշարումները հող են ստեղծում մեր թշնամիների համար՝ մասսաների վրա ազդելու։ Հին կենցաղը կապված է յեկեղեցու, ազգային նախապաշարումների, հասարակական աշխատանքներով չհետաքրքրվելու, սեփականատիրական հոգեբանության, հարբեցողության հետ և այլն։ Ներկա պայմաններում այս բոլորը կարող են բանվոր դասակարգի թշնամիների ձեռքին գործիք դառնալ։ Հին կենցաղի դեմ պետք է անխնա կռիվ մղել, և կոմսոմոլին այդ պայքարում պատկանելու յե առաջին տեղը, քանի վոր յերիտասարդությունն ավելի քիչ է վարակված հին կարգերից մնացած սովորություններով և նախապաշարումներով։

Ալկոհոլի փոխարեն — կինո յեվ ռադիո. — Մեր շինարարության վտանգավոր թշնամիներից մեկն ել հանդիսանում են գինին ու ողին — ալկոհոլիզմը։ Ալկոհոլիզմը շատ վատ է ան-

դրադառնում մեր շինարարության վրա, վորովհետև նա նվազեցնում է մարդկային որգանիզմի աշխատունակությունը. ալկոհոլի ազդեցության տակ մարդիկ ապարդյուն թրև են գալիս և յենթարկվում դժբախտ պատահարների։ Նա անչափ վատ է անդրադառնում նաև հասարակական աշխատանքների վրա, վորովհետև թուլացնում է հետաքրքրությունը դեպի նա, հանդիսանալով մասսաների կուլտուրական վերելքի արգելակը։ Բանվորի բյուջեյի մեջ ալկոհոլին տրված գումարը գերազանցում է կուլտուրական կարիքների վրա ծախսված գումարին։ Իսկ գյուղացու բյուջեյի մեջ նա կուլտուրական ծախսերից անցնում է մի քանի, և նույնիսկ մի քանի տասնյակ անգամ։

Ալկահոլիզմի դեմ ուղղված պայքարը վերջերս մեծ թափ է ստանում և մեծ ոժանդակության է հանդիպում բանվորական մասսաների կողմից։ Այս բանի հետ կապված, կառավարությունը վորոշել է աստիճանաբար նվազեցնել ոգու արտադրությունը։

Պարզ է, վոր ոգու արտադրությունն ու վաճառքը միանգամից դադարեցնելն անհնարին է։ Ներկայումս էլ, չնայած վոր պետությունը ողի արտադրում է, չնայած հետապնդումներին, գյուղում գոյություն ունի «արաղ քաշելը»։ Յեթե ողու և գինու վաճառքը միանգամից դադարեցնենք—միևնույն է, ալկոհոլիզմին վերջ տալ չի կարելի։ Վոգելից խմիչքների վաճառքն արգելող բոլոր յերկրների փորձը ցույց է տվել, վոր առանց աշխատավորության կյանքի կուլտուրական և նյութական պայմանների փոփոխության՝ միայն սոսկ արգելումով՝ ալկոհոլիզմին վերջ տալ չի կարելի։ Այդ պատճառով էլ կենցաղի վերակառուցումը, մասսաների կուլտուրական պահանջների ծավալումը հանդիսանում են ալկոհոլիզմի դեմ պայքարելու ամենաճիշտ միջոցը։ Կուլտուրական պահանջների վրա ծախսվող գումարը գյուղացու բյուջեյում, և նույնիսկ բանվորի բյուջեյում, դեռևս շատ չնչին տեղ են բռնում։ Սա ստացվում է վոչ թե այն պատճառով, վոր բանվորներն ու գյուղացիները կուլտուրական պահանջ չունեն, այլ այն պատճառով, վոր մենք դեռևս չենք սովորել ինչպես հարկն է բավարարել այդ կուլտուրական պահանջները։ Հաճախ բանվորը գիրք չի գնում վոչ թե այն պատճառով, վոր գրքի պահանջ չի զգում, և նույն-

իսկ վոչ թե նրա համար, վոր գիրքը կարող է վերցնել գործարանին կից գրադարանից, այլ այն պատճառով, վոր կամ գիրքը չի համապատասխանում այն պահանջներին, վորպիսին բանվորն է առաջադրում, և կամ պարզապես մենք չենք կարողանում գիրքը տարածել։ Մի շարք քաղաքներում ասում էյին, թե բանվորները թատրոն չեն գնում. բայց յերբ կազմակերպված ձևով սկսեցին տոմսերը տարածել ֆաբրիկներում և գործարաններում—հակառակը դուրս յեկավ։ Պարզվեց, վոր բանվորը գնում է վոչ միայն անվճար ներկայացումները. Նրա պահանջները աճել են շատ ավելի, և նա կուլտուրական աշխատանքների վորակի հարցն է դնում։

Քանի բանվորի և գյուղացու կուլտուրական պահանջներն ավելի բազմակողմանի յեն դառնում և քանի մենք ավելի լավ ենք կարողանում բավարարել նրանց, բանվորն ու գյուղացին այնքան ավելի յեն սովորում կուլտուրական հանգստությանը, և նրանց այնքան ավելի քիչ են գրավում ողին ու գինին։ Ալկոհոլիզմի դեմ պայքարելու ամենաուժեղ զենքերը լինելու յեն ռադիոն ու կինոն։ Մեր յերկրում հսկայական հնարավորություններ կան դրանց զարգացման համար։ Դրանց զարգացումը յերկու կողմից է հարվածելու ալկոհոլիզմին։ Մի կողմից՝ ռադիոն ու կինոն վորքան շուտ մտնեն բանվորի և գյուղացու կենցաղի մեջ, այնքան ավելի շուտ կարտաքսեն այնտեղից գինին ու ողին, մյուս կողմից՝ կինոյի և ռադիոյի զարգացումը կոգնե՝ ողուց ստացվող պետական յեկամուտները աստիճանաբար փոխարինել կինոյից և ռադիոյից ստացվող յեկամուտներով։

Այդ պատճառով էլ կոմսոմոլը պետք է ամեն տեսակի միջոցներով ոժանդակե մեր յերկրի կինոֆիկացիայի և ռադիոֆիկացիայի գործին, իր հիմնական լոզունգներից մեկը պետք է դարձնե «ալկոհոլի փոխարեն—կինո և ռադիո»։

Աշխատանքի կուլտուրականություն.—Մեր բանվորության կուլտուրականության պակասն արտահայտվում է վոչ միայն գրագիտության և կուլտուրական պահանջների ցածր մակարդակով, այլ և այն բանում էլ, վոր նա չունի անհրաժեշտ ունակություններ, սովորություններ, չունի աշխատանքի կուլտուրայի այն մակարդակը, վորին տիրապետում է ավելի զարգացած կապիտալիստական յերկրների պրոլետարիատը։

Կապիտալիզմի որով պրոլետարիատը աշխատում էր ստիպմամբ, վոչ թե իրեն պատկանող, այլ ձրիակեր կապիտալիստների գործարաններում։

Սոցիալիզմ կառուցել — նշանակում է նաև՝ հասնել աշխատանքի ավելի բարձր արտադրողականության, քան գոյություն ունի կապիտալիզմի օրոք։ Այլ կերպ անհնարին է հասնել կապիտալիստական յերկրներին, այլ կերպ անհնարին է ցույց տալ սոցիալիստական արտադրության ձևի առավելությունը կապիտալիստական արտադրության հանդեպ։ Այդ պատճառով էլ մենք պետք է ձգտենք, վորպեսզի արտադրական արագ, ուղիղ աշխատանքը մեր սոցիալիստական ֆաբրիկներում և գործարաններում առաջ ընթանա անարգել։ Պետք է, վոր բանվորն իր աշխատանքը բարձր գնահատի և ինքը ձգտի նրանից լավագույն արդյունքներ ստանալ։ Լավ աշխատելը, իր արտադրության մասին հոգալը, սոցիալիստական արտադրության վողջ պլանը հաշվի առնելը — պետք է սովորություն դառնա։ Աշխատանքի այդպիսի ունակությունները ձեռք են բերվում համառ աշխատանքի և յերկարատև դաստիարակության միջոցով։ Բայց մինչև վոր դրանք միս և արյուն չդառնան — հնարավոր չէ և վոչ մի սոցիալիզմ։ Խորհրդային յերկրի յուրաքանչյուր բանվոր պետք է սովորի ռացիոնալացման յենթարկել իր աշխատանքը։ Աշխատանքի գիտական կազմակերպումը (НОТ) նոր կուլտուրայի անհրաժեշտ էլեմենտն է։ Ցրվածությանը, թափթփվածությանը և ծուլությանը պետք է վերջ տալ։ Կոմսոմոլը աշխատանքի կուլտուրականության համար մղվող պայքարի մեջ առաջին մարտիկը պետք է դառնա։

3. ՊԱՅՔԱՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մեր թշնամիները ձգտում են իրենց ազդեցության տակ առնել յերիտասարդությանը.— *Քաղաքի և գյուղի կապիտալիստական էլեմենտները, մեր յերկրում աճող սոցիալիզմի դեմ հակահարձակման անցնելով, իրենց ազդեցությունն աշխատում են տարածել յերիտասարդության վրա։ Յեվ արտասահման փախած մեր թշնամիներն էլ իրենց ուշադրությունը դեպի յերիտասարդությունն են դարձրել։ Նրանք ուզում են հավատացնել՝ իրենք իրենց և ուրիշներին, վոր Խորհրդային Միության յերիտասարդությունը իրենց հայրերի ճանապարհով չի գնա, վոր մեծանալով այնպիսի պայմաններում, ուր վոչ ցարիզմ կա, վոչ կապիտալի գերիշխանություն, ԽՍՀՄ յերիտասարդությունը կապիտալիստ-տերերի դեմ մղած կռիվների մեջ չկոփված, քաղաքացիական կռիվների բովի մեջ չկոփված, չպետք է դեպի շահագործողը տածի այն ատելությունը, վորը մեր յերկրի բանվոր դասակարգի ավագ սերունդներին ոգնեց՝ դասակարգային թշնամիների դեմ մղվող պայքարում քաջության և անձնվիրության հրաշքներ գործելու։ Մեր թշնամիները հույս են դնում նրա վրա, վոր մեր յերիտասարդությունը շահագործողների դեմ պայքարելու քիչ փորձ ունի, մոռանալով, վոր մեր հասարակակարգը բանվորների և գյուղացիների յերիտասարդ սերնդից ընդհանրապես դաստիարակում է հեղափոխության նվաճումների պաշտպաններ, սոցիալիստական հասարակության շինարարներ, միջազգային պրոլետարական հեղափոխության աննկուն մարտիկներ։*

Արտասահման չված հակահեղափոխական խմբավորումներից վոմանք զգում են այդ բանը։ Յեվ հենց այդ է պատճառը, վոր նաև Հայաստանի բանվորի և գյուղացու հարվածներից արտասահման թռած դաշնակ խմբապետների ու մաուզերիստների ղեկավար մինիստրները այնքան վայնասուն ու հարայ-հրոց են բարձրացնում, գոռում, գոչում, վոր բոլշևիկները յերիտասարդությանը փչացնում են։ Նրանց կարծիքով՝ կոմսոմոլը, պիոներական կազմակերպությունը այլասերում են «հայ» յերիտասարդությանն ու պատանեկությանը։ Հասկանալի չե թե ինչումն է նրանց վայնասունի պատճառը. չէ՞ վոր կոմսոմոլի ու պիոներական կազմակերպության մեջ աշխատավոր պատանին ու յերիտասարդը փոխանակ «ջարդենք թուրքերին, փրկենք Հայաստան» լոզունգի ուղղությամբ դաստիարակվելու, սովորում է ակտիվ մասնակցել սոցիալիստական շինարարությանը, սովորում է հասկանալ իր թշնամուն ու բարեկամին և ամբողջ պրոլետարիատի հետ ձեռք-ձեռքի տված՝ պայքարել շահագործողների դեմ. այդպիսով նա դաստիարակվում է ինտերնացիոնալիստական վոգով։ Այդ է պատճառը, վոր մեր յերկրի թշնամիները՝ դաշնակները, հարայ-հրոց են բարձրացրել։

Սակայն սխալ կլիներ կարծել, վոր խորհրդային իշխանության թշնամիները մեզնից «հեռու» (արտասահման) գտնվելով, չեն կարող պայքարել մեր դեմ՝ յերիտասարդության համար։ Մենք արդեն ասացինք, վոր կրոնական կազմակերպությունները,

«ազատ յեկեղեցին» փորձեր են անում յերիտասարդությանն իր կողմը գրավելու։ Հակախորհրդային ելեմենտներն իրենց ձեռքին վորպես զենք աշխատում են ոգտագործել վոչ միայն կրոնը, այլ և թատրոնը, կինոն, դպրոցը, հին կենցաղային սովորությունները, հարբեցողությունը, ազգային ատելությունը, արհամարհանքը դեպի հեղափոխական թեորիան, դեպի հասարակական աշխատանքը. նրանք ձգնում են, վոր յերիտասարդությունը յուրացնե մեշչանական կուլտուրան, ինդիվիդուալիզմը։

Յերիտասարդությանը իրենց ազդեցության տակ առնել ձգտող բուրժուազիայի և մանր-բուրժուազիայի փորձերի դեմ մղվող պայքարում կոմսոմոլը՝ վորպես բանվորա-գյուղացիական յերիտասարդության գիտակից և առաջավոր բանակ՝ պետք է առաջին դիրքերը գրավի։ Առանձնապես խոշոր և պատասխանատու դեր է ընկնում կոմսոմոլին գյուղում, չքավոր և միջակ յերիտասարդությանն իր ազդեցության տակ առնելու գործում, ուր մեր դիրքերը համեմատաբար ավելի թույլ են, քան քաղաքում։

Կոմյերիտմիությունը պետք է իրեն նպատակ դնի — բանվորների և գյուղացիների յերիտասարդ սերնդին դաստիարակել այնպես, վոր նրանք արժանավոր փոխարինողներ լինեն մարտիկների և կառուցողների հին սերնդին, յուրացնեն հին սերնդի տրադիցիաները, պայքարի փորձը, սովորեն պայքարել ինտերնացիոնալ դաստիարակության համար, յերիտասարդության մատերիալիստական դաստիարակության համար, յերիտասարդության մեջ դաստիարակեն կոլլեկտիվիզմի, ընկերակցության, դիսցիպլինայի զգացմունք, կռվեն հոռետեսության դեմ, հեղափոխական հեռանկարները կորցնող մարդկանց հուսահատական տրամադրությունների դեմ մանր բուրժուական սանձարձակության, հարբեցողության, սրիկայության դեմ, դեպի կանայք ունեցած ճորտական վերաբերմունքի դեմ, կուլտուրականության արտաքին ձևական կողմերին հետևելու դեմ։ Կոմսոմոլը պետք է պայքարի այն բանի համար, վորպեսզի կուլտուրան հաստատուն կերպով յուրացվի, միս և արյուն դառնա յերիտասարդ սերնդի համար։ Կոմսոմոլն իր շարքերում պետք է կոփի, դաստիարակե նոր մարդը։

Յերիտասարդության կենցաղի վերակազմության խնդիրները. — Բայց կոմսոմոլը պետք է դաստիարակե վո՛չ միայն իր ագիտացիայի և պրոպագանդի միջոցով, վո՛չ միայն՝ բանվորա-գյուղացիական յերիտասարդության համար՝ կոմյերիտականի անձնական որինակով, չնայած վոր անձնական որինակը մասսաների վրա ազդելու և նրանց ղեկավարելու համար ամենից ուժեղ միջոցն է հանդիսանում։

Վորպեսզի ստեղծել այն նոր մարդը, վորը վոչ աստված ճանաչի, վոչ ազգային խտրություն, վոչ մանր-բուրժուական սանձարձակություն, վորը իրեն չըթացնի ալկոհոլով և ուրիշ թույներով, վորը մանր, յեսասեր չլինի և վոչ էլ չնչին բաներով ընկերների առաջ հպարտացող, մի խոսքով, զերծ լինի այն բոլոր արատներից, վորոնցով բուրժուազիայի գերիշխանությունը այլասերում և թունավորում է մասսաները, — կոմսոմոլը պետք է անդուլ կերպով աշխատե յերիտասարդության կենցաղը վերակառուցել։ Յերիտասարդ սերնդի մեջ մշակել կոմունիստական մորալ, գիտակից և կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքը, կոլլեկտիվիզմի, կարգապահության և իրեն հանձնված աշխատանքների համար պատասխանատու լինելու զգացմունքը — այդ ամենը սերտ կերպով կապված են յերիտասարդության կենցաղի վերափոխման աշխատանքների հետ։

«Առողջ կենցաղ, կուլտուրական կենցաղ, սոցիալիստական կենցաղ», — այս է լինելու կոմսոմոլի լոզունգը կուլտուրական հեղափոխության մեջ։ Դա պետք է նույնպիսի տեղ բռնի, ինչպես և այս լոզունգները —

«Վողջ ազգաբնակչության գրագիտություն»!

«Յերեխաների ընդհանուր պարտադիր ուսուցում»!

ՍՈՑԻԱԼԻԶՄ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ՆՈՐ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ՆՈՐ ԿԱԴՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Մասնագետների նշանակությունը ժողտնտեսության զարգացման համար.— Մենք անցել ենք մեր տնտեսության վերակառուցմանը։ Սակայն այդ իրագործելու համար պետք է հենվել գիտության և տեխնիկայի վերջին նվաճումների վրա. անհրաժեշտ է որ մեր արդյունաբերության տեխնիկական մակարդակը համապատասխանի գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներին։

Առանց տեխնիկական ղեկավարների լայն կադրեր, ժողտնտեսության բոլոր բնագավառներում բարձր որակի աշխատակիցներ ունենալու, առանց բոլոր բանվորների աշխատանքի որակը բարձրացնելու, գիտության համապատասխան ճյուղերը բարձրացնելու — մենք ժողտնտեսության ռեկոնստրուկցիային (վերակառուցմանը) ձեռնարկել չենք կարող։

Բարձր որակի աշխատակիցներ անհրաժեշտ են մեզ առաջին հերթին մեր արդյունաբերության համար։ Ինչումն է կայանում ժողտնտեսության ռեկոնստրուկցիան։ Նախ նրանում, որ նոր ֆաբրիկների, գործարանների ու երկաթուղիների կառուցումը պիտի կատարվի ներկա տեխնիկայի բոլոր պահանջներին համապատասխան։ Առանց որակյալ մասնագետների արդյոք հնարավո՞ր է կատարել այդ աշխատանքը։

Ո՛չ։ Առանց ճարտարագետի, ինժեներ-կառուցողի չի կարելի գործարանային շենքեր կառուցել։ Առանց ինժեներ-մեխանիկի կամ ինժեներ-կոնստրուկտորի չի կարելի քիչ թե շատ բարդ մեքենա շինել։

Մենք ունենք բանվորական լայն նախաձեռնություն՝ գյուտարար շատ բանվորներ։ Բայց շատ հաճախ գյուտարար բան-

վորը գծագրությունը չի կարող կատարել, անհրաժեշտ մաթեմատիկական գործողությունները՝ նույնպես. և այստեղ կրթված մասնագետի օգնությունը անհրաժեշտ է։ Նույնիսկ արդեն կառուցված ձեռնարկության մեջ առանց ինժեների չի կարելի արտադրությունը ծավալել։

Առանց որակյալ մասնագետի մասնակցության նոր եր-
կաթուղային մագիստրալներ կառուցել, ստեղծել այնպիսի ուժեղ
ելեքտրոկայան, որպիսին Դնեպրոստրոյն է, և կամ Վոլգա-
Դոնյան կանալը փորել — առավել ևս անհնարին է։ Հին Ռուսաս-
տանի տնտեսական կյանքում տեղի չունեցած նման հսկայական
կառուցումները առանձնապես սուր կերպով ցույց են տալիս այն
անհամաչափությունը, որ գոյություն ունի մեզ մոտ գիտական
տեխնիկական ուժերի պահանջի և մասնագետների այն կադրերի
միջև, որ մենք ունենք։ Այդ նույն հակադրությունը երևան
է գալիս, երբ մեր առաջ ծառանում է մեր ձեռնարկները արև-
մտաեվրոպական, ամերիկական ձևով վերասարքավորելու հարցը։
Մեր տեխնիկական հետամնացությունը մենք զգում ենք, երբ
որ մենք այս կամ այն մեքենան համարում ենք արտասահման-
յան տեխնիկայի վերջին խոսքը, մինչդեռ Արևմուտքում այդ
մեքենան այլևս չի գործածվում՝ ավելի ևս կատարելագործված
մեքենաների գոյության պատճառով։

Բայց նոր ֆաբրիկների կառուցումից բացի, նոր մեքենա-
ների մեխանիզմի կիրառումից բացի, անհրաժեշտ է փոխել
աշխատանքի մեթոդը։ Աշխատանքի սովորական տեմպի
(բուրժուական կարգերից ժառանգություն մնացած) հետևանքով —
մեր արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականու-
թյունը շատ ցածր է։ Կապիտալիստական ռացիոնալիզացիան ար-
տահայտվում է գլխավորապես նրանում, որպեսզի օգտագործվի
բանվորին շահագործելու բոլոր հնարավորությունները, և պահանջ-
վում է բանվորի ուժերի մաքսիմալ լարում։ Գնալ բուրժուազիա-
յին այդ ճանապարհով — մենք չենք կարող։ Սակայն արտադրու-
թյան պրոցեսի մեջ եղած բոլոր ավելորդությունները, արտադրա-
կան աշխատանքը խանգարող բոլոր խոչընդոտները պետք է վե-
րացնել։ Բանվորական օրը պետք է այնպես խտացվի, և աշ-
խատանքն էլ պետք է տարվի այնպես, որպեսզի բանվորի
ծախսած ամբողջ էներգիան օգտագործվի արտադրության
համար, որպեսզի աշխատանքի մեջ ընդհատումներ և դանդա-

ղումներ չլինեն, վորպեսզի վորակյալ բանվորը իր ժամանակն ամբողջությամբ օգտագործի իր մասնագիտության ասպարեզում, և վոչ թե զբաղվի արտադրության պրոցեսին օժանդակող այս կամ այն գործով, վորը կարող եր կատարել և վո՛չ վորակյալ բանվորը։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում հսկայական դեր են խաղում խորհրդային հասարակայնությունը, պրոֆմիությունները, կոմսոմոլը։ Աշխատանքն ավելի արտադրողական դարձնելու համար անհրաժեշտ և վոչ միայն վոգևորությունն, այլ և աշխատանքի գիտական կազմակերպումն։

Աշխատանքը պետք է այնպես դասավորել, վորպեսզի հաշվի առնվեն արտադրական պրոցեսի բոլոր յուրահատկություններն ու բոլոր մասերը, վորպեսզի պաշտպանված լինեն բանվորի շահերը, վորին (բանվորին) մենք չենք կարող մեքենայի հավելվածը դարձնել, ինչպես կապիտալիզմն է անում։

Բարձր վորակի մասնագետներ անհրաժեշտ են նաև գյուղում՝ սոցիալիզմի կառուցման համար։ Գյուղատնտեսության բարձրացման և կոլլեկտիվ տնտեսությունների շինարարության համար անհրաժեշտ են հասկացող գյուղատնտեսներ, այգեգործներ, զոոտեխնիկներ և այլն։ Առանց աշխատանքը գիտական հունով տանելու — գյուղատնտեսության մեջ խոշոր ձեռնարկների առավելությունը և այդ առավելությունների օգտագործումը ցույց տալն անհնարին է։

Մասնագետներն անհրաժեշտ են նաև կուլտուրական շինարարության ու կենցաղային ֆրոնտում։ Առանց կրթված, պատրաստված ուսուցիչների և մանկավարժների — մասսաների գրագիտությունն ու կուլտուրականությունը բարձրացնել անհնարին է։ Առանց բժիշկների չի կարելի պայքարել հիվանդությունների դեմ, առողջ կենցաղի համար, վորպիսին իր հերթին հանդիսանում է աշխատանքի արտադրողականության աճման նախապայմաններից մեկը։

Նոր մասնագետների պատրաստման խնդիրը. — Պրոլետարիատի դիկտատուրայի գոյության առաջին տարիներից արդեն, խորհ. իշխանությունը մասնագետների նոր կադրեր պատրաստելու խնդիրն իր առաջ դրեց։ Սակայն այդ կադրերի վերապատրաստման գործը մինչև այժմ էլ անբավարար է մնում, մանավանդ յեթե հաշվի առնենք այն պահանջները, վոր տնտե-

սական շինարարությունն է առաջադրում՝ այդ կադրերի թե քանակի և թե վորակի խնդրում։

Մինչև վերջին ժամանակները մենք օգտագործում եյինք գլխավորապես այն վորակյալ մասնագետներին, վորոնք իրենց կրթությունը և գործնական ստաժը ձեռք եյին բերել նախահեղափոխական Ռուսաստանում։ «Հին ուտոպիստ-սոցիալիստները յերեվակայում եյին, վոր սոցիալիզմը կարելի յե կառուցել ուրիշ մարդկանցով, վոր նրանք նախ կդաստիարակեն լավ, մաքուր, լավ կրթության տեր մարդիկ և նրանցից սոցիալիստներ կպատրաստեն... Մենք սոցիալիզմ ենք ուզում կառուցել այն մարդկանցով, վորոնք դաստիարակվել են, փչացել ու այլասերվել կապիտալիզմի կողմից, բայց հենց վերջինիս շնորհիվ էլ պայքարի մեջ կոփվել։ Կան այնպիսի կոփված պրոլետարներ, վորոնք ընդունակ են հազար անգամ ավելի մեծ զոհողություններ կրել, քան թե մի վորևիցե բանակ. տասնյակ միլիոնավոր ճնշված գյուղացիներ կան, ցրված, մութ, բայց և ընդունակ՝ պայքարի ժամանակ համախմբվելու պրոլետարիատի շուրջը, յեթե վերջինս կարողանում է ճիշտ տակտիկա կիրառել։ Յեվ հետո կան գիտության և տեխնիկայի մասնագետներ՝ բուրժուական աշխարհայացքով ամբողջովին տոգորված։ Բոլոր գյուղատնտեսները, ինժեներները, ուսուցիչները — բոլորը դուրս են յեկել ունեոր դասակարգից — ոդից չեն ընկել։ Դազգահի չքավոր բանվորը և մաճի գյուղացին համալսարան անցնել չեյին կարող վոչ Նիկոլայ ցարի ժամանակ և վոչ էլ հանրապետական նախագահ Վիլսոնի օրոք։ Գիտությունն ու տեխնիկան հարուստների և ունեորների համար է. կապիտալիզմը կուլտուրա յե տալիս միայն փոքրամասնության համար։ Իսկ մենք պետք է սոցիալիզմ կառուցենք այդ կուլտուրայից... Խորհրդային ապարատ — դա նշանակում է վոր աշխատավորները այնպես են միացել, վորպեսզի իրենց մասսայական միության ծանրությամբ ճզմեն կապիտալիզմը։ Նրանք արդեն ճզմել են նրան։ Բայց կապիտալիզմը ճզմելով, կուշտ չես լինի։ Պետք է վերցնել այն ամբողջ կուլտուրան, վոր թողել է կապիտալիզմը, և նրանից կառուցել սոցիալիզմ։ Պետք է վերցնել վողջ գիտությունը, տեխնիկան, բոլոր գիտելիքները, գեղարվեստը։ Առանց դրան մենք չենք կարող կոմունիստական հասարակակարգ կառուցել։ Իսկ այդ գիտությունը, տեխնիկան, գեղարվեստը — մասնագետների ձեռքին է, նրանց գլուխներում» (Լենին)։

Սակայն, նախահեղափոխական կադրերով և մեծ լարվածությամբ մենք կարող էինք բավարարվել մինչև այն ժամանակ, յերբ ժողտնտեսության առաջ դրված էր մինչհեղափոխական մակարդակի վերականգնման խնդիրը։ Ինժեներական և տեխնիկական ուժերի վերաբաշխման և, պետական պլանավորման շնորհիվ, նրանց նպատակահարմար օգտագործման միջոցով, մասամբ ծածկվեց (նախապատերազմյան շրջանի հետ համեմատած) մասնագետների պակասը, վորը բնական նվազումի և սպիտակ էմիգրացիայի արդյունք էր։ Բայց վերականգնման պրոցեսն արդեն վերջացել է։ Հնգամյա պլանով յենթադրվում է սոցիալիստական արդյունաբերության մեջ ապրանքների մշակումը յերկու անգամ ավելացնել։ Հետևաբար, տնտեսության մեջ մասնագետների պահանջը շատ է ավելանում։ Մեր գործարաններում սովորաբար մի քանի տասնյակ բանվորներին մեկ տեխնիկական ղեկավար է ընկնում, մինչդեռ դա և՛ Գերմանիայում, և՛ Անգլիայում, և՛ Միացյալ Նահանգներում մի քանի բանվորների յե ընկնում։ Ըստ Ժողտնտխորհի հաշվի, արդյունաբերության մեջ զբաղված տեխնիկական պերսոնալը կազմում են՝ 15.415 բարձրագույն տեխնիկական կրթության տեր մարդիկ, 15.399 տեխնիկներ և 19.894 պրակտիկներ։ Ընդամենը 50.708։

Յեթե ընդունենք, վոր ինդուստրացման այդ բոլոր կիրառողներն ամբողջությամբ զբաղված են խոշոր արդյունաբերության մեջ, այդ դեպքում, զբաղված բանվորների ընդհանուր թվի հետ համեմատած (2.760 հազար մարդ առ 1-ն հունվարի 1927 թ.), սա կազմում է ընդամենը 1,8 տոկոսը։

Բացի սրանից, մենք ընդհարվում ենք և ուրիշ դժվարության.—մասնագետների մեջ դեռևս մնացել են այնպիսիները, վորոնք բանվոր դասակարգի համար անհարազատ են և յերբեմն էլ թշնամի, ու այդ թշնամությունը գործով յեն ցույց տալիս (օրինակ՝ Շախտիի վնասատուների գործը)։

Նույն բանը մենք տեսնում ենք գյուղատնտեսության բնագավառում, ուր ներկայումս սկսվում է գյուղացիական տնտեսությունների կոոպերացման խնդրի իրագործումը արտադրական սկզբունքով։ Վո՛րքան մեծ է ներկայումս գյուղատնտեսի պահանջը, կոլեկտիվացման գործով վոգևորվող գյուղատնտեսի պահանջը։

Նույն պատկերն ենք տեսնում կուլտուրական շինարարության բնագավառում։ Այստեղ էլ վորակյալ աշխատողների մեծ

պակաս կա և, բացի այդ, ուժգին չափով աճում է սոցիալիստական շինարարությանը նվիրված և կուլտուրական շինարարության բնագավառում պրոլետարիատի դասակարգային քաղաքականությունն իրականացնող աշխատողների կարիքը։

Նման աշխատողներ չի կարելի վերցնել վորևէ այլ խավից, բացի պրոլետարիատից և չքավոր գյուղացիությունից։ Վորպեսզի հոգով և մարմնով հին տերերին նվիրված առանձին մասնագետների դավաճանության և վնասատվության վատ հետևանքը չզգանք, վորպեսզի սոցիալիստական շինարարությունը կիրառվի հարկ յեղած բոլոր վոգևորությամբ և միաժամանակ գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների հիմունքներով, «պետք է արագացնել կրթության, բանվոր դասակարգի մարդկանցից տեխնիկական նոր ինտելիգենցիա ստեղծելու տեմպը. այդ ինտելիգենցիան անպայման պիտի ստեղծվի բանվոր դասակարգի մարդկանցից, վորոնք նվիրված են սոցիալիզմի գործին և ընդունակ են տեխնիկապես ղեկավարել մեր սոցիալիստական արդյունաբերությունը» (Ստալին)։ Նույն բանը պետք է ասել գյուղատնտեսության նկատմամբ, վորտեղ գյուղատնտեսի, հողաշինարարի, զոոտեխնիկի առաջ խնդիր է դրվում ծառայել վոչ թե կուլակային կապիտալիստական տնտեսություններին, այլ օգնել միջակ և չքավոր տնտեսություններին, դրանց բարելավել և դեպի կոլեկտիվ տնտեսություն առաջնորդել։ Ուսուցչությունը, վորի առաջ կանգնած է աճող սերնդի դաստիարակության խնդիրը, պետք է նույնպես նվիրված լինի սոցիալիզմի համար պայքարող պրոլետարիատին։ Այլապես նա չի կարող յերիտասարդության դաստիարակությունը կոմունիզմի վոգով տանել, չի կարող դիմադրել բուրժուական ազդեցություններին, այլ, ընդհակառակը, ինքը կարող է այդ ազդեցությունների գործիքը դառնալ։

Նոր, պրոլետարական ինտելիգենցիայի ստեղծման գործը սերտ կերպով կապվում է բոլշևիկյան կադրերի մասնագիտացման, աշխատանքի կոնկրետ բնագավառում սոցիալիզմի գործին նվիրվածություն ցույց տալու խնդրի հետ։ Կուսակցության յուրաքանչյուր անդամը, յուրաքանչյուր կոմյերիտականը «պետք է հասկանա, վոր միայն ժամանակակից կրթության հիման վրա նա կարող է կոմունիս-

տական հասարակություն ստեղծել, և, յեթե նա չի տիրապետելու այդ կրթությանը, կոմունիզմը մնալու յե միայն բարի ցանկություն» (Լենին): Սոցիալիզմի շինարարությունը բաժանվում ե աշխատանքի հազարավոր առանձին բնագավառների, վորոնք բոլորովին կոնկրետ գիտություններ, մասնագետների ուժի կիրառում են պահանջում: Սոցիալիզմի շինարարությունը կայանում ե մեր ժողտնտեսության բոլոր ճյուղերը սոցիալիստական ձևով փոփոխելու մեջ: Արտադրական պրոցեսը չիմանալով և այս կամ այն ձեռնարկումի տեխնիկական նպատակահարմարությունը ճիշտ գնահատելու հնարավորությունից զուրկ լինելով, սոցիալիզմին նվիրված լինելու դեպքում ել շատ հեշտ ե սխալներ գործել, մասնագետների ձեռքին գործիք դառնալ, «վատ տիպի կոմիսար» դառնալ, վորը արտաքուստ ղեկավարում, ուղղություն ե տալիս, իսկ իրականում՝ տեխնիկական կատարողների յետևից ե գնում: Վորպեսզի սոցիալիստական շինարարությունը ղեկավարես, պետք ե տեսականորեն և գործնականորեն լավ իմանաս տնտեսության կամ կուլտուրայի այն կոնկրետ բնագավառը, վորի մեջ աշխատում ես: Բոլշևիկը, վորը ղեկավարում ե այս կամ այն աշխատանքը, պետք ե իր գործի մասնագետը լինի, հասկացող աշխատող, վորը կարողանում ե վոչ միայն կոմունիզմի մասին դատել, այլ և գործնականում պայքարել կոմունիզմի համար՝ իրեն հանձնված տնտեսության և կամ կուլտուրայի բնագավառում, միաժամանակ իր տարած կոնկրետ աշխատանքը կարողանալով շաղկապել այն ընդհանուր գործին, վոր տանում ե կուսակցությունը:

Մասնագետ-հասարակական գործիչներ պատրաստելու անհրաժեշտությունը. — Տեխնիկական ինտելիգենցիայի նոր, պրոլետարական փոխարինողները պետք ե կարողանան բավարարել սոցիալիստական շինարարության բնույթով պայմանավորված մի շարք պահանջներին:

Մեր ուսանող յերիտասարդության մեջ յերկու թեքում կա: Յերիտասարդության մի մասն անիրավացի կերպով կարծում ե, վոր մասնագետի առաջ դրվում ե միայն իր բնագավառում բարեխիղճ աշխատելու խնդիրը: Նման մասնագետն, իհարկե, չի կարող պրոլետարական ինտելիգենցիայի համար որինակ լինել:

Նման մասնագետը, հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցելուց հեռանալով, բանվոր դասակարգից, մասսաներից կտրվում ե և վերջիվերջո շատ հեշտությամբ կարող ե վերասերվել և բուրժուական «գիտության քուրմ» դառնալ: Յերկրորդ թեքումն այն ե, վոր ուսման անմիջական խնդիրները յետին կարգն են դասվում: Կուսակցականը, կամ կոմյերիտականը, կարծում ե, վոր կհարգեն իր հասարակական աշխատանքները և ինքը բարձրագույն կրթական հիմնարկությունը կավարտի: Բայց այդպիսի մարդիկ համալսարանից դուրս գալուց հետո յել լավ հասարակական աշխատողներ չեն կարող դառնալ: Մասնագետը բանվորների մեջ ազդեցություն կարող ե ունենալ միայն այն դեպքում, յերբ նա լավ կաշխատի իր մասնագիտության ասպարեզում: Այդ պատճառով ել վոչ միայն սոսկ հասարակական աշխատող կամ մասնագետ պետք ե լինել, այլև մասնագետ-հասարակական գործիչ:

Վորո՞նք են մասնագետ-հասարակական գործչի անհրաժեշտ հատկությունները: Սոցիալիստական շինարարությունը ծավալվում ե մասսաներին նվիրված և դիսցիպլինար աշխատանքի հիմունքներով: Յեթե մասսան չմասնակցեր կամ բռնի ուժով մասնակցեր շինարարությանը, այդ դեպքում Հոկտեմբերյան որերից հետո մենք չեյինք կարողանա հաղթահարել վոչ մասնագետների սաբոտաժը, վոչ սպիտակ գվարդիականների հարձակումը, վոչ ել քայքայվածությունը — սովն ու ցուրտը: ԽՍՀՄ շրջապատող կապիտալիստական աշխարհի կողմից մենք վաղուց խորտակված կլինեյինք: Մասնագետի գիտությունը միայն այն դեպքում կարող ե գործադրվել, յերբ նա իր աշխատանքի ընթացքում կարողանում ե հաստատուն կապ ստեղծել մասսաների հետ, վերջինիս տանել իր յետևից, բարձրից չնայել ցածրի այն փորձին, վոր ամենորյա աշխատանքի պրոցեսում կուտակվում ե արտադրության մեջ աշխատող շարքայինների շրջանում:

Բանվորներն ավելի շատ են ցավում արտադրության բացերի համար, վորովհետև նրանք անմիջականորեն տեսնում են: Բանվորներն ավելի շատ թերություններ յեն նկատում, վորովհետև նրանք անմիջականորեն շփվում են արտադրական պրոցեսի բոլոր մանրամասնությունների, բոլոր առանձին ողակների հետ: Մասսաներին յերբեք չի կարելի դուրս բերել կովելու կամա-

յական բացակայությունների դեմ, տնտեսական պակասությունների դեմ, աշխատանքի արտադրողականության ոգտին, կազմակերպվածության ու դիսցիպլինայի ոգտին, չհավատալով սոցիալիզմի գործին և այդ գործին նվիրված չլինելով։ Մ ա ս ս ա ն ե ր ի հ ե տ ունեցած կ ա պ ը աշխատավորին անխուսափելիորեն կապված է պահում այն ի դ ե ո լ ո գ ի ա յ ի հ ե տ, այն հայացքների հետ, վոր քարոզում է այդ մասսան։ Մասսաների հետ ունեցած կապը, բացի այն բանից, վոր հնարավորություն է ստեղծում ավելի լրիվ և վճռական կերպով իրագործել արտադրական անմիջական պահանջները, կարմիր մասնագետի համար հանդիսանում է այն աղբյուրը, վորը նրա մեջ պահպանում և սնում է հ ե ղ ա փ ո խ ա կ ա ն ն վ ի ր վ ա ծ ո ւ թ յ ո ւ ն, ս ո ց ի ա լ ի ս տ ա կ ա ն շ ի ն ա ր ա ր ո ւ թ յ ա ն գ ո ր ծ ի շ ա հ ա գ ր գ ռ ո ւ թ յ ո ւ ն, հ ա վ ա տ դ ե պ ի պ ր ո լ ե տ ա ր ի ա տ ի վ ե ր ջ ն ա կ ա ն հ ա ղ թ ա ն ա կ ը։

2. ՀԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Պետք է ոգտագործել բուրժուական մասնագետներին. — Հին մասնագետների միայն մի մասն է համապատասխանում այն պահանջներին, վոր առաջադրում են սոցիալիստական շինարարության կարիքները։

Կապիտալիզմի պայմաններում ճնշված լինելով, մեր բանվոր դասակարգն արտադրության մեջ սև աշխատանք եր կատարում. մասնագետների կադրերը գլխավորապես վերցվում եյին բուրժուազիայի շարքերից, բուրժուական ինտելիգենցիայից և այլն. իսկ նրանք, վորոնք բանվորական շրջանից եյին դուրս գալիս և հասնում եյին շատ բարձր վորակի ու մասնագետներ եյին դառնում, բանվոր դասակարգից հեռանում եյին, բուրժուական բանակն եյին անցնում։ Տեխնիկական ինտելիգենցիայի շրջանում մարդկանց միայն մի փոքր խմբակն եր կապված մեր կուսակցության մղած հեղափոխական պայքարի հետ։ Հին մասնագետների մեծ մասը սերտ կապված եր տերերի, կապիտալիստական դասակարգի հետ։ Մասնագետներից վոմանք մասնակցում եյին կապիտալիստական ձեռնարկի շահին։ Նրանցից շատերը իրենց դիզած սեփական կապիտալն ունեյին։ Մասնագետների հսկայական մեծամասնությունը՝ իր դաստիարակության, իր հասարակական դիրքից յելնելով, կապիտալիստական կարգերը համարում եր միակ հնարավորը, իսկ բուրժուազիայի տապալումը — կուլտուրայի կործանում։ Հարվածելով կապիտալիստներին, հեղափոխությունը սկզբից և յեթ հարվածեց նաև՝ կապիտալիստներին ավելի մոտ կանգնած տեխնիկական ինտելիգենցիային։ Անհատ ինժեներները բանկերի պետականացման հետևանքով իրենց դրամներից զրկվեցին, նյութականի խնդրում բոլորն էլ կրեցին մեծ դժվարություններ։ Բայց ամենագլխավորը այն է, վոր բուրժուական կարգերի ժամանակ իրենց ապահով զգալով, ինժեներների այդ մասի համար պրոլետարական հեղափոխությունը և վոչ մի կարեվորություն չեր ներկայացնում։ Նա արդյունաբերության համար հեղափոխությունը կործանիչ եր համարում, վորովհետև արդյունաբերության կապիտալիստական յեղանակից դուրս, ուրիշը յերևակայել չեր կարող։ Այդ պատճառով էլ հեղափոխության սկզբին ինժեներության մեծագույն մասը շինարարությանը ակտիվ մասնակցել չեր ուզում, և, սաբոտաժներ սարքելով, դիտմամբ անգործության եր մատնվում։

Բայց խորհրդային իշխանությունը, բուրժուական մասնագետներին ոգտագործելու անհրաժեշտության խնդրի առաջ կանգնած լինելով, աստիճանաբար կոտրեց այդ սաբոտաժը, մասնագետների հսկայական մասին քաշեց մեր արդյունաբերության և վողջ ժողտնտեսության աշխատանքների մեջ, վերափոխելով նրանցից շատերի իդեոլոգիան։

Սա շատ դժվար խնդիր եր։

«Այստեղ միայն բռնությամբ վոչինչ չես անի։ Այստեղ բռնությունից զատ, հաղթական բռնությունից հետո, պետք է կազմակերպվածություն, դիսցիպլինա և բարոյական կշիռը հաղթող պրոլետարիատի, վորն իրեն է յենթարկում և իր աշխատանքին է լծում բուրժուական բոլոր մասնագետներին... Ոգտագործել բուրժուական, կապիտալիստական հասարակակարգի վողջ ապարատը — նման խնդիրը պահանջում է վոչ միայն հաղթանակող բռնություն, նա, բացի դրանից, պահանջում է՝ կազմակերպվածություն, դիսցիպլինա, մասսաների մեջ ընկերական դիսցիպլինա, պրոլետարական ազդեցության տարածումն մնացած վողջ ազգաբնակչության վրա, նոր մասսայական միջավայրի ստեղծումն, վորի ժամանակ բուրժուական մասնագետը տեսնում է, վոր ինքը ուրիշ յելք չունի, վոր դեպի հին հասարակությունը դառնալն անհնարին է և վոր իր գործը կարող է կատարել կո-

մունիստների հետ միայն, վորոնք կանգնած են իր կողքին, ղեկավարում են մասսաներին, ոգտվում են մասսաների բացարձակ վստահությամբ...» (Լենին)։

Սրան համապատասխան՝ Համկոմկուսի ծրագիրն առաջադրում է այսպիսի խնդիր. «Շուտափույթ, լայն և բազմակողմանի կերպով ոգտագործել կապիտալիզմից մեզ ժառանգություն մնացած գիտության և տեխնիկայի մասնագետներին, չնայած այն բանին, վոր նրանք շատ դեպքում անխուսափելիորեն սնված են բուրժուական աշխարհայացքով ու սովորություններով։

«Մենք մի կողմ չենք նետում այն բոլոր մասնագետներին, վորոնք խորհրդայնորեն չեն մտածում և կամ վորոնք կոմունիստներ չեն հանդիսանում, բայց և վորոնք համաձայն են աշխատակցելու խորհ. իշխանության հետ։ Մենք ապագայում ես բոլոր ուժերով և միջոցներով պետք է մեր աշխատանքի մեջ քաշենք այն անկուսակցական մասնագետներին, անկուսակցական տեխնիկներին, վորոնք պատրաստ են խորհ. իշխանության հետ ձեռք-ձեռքի տված առաջ ընթանալ մեր արդյունաբերության շինարարության գործում։

«Մենք ամենևին չենք պահանջում, վոր նրանք այժմ և յեթ հրաժարվեն իրենց տեսակետներից և կամ փոխեն նրանց իսկույն։ Մենք միայն մի բան ենք պահանջում, — վորպեսզի նրանք ազնվաբար աշխատակցեն խորհ. իշխանության հետ՝ յերբ այդ բանին նրանք համաձայնվել են կամովին» (Ստալին)։

Անհրաժեշտ է սովորել այդ մասնագետներից, անհրաժեշտ է վերցնել նրանցից վողջ կուլտուրան, բուրժուական աշխարհի բոլոր գիտելիքները։ Բայց չի կարելի մոռանալ այն, վոր նրանք դուրս են յեկել ուրիշ դասակարգի ծոցից, դաստիարակվել են կապիտալիզմի կողմից և բուրժուական հայացքներով են տոգորված։ Պրոլետարիատը «չպետք է և վոչ մի քաղաքական նվազագույն զիջում անի բուրժուական տվյալ խավին և անխնա կերպով պետք է ճնշի նրա բոլոր տեսակի հակահեղափոխական սողոսկումները» («Համ. Կոմկուսի ծրագիրը»)։

Այս բանը յերբեք չի նշանակում մասնագետների հալածանք և կամ ճնշում։ Բանվորության և բանվոր յերիտասարդության մեջ մի ժամանակ զարգացած եյին «մասնագետակերական» տրամադրություններ։ Քանի վոր մասնագետները անցյալում ծառայել

են ուրիշ դասակարգի և զգալի չափերով տեխնիկապես կիրառում եյին բանվորներին շահագործելը այդ դասակարգի կողմից, ուստի և նման տրամադրությունները բացատրելը հեշտ է։ Հանձինս ինժեների, տեխնիկի և վարպետի, բանվորը տեսել է կապիտալիստի մոտիկ ոգնականին, վորի միջոցով կապիտալիստը հետևել է աշխատանքին, տուգանել և ուժեղացրել է շահագործումը։ Հանձինս նրանց, բանվորը տեսել է իր դասակարգային թշնամուն և միշտ լավ չի կարողացել յուրացնել ինժեների կատարած դերի տարբերությունը կապիտալիզմի պայմաններում և խորհրդային իրավակարգի պայմաններում։ Տեսնելով վոր ինժեներն ավելի լավ է վարձատրվում քան միջին վորակի տեր բանվորը, վոր նա առաջվա նման անում է կարգադրություններ, վորոնք բանվորը պետք է կատարի, — նվազ գիտակից բանվորն այդ բանը ընդունել է վորպես հին հարաբերությունների վերականգնումն արտադրության մեջ և դեպի մասնագետները ատելությամբ լցվել։

Կուսակցությունը դրան հակադրում է ընկերական միջավայր ստեղծելու պահանջը. այդ միջավայրը պետք է «ոգնի՝ կապիտալիզմի շնորհիվ բաժանված ֆիզիկական և մտավոր աշխատանքի աշխատավորների փոխադարձաբար միմյանց հասկանալուն և մերձեցմանը»։ Ընկերական այդ միջավայրում միաժամանակ պետք է լավ կազմակերպել մասնագետների աշխատանքների ստուգման և վերահսկողության գործը։

Վատ է, յերբ կուս. կազմակերպություններն ու գիտակից բանվորները վճռական հարված չեն հասցնում նվազ գիտակից բանվորների կողմից մասնագետների դեմ սկսված անհիմն մեղադրանքներին ու հալածանքներին։ Բայց միաժամանակ վատ է և այն, յերբ կուսակցության ծրագրի համապատասխան կետը՝ մասնագետների նկատմամբ՝ հասկացվում է վորպես վերջիններիս աշխատանքների համար նպաստավոր պայմաններ ստեղծելու մի պահանջ, և յերբ մոռացվում է, վոր կուսակցության ծրագիրը առաջադրում է մասնագետների աշխատանքների վրա փաստական հսկողություն ունենալ։ Այդ պահանջը մոռացության տալը մեզ կհասցնի այնպիսի գործերի, վորպիսիք մենք տեսանք Շախտիի շրջանում։

Մասնագետներին աշխատանքի ներգրավելով, կուսակցությունը միաժամանակ ղեկավար դիրքերի վրա դրել է բանվոր

դասակարգից առաջ քաշված մարդկանց։ Այդ մարդկանց բանվոր դասակարգը պատվիրել է անմիջական կերպով հսկել մասնագետներին և նրանց աշխատանքն ուղղել պրոլետարիատի դասակարգային շահերի հունով։ Սակայն, կուսակցության կողմից առաջ քաշված աշխատողները յերբեմն ձուլվում են մասնագետների շրջապատին, ընդօրինակում, վերցնում են նրանց սովորություններն ու հայացքները և կտրվում են բանվորներից։ Ուրիշ դեպքերում՝ կուսակցության կողմից նշանակված ղեկավարները շատ քիչ են հետաքրքրվում արտադրության գործով, չեն աշխատում մասնագետներից սովորել նրանց գիտությունը, զբաղվում են միայն «ընդհանուր ղեկավարությամբ», վերջին հաշվով նույնպես կորցնում են մասնագետներին հսկելու հնարավորությունը։ Խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի մասնագետների աշխատանքները ստուգել, մասնագետներից սովորել, հենվելով մասսաների վրա, չենթարկվելով մասնագետների ազդեցությանը, աստիճանաբար տիրապետելով այն գիտությանը և գիտելիքներին, վոր ունեն մասնագետները։

Մասնագետների յերեք խմբեր. — Չպետք է մոռանալ, վոր սոցիալիստական շինարարության պրոցեսի ընթացքում մասնագետները բաժանվել են մի շարք խմբերի։ Խորհ. իշխանության տնտեսական հաջողությունները, արդյունաբերության՝ անցյալում քայքայված բնագավառների վերականգնումը տեխնիկական ինտելիգենցիայի մեծ մասի տրամադրությունների մեջ բեկում առաջացրին։ Շատերը, համոզվելով տնտեսական և պետական նոր կարգերի հաստատուն լինելու գործում, ազնվաբար աշխատում են սոցիալիստական շինարարության կարիքների համար։

Նախքան հեղափոխությունը տեխնիկական ինտելիգենցիայի այն մասը, վորը մոտ եր կանգնած բանվոր դասակարգի հեղափոխական շարժմանը, չեր կարող մեծ լինել։ Հեղափոխությունից հետո միայն սոցիալիզմի իդեյաներին նվիրված նման մասնագետների թիվը աճել է զգալի չափերով։ Նրանք բոլորն ել կուսակցության շարքերում չեն, բայց նրանք ընդունել են նոր պլանային տնտեսության առավելությունները, նոր սոցիալիստական հասարակակարգի առավելությունները և աշխատում

են իրենց ուժերն ամբողջությամբ նվիրել այդ նոր հասարակակարգի կառուցման գործին։ Սրանց մասամբ միանում են մասնագետների այն կադրերը, վորոնք, սոցիալիստական հասարակակարգի հաստատուն կողմնակիցներ չլինելով հանդերձ, տեսնում են վոր խորհրդային իշխանությունը ժողովրդական տնտեսությունը բարձրացնում է, վոր արդյունաբերությունն առաջ է շարժվում, և աշխատում են ոժանդակել այդ պրոցեսին։ Նրանց պակասում է հաստատուն հավատը դեպի սոցիալիզմի հաղթանակը. յերբեմն նրանց մեջ կարող են տատանումներ առաջ գալ, բայց նման ազնիվ և իրենց գործին նվիրված մասնագետները մեզ հսկայական ոգուտ են տալիս։ Այդպես է մասնագետների առաջին խումբը, վորին պատկանում են սոցիալիզմի համար պայքարող ակտիվ մարտիկները և այն ազնիվ մասնագետները, վորոնք, ընդունելով վոր խորհրդային իշխանությունը աշխատավորության կամքի արտահայտությունն է, ժողտնտեսությունը առաջ տանելու ընդունակ և կենսունակ, — հաստատուն և համոզված, ազնվաբար ծառայում են նրան։ Յերկրորդ խումբը բաղկացած է այն մասնագետներից, վորոնք իրենց աշխատանքին նայում են վորպես ծառայության, վորպես վաստակի աղբյուրի։ Նրանք խորհ. իշխանության և սոցիալիստական շինարարության դեմ չեն պայքարում։ Բայց նրանց մեջ չկա շահագրգռվածություն դեպի գործը։ Նրանք իրենց նախաձեռնությամբ պայքար չեն մղում թերությունների դեմ. — դեպի աշխատանքն անփույթ վերաբերմունք ցույց տալով կամ չմտածելով այն մասին թե ինչպես բարելավել աշխատանքը, ինչպես կանխել հնարավոր թերությունները, նրանք սրանով յերբեմն կարող են արտադրության վնաս պատճառել։ Մասնագետների այս խմբից լինում են բյուրոկրատներ, վորոնք այս կամ այն ձևականության պահպանման համար պատրաստ են զոհաբերելու գործի շահերը։ Նման մասնագետները շատ հաճախ ընկնում են ձգձգումների, ավելորդ հաշվետվությունների մեջ և դեմ են լինում տնտեսողական ռեժիմին։ Նման մասնագետներն ընդհանրապես դեմ են ինքնաքննադատությանը, վորովհետև վերջինս հարվածում է աշխատանքի հնուց սահմանված, լճացած ու խաղաղ կարգերը։

Դաստիարակչական ճիշտ աշխատանքների միջոցով կարելի յե ներկա «չեզոք» մասնագետների մեծ մասին ստիպել սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակցողների բանակն

անցնելու։ Այստեղ շատ կարևոր է տեխնիկական ինտելիգենցիայի հասարակական կազմակերպությունների աշխատանքը — պրոֆմիությունների կից ինժեներական-տեխնիկական սեկցիաները։ Այդ սեկցիաները մինչև այժմ զբաղվում են իրենց անդամների գլխավորապես տնտեսական, նյութական կարիքներին ծառայելով։ Ինժեներներին արտադրության խնդիրների քննությանը մասնակից դարձնելու, սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղղությամբ ինժեներական-տեխնիկական սեկցիաները շատ քիչ բան են անում։ Մինչդեռ ինժտեխսեկցիաները վոչ միայն պետք է իրենց անդամների տնտեսական շահերը պաշտպանեն, այլ և նրանց քաշեն հասարակական աշխատանքի և արդյունաբերության բարվոքման գործի մեջ։ Քանի առաջ ենք գնում, այնքան ավելի յե զգացվում հասարակական գործչի ջիղ ունեցող մասնագետի պահանջը, վորը չի ամփոփվում իր կեղևի մեջ, սոցիալիստական շինարարության գործին «չեզոք» չի վերաբերվում, այլ մասնակցում է ակտիվ։ Մասնագետը բոլորովին պետք է անցնի սոցիալիստական շինարարության կողմը։ Այլապես դժվար է նրան նույնիսկ իր մասնագիտության շրջանակներում աշխատանք վստահել։

Վերջապես, մասնագետների մեջ գոյություն ունի նաև յերրորդ՝ ավելի փոքրաթիվ խմբակ, վորը իր կապերը չի խզել մեր դասակարգային թշնամիների հետ և թշնամաբար է վերաբերվում սոցիալիստական շինարարությանը։

Առանց հին մասնագետների լավագույն մասի մենք չեյինք կարող առաջ գնալ։ Մենք մտել ենք այնպիսի շրջան, յերբ անհրաժեշտ են խոշոր գիտական և տեխնիկական փորձեր՝ պլանային կապիտալ շինարարության կատարման համար։ Կարմիր մասնագետների թիվը դեռևս շատ քիչ է, բացի այդ, մասնագետների ամենայերիտասարդ մասը լինելով, նրանք ավելի քիչ փորձ ունեն։ Այնպիսի կառուցումները, վորպիսիք են Դնեպրոստրոյը, Վոլխովստրոյը, կատարվել և կատարվում են ինժեներների հին՝ նախահեղափոխական շրջանի սերնդի ներկայացուցիչների ղեկավարությամբ, վորոնք բացարձակ և ազնվաբար անցել են խորհրդային բանակը։

Հին մասնագետների լավագույն մասի դերը մեր տնտեսության շինարարության մեջ կարող է և պետք է շատ նշանակալից լինի։ Մենք ձգտում ենք ԽՍՀՄ բնական բոլոր հարստությունների ավելի լիակատար ոգտագործմանը։ Գիտնականների

հետազոտությունները, վոր մի շարք մետաղի հանքեր և այլ թանկագին նյութեր բացին, արդեն զգալի կերպով թեթևացրին մեր աշխատանքը այդ ուղղությամբ։ Արդյունաբ. այնպիսի ճյուղ, վորպիսին քիմիականն է, մեզ մոտ սկսում է ծաղկել ինչպես հարկն է։ Այդ բնագավառում մեր մասնագետների ունեցած փորձն անչափ անհրաժեշտ է ոգտագործել այս գործի մեջ։ Նման դրական դեր կարող են խաղալ զանազան տեսակի գյուտերն ու հայտնագործությունները, վորոնք ավելացնում են մեր հնարավորությունները՝ յերկրի արտադրական ուժերը ոգտագործելու և զարգացնելու։ Արդյունաբերության մեջ հում նյութերի այն տեսակները, վորոնք առաջ չեյին ոգտագործվում, կարող են մեր հում նյութերի բազան լայնացնել։ Հիշենք նաև հում նյութերի մշակման նոր ձևերի գյուտը, վորոնք եժանացնում են արտադրության պրոցեսը։ Այդ տեսակետից ավելի հարուստ դաշտ է քիմիան, վորի ոգնությամբ, որինակ, ձեռք են բերվել պարարտանյութերի (սելիտրա) ստացման, արհեստական մետաքսի արտադրության եժանագին միջոցներ և այլն։

Տնտեսական հակահեղափոխություն. — Հակահեղափոխականորեն տրամադրված մասնագետների խմբավորումները մեր տեխնիկական յետամնացության, շինարարության թափի կարևորության և կարմիր մասնագետների կադրերի սակավության պատճառով իրենցից խոշոր վտանգ են ներկայացնում։ Սոցիալիստական շինարարության պայմաններում ամենավտանգավոր հակահեղափոխական աշխատանքը հանդիսանում է տնտեսական հակահեղափոխությունը, տնտեսական վնասատվությունը։

Արտասահման փախած բուրժուազիայի մնացորդները և ընդհանրապես միջազգային կապիտալը ձգտում են ոգտագործել մեզ թշնամաբար տրամադրված ինժեներական-տեխնիկական կադրերը՝ մեր տնտեսությունը քայքայելու համար։

Նման վնասատվություն յերևան հանվեց Դոնբասում (Շախտիի գործը)։ Շախտիի վնասատուների դատավարությունը, վոր տեղի ունեցավ 1928 թ. հունիս և հուլիս ամիսներին, ցույց տվեց, վոր ինժեներության մեջ մինչև վերջին ժամանակներս իրենց գոյությունը պահպանել են այնպիսի խմբեր ու փոքրիկ խմբակներ, վորոնք մտածում են անցյալում իշխող դասակարգերի իշխանությունը վերականգնելու մասին։ Այդ մասնագետները հարաբերու-

թյուններ էին ստեղծել քարածուխի արդյունաբերության նախկին տերերի հետ, վորոնք ներկայումս գտնվում են էմիգրացիայի մեջ, արտասահմանում։ Ոգտվելով բանվոր դասակարգի և խորհրդային իշխանության դեպի իրենց տածած վստահությունից, նրանք, արտասահմանից վարձատրություն ստանալով, մի շարք միջոցներ էին ձեռնարկել՝ քարածուխային արդյունաբերության տնտեսական ուժը խորտակելու ուղղությամբ։

Այն շախտաները, վորոնք պետքական են ոգտագործման համար, լցվում էին ջրով, իսկ պետական միջոցները գործադրվում էին քարածուխի այնպիսի շերտերի մշակման, վորոնք շահավետ չեն ոգտագործման համար։ Արտասահմանից բերել էին տալիս այնպիսի մեքենաներ, վորոնք կամ փչացած էին լինում, կամ այդ միջոցին չէին կարող գործադրության մեջ դրվել արտադրության պրոցեսում և կամ, ըստ իրենց բնույթի, բոլորովին անպետք էին տվյալ աշխատանքի արտադրական պայմանների համար։ Այն նախագծերը, վորոնց իրագործումը զգալի չափերով պետք է վոր բարվոքեր արտադրությունը, պահվում և չէին գործադրվում։

Այդ բոլոր վնասարարությունը կարողացավ այդպիսի մեծ ծավալ ստանալ՝ մեր տնտեսական աշխատանքի մի շարք խոշոր բացերի, ինչպես և պրոֆեսիոնալ ու խորհրդային կազմակերպությունների նկատմամբ կուսակցության ունեցած ղեկավարության թուլության պատճառով։ Շարքային աշխատակիցների առաջքաշման գործը թույլ էր տարվում, և առաջքաշվածներն անհրաժեշտ ոգնությունը չէին ստանում ամբողջ ապարատից։ Արտադրության ղեկավարման, ինչպես և ապարատի աշխատանքների հսկողության գործում մասսաների մասնակցությունը շատ թույլ էր։ Տնտեսավարների մի մասը բուրժուական մասնագետների ազդեցության տակ էին ընկած, իսկ մյուսները, չհոգալով իրենց վորակավորման մասին, փաստորեն չէին կարողանում իրագործել ձեռնարկության արտադրական-տեխնիկական աշխատանքի ղեկավարությունը։

Շախտիի գործը կտրուկ կերպով դրեց տնտեսական ղեկավարման գործը բարելավելու, մասնագետների աշխատանքների վրա ավելի մեծ հսկողություն ունենալու, մեր արտադրությունը հեղափոխությանը նվիրված մասնագետներով ավելի շատ ապահովելու հարցը։

Հակահեղափոխական վնասարարությունը զարգանալ կարող է մեր կուլտուրական տեխնիկական յետամնացության շնորհիվ

միայն։ Բանվոր դասակարգը դեռևս իր շարքերից չի տվել մասնագետների բավական պատրաստված կադրեր, վորոնք կարողանային իր ժամանակին կանխել ամեն տեսակի վնասատու գործ, հասկանալ ձեռք առնված այս կամ այն միջոցների վնասակարությունն ու տեխնիկական անճշտությունը, վորպեսզի մենք կարողանայինք փոխարինել բոլոր այն մասնագետներին, վորոնք դեռևս չեն հաշտվել բանվոր դասակարգի իշխանության գոյության հետ։ Բանվորական լայն մասսան էլ այնչափ կուլտուրական չէ, վորպեսզի լրիվ չափով և միշտ հսկողություն ունենա մասնագետների աշխատանքի վրա։

Այսպիսով հին մասնագետների մեջ մենք զանազանում ենք յերեք խմբեր. առաջինը — սոցիալիստական շինարարությանն ամբողջությամբ նվիրված մասնագետներն են, վորոնց մենք ամեն կերպ մասնակից ենք անում աշխատանքին. յերկրորդը — չեզոքները, «ծառայողները», վորոնց մենք աշխատում ենք վերադաստիարակել, և յերրորդը — հակահեղափոխականները (Շախտիի տիպի), վորոնց նկատմամբ պետք է ձեռք առնել ճնշելու այնպիսի միջոցներ, վորպիսին ձեռք ենք առնում ամբողջ հակահեղափոխական բուրժուազիայի դեմ։

«Ժամանակը անցնում է, և խորհրդային իշխանության հետ ձեռք-ձեռքի առաջ ընթանալու համար, պատրաստված մասնագետների թիվը ավելի ու ավելի յե նվազում։ Խնդիրն այն է, վոր բացարձակապես անհրաժեշտ է նրանց համար նոր փոխարինողներ ստեղծել։ Յեվ ահա կուսակցությունը գտնում է, վոր այդ փոխարինողներին պետք է ստեղծել արագացած թափով, յեթե մենք չենք ուզում նորից նոր անակնկալների առաջ կանգնել, և այդպիսիներին պետք է բանվոր դասակարգի մարդկանցից ստեղծել։ Հենց այս էլ նշանակում է՝ ստեղծել նոր տեխնիկական ինտելիգենցիա, վորն ընդունակ լինի բավարարել մեր արդյունաբերության պահանջները» (Ստալին)։

Խորհրդային մասնագետներ պատրաստելու խնդիրը կուսակցության և խորհ. իշխանության առաջ կանգնած է վորպես կարևորագույն խնդիրներից մեկը։

3. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Կապը բարձրագույն տեխնիկական կրթական հիմնարկությունների (ВТУЗ) յեվ արդյունաբերության միջեվ.— Արտադրության համար մասնագետ-ղեկավարներ (ինժեներներ, տեխնիկներ) պատրաստելու գլխավոր տեղը բռնում են բարձրագույն կրթական հիմնարկությունները (ВУЗ) և մասնավորապես տեխնիկական բարձրագույն կրթական հիմնարկություններն (ВТУЗ) ու տեխնիկումները։ Նոր մասնագետների պատրաստման խնդիրը լրիվին իրագործելու համար բարձրագույն տեխնիկական կրթական հիմնարկությունների ուսման ծրագիրը պետք է համաձայնեցվի համապատասխան արդյունաբերության պահանջներին։

Կարևորագույն հարցերից մեկը, վորը յենթակա յե նման համաձայնեցման, հանդիսանում է կրթական այդ հիմնարկությունների բաց թողած ինժեներների և տեխնիկների քանակը։ Արդյունաբերության համար գծված է զարգացման հնգամյա պլան, վորն ընդգրկում է բոլոր նոր կառուցվող ձեռնարկները։ Հաշվելով թե ինժեներների ու տեխնիկների վորպիսի քանակ է անհրաժեշտ յուրաքանչյուր ձեռնարկին, կարելի յե հետո հաշվել՝ թե ընդամենը վորքան մասնագետներ են անհրաժեշտ վողջ արդյունաբերության համար։ Պետք է նիշել, վոր արդեն ներկայումս զգում ենք արդյունաբերության մեջ այդ պակասը։ Մի կողմը թողնելով տեղական նշանակություն ունեցող ձեռնարկները, արդյունաբերության մեջ մենք ունենք 15.000 ինժեներ և 18.000 տեխնիկ, կամ բանվորական վողջ ուժի հարաբերությամբ՝ 0,62 % ինժեներներ և 0,76 % տեխնիկներ։ Մասնագետների այս քանակը զգալի կերպով ցածր է, քան Արևմտյան Յեվրոպայի և ամերիկական ձեռնարկներում, ըստ վորում պետք է ընդգծել և այն, վոր արդյունաբերության մեջ տեխնիկական պաշտոնների 39 %-ից ավելին բռնած են պրակտիկանտներ, այսինքն այնպիսի աշխատողներ, վորոնք համապատասխան կրթություն չեն ստացել։ Բարձրագույն տեխնիկական կրթական հիմնարկություններից մասնագետներ բաց թողնելու ծրագիրը պետք է կազմել այնպես, վոր լրացվի գոյություն ունեցող ձեռնարկներում յեղած պակասը և ապահովվեն նոր ձեռնարկները։ Բայց անհրաժեշտ քանակությամբ ինժեներներ և տեխնիկներ բաց թողնելը դեռ բավական չէ։

Հայտնի յե, վոր արդյունաբերության բոլոր ճյուղերը միահավասար չեն զարգանում։ Որինակ, յերկրի քիմիզացիայի համար, քիմիական արդյունաբերության յենթադրվող զգալի աճման դեպքում, մասնագետ-տեխնիկների պահանջն ավելի մեծ է լինելու։ Կարևորն այն է, վոր ԲՏԿՀ-երը բաց թողնեն այնքան քիմիկներ, վորքան անհրաժեշտ են քիմիական արդյունաբերության համար, այնքան էլեկտրիկներ, վորքան անհրաժեշտ են մեր էլեկտրոկայաններին, այնքան մետաղագործներ, վորքան անհրաժեշտ են մեր մետաղաարդյունաբերությանը։ Քիմիկները բաժանվում են մի շարք ավելի մանր մասնագետների, մետաղագործները — նույնպես, և այլն։ Պետք է հավասարակշռությունստեղծել ԲՏԿՀ-երն ավարտողների քանակի և արդյունաբերության պահանջների միջև՝ ըստ ամեն մի առանձին մասնագիտության. այլապես ստացվում է մասնագետների գերարտադրություն այն մասնագիտությունների համար, վորոնցով (մասնագետներով) արդյունաբերությունը ներկայումս բավական ապահովված է. և կամ արտադրության պակաս է լինում այն մասնագետների, վորոնց պահանջն զգացվում է սուր կերպով։

Յենթադրենք թե արդյունաբերությունը 5 տարվա ընթացքում պահանջում է 5.000 ինստրումենտալշչիկ և 2.000 տեպլոտեխնիկ, իսկ ԲՏԿՀ-երն այդ ժամանակամիջոցում ավարտում են՝ առաջիններից 4.000 և յերկրորդներից 3.000։ Մասնագետների ընդհանուր քանակը արդյունաբերության պահանջին համապատասխանում է, բայց ըստ մասնագիտությունների՝ մետաղաարդյունաբերությանը վիճակվում է մասնագետների պակաս, իսկ տեպլոտեխնիկների ավելորդ մասին վիճակվում է գործազրկություն և կամ աշխատանք՝ վոչ ըստ մասնագիտության։

Մեր կրթական հիմնարկների ամենախոշոր թերություններից մեկն էլ — ավարտող մասնագետների թիվը արդյունաբերության առանձին տեսակների առաջադրած պահանջների, նրանց զարգացման պլանների հետ չհամաձայնեցնելն է։

Սրա հետ զուգընթաց պետք է նշել այն բացարձակ անհամապատասխանությունը, վոր գոյություն ունի մեր արդյունաբերության մեջ ինժեներների քանակի և տեխնիկների քանակի միջև։ Տեխնիկների պակասն զգալի յե ամենից շատ։

Մյուս պակասությունը այն է, վոր ուսուցումը չի համապատասխանում արդյունաբերության մեջ գոյություն ունեցող տեխնիկական մակարդակին, մասնավորապես արդյունաբերության ռեկոնստրուկցիայի խնդիրներին։ Արդյունաբերության տեխնիկան ներկայումս բարելավվում է և առաջադիմում։ Մինչդեռ նոր մասնագետները պատրաստվում են շատ հաճախ այնպես, վոր նրանց ուսումն համապատասխանում է 10—15 տարի առաջ գոյություն ունեցող տեխնիկային։ Ուսուցման ժամանակամիջոցն էլ ներկայումս 6—7 տարի է։ Այդ ժամանակամիջոցում տեխնիկայի մեջ կարող են լինել և չեն կարող տեղի չունենալ փոփոխություններ, վորոնք նոր մասնագետից մի շարք նոր գիտելիքներ են պահանջում։ Այդ պատճառով էլ ուսուցումը պետք է հնար յեղածին չափ ավելի մոտենա ընթացիկ գիտական-տեխնիկական կյանքին և կապվի գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումների հետ։

Վերջապես, միշտ չէ, վոր ուսման վորակը մեզ մոտ բավարար չափով բարձր է։ Դրա ամենալուրջ խոչընդոտներից մեկն է յեղել ուսանողության վոչ բավարար ապահոված վիճակը։ ԽՍՀՄ-յան մեջ ուսանողների խոշորագույն մասը դուրս է յեկել բանվորա-գյուղացիական միջավայրից և պետական թոշակառուներ են հանդիսանում, պետությունից յուրաքանչյուր ամիս ստանում են դրամական օգնություն։ Առաջ, մինչև հեղափոխությունը, համալսարաններում նման դրություն չեր տիրում, բայց այն ժամանակ ուսանողությունը, մեծ մասամբ բուրժուազիայի շարքերից դուրս յեկած լինելով, նման օգնության կարիքը չեր զգում։ Ներկայումս բարձրագույն կրթական հիմնարկները բանվորականացնելու գործը կախված է նրանից, թե վոր չափով է պետությունը ապահովում ուսանողներին։ Բանվորը թոշակ ստանալով միայն կարող է սովորել. ընտանիքը չի կարող ապահովել նրան այնպես, ինչպես ապահովում եր ուսանողին բուրժուական ընտանիքը։ Այդ պատճառով էլ պետությունը ձգտում է աստիճանաբար բարձրացնել թոշակների քանակը և հասցնել այնպիսի մակարդակի, վորն ավելի ևս մեծ չափով կապահովեր պրոլետարական ուսանողությանը։ Ուսման բեղունությունը խանգարող նյութական դժվարությունների թվում են նաև — եժանագին դասագրքերի պակասը, լաբորատորիաների քանակի քչու-

թյունը և վատ կահավորումը, յեկվոր ուսանողների համար հանրակացարանների պակասը խոշոր քաղաքներում։

Բացի համալսարանի պատերի ներսում անմիջականորեն ավանդվող ուսումից, մասնագետի կոչում ստանալու, լավ աշխատելու համար ուսանողները պետք է անցնեն արտադրական պրակտիկան՝ ձեռնարկության մեջ։ Նման պրակտիկայի պակասը և կամ այդ բանի վատ կազմակերպված լինելը նոր մասնագետին յերկար ժամանակ անփորձ է թողնում։ Իսկ մեզ մոտ արտադրական պրակտիկայի կազմակերպման տեսակետից գործը լավ հիմքերի վրա չի դրված։ Մեզ մոտ վո՛չ բոլոր ուսանողներն են պրակտիկա ձեռք բերում։ Ձեռնարկների մեջ շատ հաճախ պրակտիկ ուսանողները վոչ մի ղեկավարություն չեն ստանում, և կամ աշխատում են վոչ իրենց մասնագիտության բնագավառում։ Պրակտիկանտների բաշխումը անկանոն է։ Մի շարք ձեռնարկներ ծանրաբեռնված են պրակտիկանտներով, իսկ մյուսներում յեղած հնարավորությունները չեն օգտագործվում։

Կուսակցության Կենտկոմի հուլիսյան (1928 թ.) պլենումը, վորն հատկապես քննության առավ ԲՏԿՀ-երի աշխատանքների հարցը, իր բանաձևերում մի շարք միջոցներ է առաջադրել՝ ԲՏԿՀ-երը տրանսպորտին և արդյունաբերությանն ավելի մոտեցնելու ուղղությամբ։ Կուսակցությունը վորոշեց մի շարք ԲՏԿՀ-եր տալ Ճանապարհների և Հաղորդակցության Ժողկոմատի ու Ժողտնտխորհրդի անմիջական վարչական հսկողությանը, այն հաշվով, վորպեսզի այս միջոցով ավելի հաջողվի կրթական այդ հիմնարկները մոտեցնելու ժողտնտեսության այն բնագավառներին, վորոնց համար նրանք մասնագետներ են պատրաստում։ ԲՏԿՀ-երի կազմը բանվորականացնելու համար ընդունված է վորոշում՝ առաջիկա ընդունելության ժամանակ բարձրացնել ԲՏԿՀ-երում ընդունվող բանվորների քանակը, հասցնելով բոլոր ընդունվողների 65 տոկոսին։

ՀամԼԿՅԵՄ ութերորդ համագումարը նոր կադրերի պատրաստման մասին հանած իր վորոշումների մեջ ասում է — «կտրուկ կերպով շարունակել ԲՏԿՀ-երի բանվորականացման գիծը, այդ ուղղությամբ ավելի մեծ հաջողությունների հասնելու համար։ Ըստ վորում պետք է ապահովել բանվորների և կոմունիստների՝ բարձրագույն դպրոցներն ավարտելու գործը և նրանց ակադե-

միական հառաջադիմությունը, որը ոչ միայն յետ չպետք է մնա, այլ առաջ անցնի ոչ-պրոլետարական միջավայրից դուրս յեկած ուսանողության հառաջադիմությունից: Որպես կանոն, պետք է սահմանել, որ ԲԿՀ մտնող կոմունիստն ու կոմյերիտականը այդ համարեն իրենց կուսակցական պարտականությունը և անպայման բարձրագույն դպրոցն ավարտեն նորմալ ժամանակամիջոցում: Որպեսզի նրանք այս հիմնական խնդիրը կիրառել կարողանան, անհրաժեշտ է ոչ թե խոսքով, այլ գործնականում ճիշտ լուծել նրանց հասարակական նագրուզկայի հարցը, ինչպես և բարելավել նրանց նյութական վիճակը»:

Որակյալ բանվորների պատրաստումը. — Բայց ինժեներների և տեխնիկների պատրաստման գործով արդյունաբերության բոլոր պահանջները չեն բավարարվում. Նրան անհրաժեշտ են նաև **որակյալ բանվորներ**: Հինգ տարվա ընթացքում, — արդյունաբերության այն ծավալման համապատասխան, որպիսին նախատեսնվում է, — պահանջվում է 487 հազար որակյալ բանվոր: Սրանցից 262 հազարը յերկարատև պատրաստումն են պահանջելու:

Մենք մի շարք աղբյուրներ ունենք, որտեղից արդյունաբերությունը ստանում է իր որակյալ ուժը: Առաջին տեղը բռնում են ֆաբգործուսները: Հետո գալիս են հասակավոր բանվորների համար բացված դասընթացները, որտեղ բանվորները կատարելագործվում են. աշխատանքի կենտրոնական ինստիտուտի բազաներին կից դպրոցները, պրոֆտեխնիկական դպրոցները և այլն:

Սոցիալիստական շինարարության պահանջներին համապատասխանող բանվորի տիպը հանդիսանում է ֆաբգործուսն ավարտողը: Զուտ արտադրական ուսումը հասարակական քաղաքական և ընդհանուր կրթության հետ շաղկապելու շնորհիվ — ֆաբգործուսի ուսանողը միայն մեքենայի հետ ճիշտ վարվելու կերպը չէ, մի շարք տեխնիկական գիտելիքները չէ, որ սովորում է: Դպրոցից նա դուրս է գալիս արտադրության վողջ պրոցեսների, արդյունաբերության խնդիրների և սոցիալիստական շինարարության պայմաններում բանվորի պարտականությունների մասին պարզ հասկացողությամբ: Ուսուցման նման ձևի դեմ տնտեսավարները բազմաթիվ առարկություններ են անում, որովհետև նա զգալի կերպով ավելացնում է

ուսուցման ժամանակամիջոցը: Բանվորին ծանոթացնել այն դազգահի տեխնիկայի հետ, որի վրա նա աշխատում է, — այդպիսի նպատակ հետապնդող վերապատրաստումն զգալի կերպով կրճատում է ուսուցման ժամանակամիջոցը: Բայց որակյալ բանվորներ պատրաստելու նման գիծը կհանգեցներ այնպիսի բանվորներ ստեղծելուն, որոնք անընդունակ կլինեյին ակտիվ մասնակցել մեր վողջ տեխնիկական բազայի վերակառուցման գործին, չեյին կարող հաջող կերպով մասնակցել ընտրության գործում, ռացիոնալացման աշխատանքներում: Սոցիալիստական կառուցողները չեն կարող մասնագետներ լինել նեղ իմաստով, միայն տվյալ դազգահի համար:

Արտադրությանը անընդհատ որակյալ ուժեր տալու հարցի հետ անմիջականորեն կապված է այսպես կոչված **անչափահասների բրոնյան**: Խորհրդային օրենքներով բանվորների ընդհանուր թվին սահմանված է անչափահասների որոշ տոկոս, որը այս կամ այն արտադրության մեջ պետք է լինի: Այդ տոկոսը սահմանվում է այն հաշվով, որպեսզի արտադրությունների մեջ անընդհատ սովորեն նոր բանվորներ, որոնք ընդունակ լինեին լրացնելու որակյալ բանվորական ուժի բնական նվազումը, և որակյալ բանվորների նոր պահանջը:

Անչափահասների բրոնյան չի կարող որակյալ բանվորական ուժի միակ և բացառիկ պահեստը լինել: Մեզ մոտ շարունակ գյուղից դեպի քաղաք են հոսում նորանոր բանվորներ: Հասակավոր բանվորների մեջ էլ դեռևս գործազրկությունը չի վերացել: Այստեղից ևս պետք է մասամբ վերցվեն կադրեր՝ արդյունաբերության համար: Սակայն յերիտասարդությունը նոր, որակյալ բանվորական ուժի համար հանդիսանում է հիմնական և գլխավոր աղբյուրը: Այդ պատճառով էլ խորհ. իշխանությունը, պրոֆմիություններն ու կոմսոմոլը պետք է անչափահասների աշխատանքի վրա ամենալուրջ ուշադրություն դարձնեն այն հաշվով, որպեսզի մենք յերիտասարդությունից ստանանք սոցիալիստական շինարարությանը մասնակցող իրոք պետքական կադրեր:

Կոմսոմոլը հանդիսանում է մի կազմակերպություն, որը բանվորական ուժի և մասնագետների պատրաստման գործում խոշոր աշխատանք է տանում՝ օգնելով կուսակցությանը: ԲԿՀ-երում տե-

սականի և գործնականի մեջ յեղած խզվածության դեմ կռվելով, ֆաբգործուսի ուսուցման ժամանակամիջոցի կրճատման դեմ պայքարելով (վորպեսզի միմիայն տեխնիկական գիտելիքներ ձեռք չբերեն), դուրս գալով անչափահասների թվի կրճատման դեմ այնտեղ, ուր այդ բանն անդրադառնում ե ապագայում արդյունաբերությունը վորակյալ բանվորական կադրերով լրացնելու գործի վրա, կոմսոմոլը միայն յերիտասարդության շահերը չե վոր պաշտպանում ե։ Բանվոր դասակարգն, ամբողջովին վերցրած, այդ շահերի մասին չի մոռանում։ Առանց բանվոր յերիտասարդության շահերի պաշտպանման չի կարելի քիչ թե շատ վորակյալ, պատրաստված և աշխատանքի ընդունակ փոխարինողներ պատրաստել։ Բայց կոմսոմոլը յերիտասարդության առանձին խմբի շահերն անկյունաքար չի դարձնում։ Առանձին դեպքերում նա համաձայնվում ե ուսուցման ժամանակամիջոցի վորոշ կրճատմանը (չնայած վոր դա յերիտասարդության առանձին շերտերի համար կարող ե ձեռնտու չլինել), յեթե արդյունաբերությունը չի կարող կառավարվել առանց այդպիսի կրճատման։ Կոմսոմոլը համաձայնվում ե և բրոնիայի կրճատմանը, բայց այնտեղ, ուր արդյունաբերությունը տվյալ մոմենտին չի կարող պահպանել գոյություն ունեցող նորմաները, ուր բրոնիան շատ ծանր ե նստում արդյունաբերության համար։ Սակայն կոմսոմոլը չի կարող մոռանալ, վոր անչափահասների վրա ներկայումս ծախսվող գումարները պետք ե արդարացվեն հետագայում, և վոր նեղ տնտեսավարական մոտեցումը, վորը միայն այսորվա մուտքն ու յելքն ե հաշվի առնում, մի քանի տարիներից հետո կարող ե արդյունաբերությունը առանց անհրաժեշտ վորակյալ ուժերի թողնել։ Այս պատճառով ել կոմսոմոլը դուրս ե գալիս նրանց դեմ, վորոնք աշխատում են ֆաբգործուսը փոխարինել տվյալ պրոֆեսիայի տեխնիկան ուսումնասիրող կարճատև դասընթացներով, կամ արտադրությունից դուրս քշել անչափահասների աշխատանքը վորպես ներկայումս քիչ ոգուտ տվող աշխատանք։

Կոմյերիտմիության դաստիարակչական վողջ աշխատանքը տարվում ե՝ յերիտասարդությունից սոցիալիզմ կառուցողների նոր կադրեր պատրաստելու ուղղությամբ, այնպիսի աշխատողներ, վորոնք նվիրված լինեն համաշխարհային պրոլետարական հեղափոխության և սոցիալիստական շինարարության գործին։ Նման

խնդիր դնելով իր առաջ, կոմսոմոլը պետք ե պայքար մղի՝ ստեղծելու համար հասարակական ջիղ ունեցող կարմիր մասնագետներ, վորոնք անչափ անհրաժեշտ են սոցիալիզմ կառուցող պրոլետարիատին. Նա պետք ե պայքարի՝ պատրաստելու բանվորների վորակյալ փոխարինողներ սոցիալիստական արդյունաբերության համար, վորի մեջ բանվորը հանդիսանում ե արդեն վոչ թե մեքենայի հարուկ, ինչպես կապիտալիզմի յերկրում ե, այլ նոր աշխարհի կառուցման համար աշխատող կոլլեկտիվի գիտակից անդամ։

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Սույն դասագրքի I-ին պրակի մեջ պետք ե ուղղել հետեվյալ սխալները յեվ վրիպակները.

		Տպագրված ե	Պետք ե լինի
Եջ 17,	տող 1, ներքևից	ֆոնդի	ֆրոնտի
» 19,	» 3, վերևից	տեղերից	ճյուղերից
» 19,	» 5, ներք։	գոյությամբ	գոյություն
» 20,	» 15, վերևից	մղկտում	տրտնջում
» 23,	» 4, ներք.	1919	1918
» 27,	» 12, վեր.	բառաբար	բացառաբար
» 31,	» 21, ներք.	պատերազմի	կապիտալը
» 38,	» 1, վերև.	ապների	ապրանքների
» 43,	» 13, ներք.	բանվորին	բանվորի
» 43,	» 13, »	չվճարած	չվճարված
» 53,	» 7, »	հեղափոխության	պրոլետարական հեղափոխության
» 63,	» 8, »	հողի	յերկրագնդի
» 68,	» 12, վերև.	արդյունքները	շահավետությունը
» 73,	» 18, ներք.	հանդեպ	ընդդեմ
» 74,	» 15, »	դեպքերում	տեղերում
» 75,	» 11, վերև.	համար բռնության	բռնության
» 87,	» 3, ներք.	հանգամանքներում	մեջ
» 96,	» 1, »	ձգտումներ	ձգձգումներ
» 98,	» 10, »	ԲԳՎԺԿ	ԲԳՏԺԿ
» 98,	» 4, »	ԲԳՎ	ԲԳՏ
» 99,	» 1, վերև.	մասնակցության	մասնակցություն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԴԻԱԳՐԱՄՆԵՐ, ՎՈՐ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ԴԱՍԱԳՐՔԻ I ՊՐԱԿԻՆ.



Կապիտալիստները ի՞նչ չափով կրճատեցին աշխատավարձը արդյունաբերության կրիզիսի ժամանակ։

(Տես՝ պրակ I, գլուխ III)։

ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Տարածությունը՝ միլլիոն քառ. կիլոմետրով.



(Տես՝ պրակ I, գլուխ III)

ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԸ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԿԱԶՄԸ (Համայնքների պալատ 1920 թ.)



(Տես՝ պրակ I, գլուխ IV)

ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌԽՍՖՀ-ՅԱՆ ՄԵՋ



(*Տես՝ պրակ I, գլուխ IV*)

I-ին պրակի III գլուխը (վերջից) լրացվում է այս հատվածով. —

Ֆրանսիական բուրժուազիան մեծ անբավականությամբ է նայում Գերմանիայի ուժեղացմանը։ Նա խիստ չերկյուղ է կրում, վոր զորացող գերմանական իմպերիալիստները կկամենան վրեժ առնել նրա համար, վոր իրենք պարտվեցին պատերազմում։ Բայցի դրանից, նրան, ինչպես և անգլիական բուրժուազիային, հաճելի չե վոր նորեն յերևան է գալիս այն մրցակիցը, վորին արդեն համարում եյին վերջնականապես ջարդված ու վոչնչացված։

Պատերազմի հետևանքով — ուժեղացավ Իտալիան. Պատերազմից հետո կազմվեցին մի քանի նոր պետություններ, այն ե՝ Լեհաստան, Չեխո-Սլովակիա, մերձբալտյան յերկիրներ։ Մյուս պետություններն էլ խիստ լայնացան — Ռումինիան, Հարավ-Սլավիան։ Այդ յերկրների միջև ծավալվում է մրցակցությունն ու թշնամությունը, վոր հղի յե նորանոր ընդհարումներով։

Ճնշված յերկրներում, վորոնք արթնացած են պատերազմի դղրդյունով՝ և ռուսական հեղափոխությամբ, խորանում է ազատագրական շարժումը։ Վոտքի է կանգնում չորս հարյուր հազար միլիոն բնակչություն ունեցող Չինաստանը։ Չնայած գահիճ-գեներալների դավաճանության, չինական հեղափոխությունը ապրում է։ Անխուսափելի յեն հեղափոխական պատերազմի նորանոր փոթորիկներ։ Չինական հեղափոխությունը ազդանշան է մյուս գաղութային յերկրների համար — Հնդկաչինի, Հնդկաստանի, Յեգիպտոսի և այլն։

Այդպես են այն ներհակությունները, վոր տանջում են ժամանակակից կապիտալիստական աշխարհը։ Չնայած ստաբիլիզացիային, կապիտալիզմը անկարող է լուծել այդ խոր ներհակությունները։ Համեմատաբար շատ մոտիկ ապագայում տեղի յեն ունենալու նորանոր բախումներ։ Յեվ համաշխարային կապիտալիզմի համար հսկայական նախազգուշացումն է հանդիսանում պրոլետարական հեղափոխության հաղթանակը և սոցիալիզմի հաջող շինարարությունը մեր Միության մեջ։

«Եկոնոմիական և քաղաքական զարգացման անհամաչափությունը — կապիտալիզմի անպայման որենքն է։ Սրանից հետևում է, վոր սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է սկզբում մի քանի կամ նույն իսկ մեկ՝ առանձին վերցրած կապիտալիստական յերկրում», — գրել է Լենինը դեռ պատերազմի ժամանակ։

Խորհրդային միության գոյությունն ու ամրապնդումը ուժեղացնում է հեղափոխական շարժումը ամբողջ աշխարհում։ Յեվ հենց դրա համար էլ մեր Խորհրդային Միությունը իմպերիալիզմի աչքի փուշն է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

II ՊՐԱԿ

էջ

1. Կուսակցության տնտեսական քաղաքականության հիմքերը 3
2. Կուսակցության անելիքները արդյունաբերության բնագավառում 32
3. Կուսակցության անելիքները գյուղական տնտեսության բնագավառում 58
4. Կուլտուրական հեղափոխություն 84
5. Սոցիալիզմի շինարարների նոր կադրերի պատրաստումը 114

I ՊՐԱԿ*

1. ԽՍՀՄ յեվ կապիտալիստական աշխարհը:
2. Կապիտալիստական հասարակակարգը:
3. Իմպերիալիզմը կապիտալիստական հասարակակարգի վերջին աստիճանն է:
4. Պրոլետարական հեղափոխությունը յեվ պրոլետարիատի դիկտատուրան:
5. Կոմունիզմը—պրոլետարիատի վերջնական նպատակն է:

III ՊՐԱԿ*

1. Համ. Կոմկուսը (բ) բանվոր դասակարգի առաջավոր ջոկատն է:
2. Համ. Կոմկուսի (բ) կանոնադրության հիմունքները:
3. Համ. Լենինյան Կոմյերիտմիությունը:
4. Համաշխարհային հեղափոխության ուղիները:
5. Համաշխարհային հեղափոխության ուղիները (շարունակություն):

---

* *I պրակն ևս լույս է տեսել. III պրակը մամուլի տակ է և լույս կտեսնի փետրվարի 10-ին:*

Публичная Библиотека

ՀՀ Ազգային գրադարան
NL0188460

50 կ.

4188

УЧЕБНИК

для городских комсомольских политшкол

вып. II

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10